# ԷՋՄԻԱԾԻՆ



ՌՆԵ

ԺԳ. ՏԱՐԻ

Հունիս

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

VI

1956

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1956—1957 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը միջնակարգ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերություններից և հիվանդություններից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից և հայ ժողովրդի պատմությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Խնդրագիր դիմում այն մասին, որ իրենք ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար:

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ Ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Նորին Սուրբ Օծության Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի կոնդակը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիսնամյա հոբելյանի առթիվ . . . 3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի . . . 5
Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության առնչությամբ փոխանակված հեռագրեր . . . 8
Պատմութիւն վարուց և մահուան առն երանելւոյ Սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, ի Կորիւն վարդապետէ, յաշակերտէ նորին . . . 10
ՄԵՍՐՈՊ ԱՐԵՂԱ ԱՆԹԱՐՅԱՆ— Սյունիքի մեծ Սուրբը . . . 12
ՄԱՇՏՈՑ ԱՐԵՂԱ ՔԱՋԻՐՅԱՆ— Նահատակ կույսեր . . . 15
ՀԱՅԻԿ ԱՐԵՂԱ ԱՂԵՏՐՅԱՆ— Սուրբ Էջմիածին . . . 17
Նորին Սուրբ Օծության Վեհափառ Հայրապետի մոտ ճարտարապետների խորհրդակցություն . . . 20
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ . . . 22
Հանգիստ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի . . . 24
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻՑ . . . 26
Սովետական Միության Ուղղափառական եկեղեցիների պատգամավորությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում . . . 27
ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ— Համառոտ ակնարկ հին Հայաստանի պատմության . . . 31
Գ. ԼԵՎՈՆՅԱՆ— Գուսանները հին Հայաստանում . . . 37
ՎԱՀԱՆ ԱՐԵՂԱ ԳԱԼԱՄՔԱՐՅԱՆ— Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Գևորգյան Ճեմարանի ուսուցչապետության շրջանում . . . 42
Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ— Հարկ կրոնական պայքար՝ Տիմոթեոս Կուզը և Հայ Եկեղեցին . . . 53
Հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը Մոսկվայում . . . 58
Վ. Վ.— Մ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թ. թ.» . . . 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1956 թ.

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

**ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ**

Ողջո՜յն հայրապետական Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիսնամյա-կյանքին ու գործունեության:

Երանելի օր մը արևոտ, առատաբաշխ Նեղոսի ափերուն, աստվածասեր հայ մը՝ Պողոս Նուպար, իրեն նման բարեպաշտ ու բարեմիտ իր ազգայիններու հետ համախորհուրդ, ծնունդ տվավ կազմակերպության մը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, որ խորհրդանիշը և արտահայտիչը հանդիսացավ հայ ժողովրդի Քրիստոնեական գութի սուրբ զգացումին և անոր իրավ առաքինություններուն: Այդ Երանելի օրը Ս. Զատկի օր մըն էր՝ 15 ապրիլ 1906: Մեր Տիրոջ և Փրկչի հրաշափառ Հարության հավիտենական հիշատակը կարելի չէր ավելի պայծառորեն փառավորել քան այդ կատարվեցավ ափ մը հայազնյայց սրտի պարգևով:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մեջ ներդաշնակորեն զուգակցվեցան՝ հայուն մտածումի ազնվությունը, զգացումի գեղեցկությունը և կամքի շինարար ճիգերը: Ան տարվե տարի աճեցավ, ծավալեցավ ու զորացավ և ամբողջ մեր Ազգը ընդգրկեց, ազգով ազգին ծառայելու համար:

Եվ հիսուն տարիներ շարունակ այս օրհնեալ կազմակերպութիւնը՝ Նեղոսի ափերէն մինչեւ Վոսփորի ափերը, Ատլանտեանի ափերէն մինչեւ Արաքսի ափերը եւ մինչեւ Ամերիկայի մեր այսօրուայ հայաշատ կեդրոնները, իր կենսատու ձեռքը երկարեց, ամենուն բաշխելով ե՛ւ հաց, ե՛ւ լոյս, ե՛ւ յոյս, իրեն գերագոյն նպատակ ունենալով պահպանութիւնը եւ կեանքի ապահովութիւնն ու բարօրութիւնը հայ ժողովրդի զանգուածներուն՝ Մայր Երկրէն ներս թէ Մայր Երկրէն դուրս:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անցնող հիսուն տարիներու գործն ու վաստակը բարոյական մեծ հարստութիւն մը կհանդիսանայ, փառքի սիւնակ մը եւս աւելցնելով հայ ժողովրդի անունին, զի ան եղաւ եւ կմնա ապահով հովանի մը, փրկարար ձեռք մը եւ հաստ ամրոց մը համայն հայ ժողովրդի համար:

Ողջունելով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան յոբելեանը, կօրհնենք սուրբ հիշատակը անոր երանելի հիմնադիրներուն, բոլոր ղեկավարներուն եւ բարերարներուն, որոնք կհանգչին սրբոց արդարներուն կողքին եւ իրենց հաւատքով ու երկրային բարի գործերով արժանի դարձած են զԱստուած տեսնելու:

Կմաղթենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան երկար, անվախճան կյանք եւ բեղմնաւոր գործունէութիւն, ամենաջերմ ցանկութեամբ, որ իր ուշադրութիւնը դարձնէ առաւել եւս հաստատելով Սփիւռքի հայապահպանման եւ նոր սերունդներու հայեցի դաստիարակութեան կենսական գործին: Կեդրոնական վարչութեան Նախագահ Տիար Ալեքս Մանուկյանին եւ իրեն աշխատակից բարի գործի ընկերներուն, մասնաճիւղերու վարչութեանց անդամներուն եւ պաշտօնեաներուն, տիկնանց, օժանդակ եւ երիտասարդաց կազմակերպութիւններուն, բոլոր ազգասէր բարերարներուն եւ Միութեան անդամներուն՝ ի սրտէ կմաղթենք Քաջառողջ երկար կյանք, լի երջանիկ ու խաղաղ օրերով եւ առաւելեալ ուժ եւ եռանդ՝ առատօրէն պտղաբեր դարձնելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործունէութիւնը հօգուտ Եկեղեցիին, Ազգին եւ վերընձիւղած Մայր Հայրենիքին:

Երանի՜ Ձեզ բոլորիդ, որ «սուրբ էք սրտիւ» Աստուծոյ առջեւ եւ պարծանքը մեր Ազգին:

«Ողջ լերուք, զօրացեալ Ս. Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ: Ամէն»:

Վազգէն Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ն մայիսի
1956 Փրկչական ամի,
և ի թուականիս Հայոց ՌՆԵ,
ի Ս. Էջմիածին:

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Մեր ազգային-եկեղեցական տոների շարքին Հոգեգալստյան երկրորդ կիրակին մեծահանդես շքով և ավանդական հանդիսությամբ մեր բոլոր եկեղեցիներում տոնվում է հայ ժողովրդի Սրբություն Սրբոց, մեր ազգային-եկեղեցական նվիրական կենտրոն, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծագման և հաստատության օրրան Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրման տարեդարձը:

Այդ շաբաթվա առաջին օրերին ցնծագին հանդիսությամբ տոնվում է նաև Ս. Հռիփսիմյանց և Գայիանյանց՝ Քրիստոսի սիրուն նվիրված իմաստուն կույսերի՝ նահատակության հիշատակը, որոնք քաջությամբ կռվեցին «դիւապաշտ մոլորութեանց» դեմ՝ հանուն Քրիստոնեական կրոնի ճշմարտությունների և նահատակվելով դարձան «զոհք փրկութեան և փրկանք աշխարհին» հայոց:

Կույսերի նահատակությունը խորապես հուզում է հայոց սեգ արքային:

Ազատվելով Խոր Վիրապից Լուսավորիչը ձեռնարկում է առաքելական-հովվական գործունեության, քարոզում, բացատրում է նրանց աստվածային ստեղծագործության, նախախնամության, փրկագործության խորհուրդները, հոգեպես մխիթարում նրանց հավատի մեջ զորացնելու համար, որովհետև հեթանոս նախնիների մեջ խորապես արմատավորվել էր այն համոզումը, թե կուռքերի զորությամբ է, որ «կեայ և զկենդանութիւն կրէ երկիրն Հայոց»: Ահա այդ օրը մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ նըշվում է որպես Էջմիածնի օր, Միածնի իջման օր ի Հայաստան աշխարհ, երբ հիմնադրվեց Ս. Էջմիածնի փառաշուք Տաճարը:

Պատմական այս հավետ անմոռանալի իրադարձությունները կապված են մեր պատմության երկու խոշորագույն դեմքերի՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ Պարթև Հայրապետի և Արշակունի Տրդատ թագավորի անունների հետ:

Հայաստանի քաղաքական դրությունը ավելի է կայունանում Տրդատ Գ-ի օրով 297—330 թվականներին: 297 թվականին Տրդատը հայ-հռոմեական միացյալ ուժերով վճռական ճակատամարտում ջախջախում է պարսիկներին և տիրանում հայկական գահին: Քառասնամյա հաշտության պայմաններում ոչ միայն ապահովվում է մեր երկրի քաղաքական անկախությունը, այլև պայմաններ են ստեղծվում երկրի տնտեսական, մշակութային զարգացման համար: Տրդատի օրոք քարոզչական լայն գործունեություն է ծավալում Ս. Գրիգոր Լուսավորիչը, որի օրով տեղի է ունենում Հայաստանի ամբողջական դարձը քրիստոնեության և Տաճարների հիմնադրումը:

Մեր Հայրենի հողը պատմական և սուրբ հուշարձանների, նվիրական խաչքարերի և սրբությունների մի պաշտելի աշխարհ է, որտեղ յուրաքանչյուր կտոր քարի, ժայռի վրա հավերժացել է հայ տաղանդաշատ ժողովրդի մտքի, հոգու, սրտի, ձեռքի մեռոնաբույր գեղեցկությունն ու քաղցրությունը: Ու Ս. Էջմիածնի Մայր Տաճարը պատմական այդ հոյակապ կոթողներից, նյութական գոհարներից մեկն է:

ժողովուրդների կյանքում սրբություններ կան. նվիրական վայրեր, որոնք սերտորեն կապված են տվյալ ժողովրդի պատմության հետ, նրա կյանքի, կրոնական զգացմունքների, նրա ոգու և հոգու հետ: Այդ սրբությունները միաժամանակ հանդիսանում են բարոյական, հոգևոր միասնության և միաբանության խորհրդանիշներ տվյալ ժողովրդի բոլոր հատվածների համար: Այդպիսի սրբություն է եղել հայ ժողովրդի համար Ս. Էջմիածինը:

Տասնյոթ դարերի հնություն ունեցող Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որպես պատմական հոյակապ կոթող, որպես Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցու հնագույն և առաջին հուշարձաններից մեկը համայն աշխարհում, իր պատկառելի հնությամբ, ճարտարապետական կառուցվածքի բազմազանությամբ և առանձնահատկություններով, հայ կյանքում կատարած իր ազգային-եկեղեցական-մշակութային դերով հանդիսանում է հայ հավատացյալ ժողովրդի ամենանվիրական սրբավայրերից հնագույնն ու համազգայինը: Ս. Էջմիածնի անունն ու խորհուրդը նվիրական ու թանկ են եղել ամեն մի հավատացյալ հայ ոգու համար: Գանգեսի ափին թե Նեղոսի հովտում, Միսիսիպի թե Ճարավի ափերում ապրող ամեն մի հայ, ազգային հայրենասիրության ամենաանկեղծ ու վառ զգացմունքներով, իր հոգու բովանդակ ջերմությամբ է կապվել Ս. Էջմիածնի հետ: Ամեն մի հայի հոգու սրտառուչ իղձն է եղել գեթ մի անգամ ապրել այդ պատմական Տաճարի նվիրական կամարների տակ և այնտեղ աչերը փակել՝ իր ուխտը կատարած բարեպաշտ ուխտավորի ջերմեռանդությամբ:

Եվ դա պատահականություն չի եղել երբեք: Ս. Էջմիածինը հանդիսացել է հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կենտրոնը, ազգային-եկեղեցական միասնության, կրոնական գիտակցության, ազգային արժանապատվության և զգացմանց կենտրոնը, խորհրդանշանը, հայ հոգու ամրոցը, մեր բազմադարյան և մեծարժեք մշակույթի, հոգեկան անկրկնելի արժեքների օջախներից հնագույնն ու ամենամեծը: Ս. Էջմիածինը անցյալի մեր բազմադարյան ու արյունոտ օրերին եղել է մի հզոր շանթարգել, որ միշտ մեկուսացրել է հայ ժողովրդի գլխի վրա թափված շանթերն ու ճակատագրի հարվածները և իր մայրական թևերի տակ առել ու պաշտպանել է հայ ժողովրդին, «որպէս հաւ զձագս իւր», և սարսափի ու տրտմության այդ անարև օրերին հնչել են միշտ Մայր Տաճարի սրբազան զանգերը, վերստին կյանքի և աշխատանքի կոչելով հայության սրակոտոր բեկորներին.

ժնկալ, որպեսզի յոք, ձեր մոտն այցելությամբ:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը մարմնացումն է Ս. Լուսավորչի լուսեղեն տեսիլքի:

Մեր եկեղեցական գրական մատենագրության մեջ պահվել և մեզ է հասել սերունդների ոգու և հավատքի միջոցով այդ հրաշ-տեսիլքի պատմությունը, որին հավատացել է հայ ժողովուրդը դարե՛ր և դարե՛ր, և ամփոփելով այն սերունդների պաշտամունքին և գուրգուրանքին, հասցրել է մինչև մեր օրերը: Լուսավորչի այդ տեսիլքը, նրա հովվական առաքելական գործունեության սկզբնավորությամբ, եզակի ու պատմական նշանակություն է ունեցել մեր ազգային-եկեղեցական կյանքում և անշափելի արժեք՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կազմակերպման և ամրապնդման գործում:

Գեղեցիկ է այդ տեսիլքը իր պարզության և իր իմաստի ու մեկնաբանության մեջ:

Եվ ահա Լուսավորչի տեսիլքով, Արարատյան դաշտում, հայ հողի վրա, հայ ժողովրդի սուրբ ծոցում, Քար առ Քար, կամար առ կամար բարձրանում է Քրիստոնեության առաջին և հնագույն կոթողներից մեկը և հայ հավատացյալ ժողովրդի հոգու, ոգու, մտքի, նրա հավատքի մնայուն, հավերժական խանձարուրը, ըստ վկայության մեր պատմիչների՝ 303 թվականներին: «Եվ ահա Որդին Աստուծո և Փրկիչն մեր, շատ դարեր առաջ, խոսեցավ մեր աշխարհին, մեր Լուսավորիչ Գրիգոր Պարթևի հրաշք-երազով: Պատգամն էր երկնային, խորհուրդ աստվածային, որ իջավ ի Հայաստան աշխարհ, հյուսելով հրաշալի երազը Ս. Լուսավորչի: Մենք զավակներս ենք այդ լուսե երազի»,— գրում է Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գևորգ Զ Ս. Հայրապետը, գեղեցկորեն խտացնելով Լուսավորչի տեսիլքի իմաստը և բարձրացնելով նրա նշանակությունը մեր ազգային-եկեղեցական կյանքում:

Ահա 4-րդ դարից է, որ Ս. Էջմիածինը Ս. Լուսավորչի Մաքրությամբ և գործունեությամբ եղել է «աղբիւր բացեալ գիտութեանն Աստուծոյ, [illegible] յԱյրարատեան գաւառին բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն):

Լուսավորչի լուսեղեն տեսիլքը հետագայում, մեր ժողովրդի կրոնական վառ զգացմունքների առաջ հավերժացել է ու դարձել Արագածի կատարին պլպլացող Լուսավորչի անմար կանթեղը, որ լույս առած մեր Լուսավորչից առաջնորդել է և լուսավորել հայ ժողովրդի ուղին դեպի հավերժություն, որովհետև Լուսավորիչը հանդիսացավ հայ ժողովրդի «լուսաւորութեան լուսաւոր վերակացուն» (Խորենացի):

Լույս Խորան Ս. Էջմիածինը խտացումն է հայի հոգու լուսաբաղձության, նրա հոգեկան սրտառուչ թռիչքի, հավատի, բարեպաշտության, «Մանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Արտաշատի Խոր Վիրապից ծագեց այդ փրկարար լույսը հայ հողի և սրտերի վրա, ինչպես Քրիստոսի Ս. Գերեզմանից կենարար լույսը՝ բովանդակ աշխարհի և մարդկության համար:

Լուսավորիչը մեծահրաշ երևույթ է մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ: Նա իշխում է մեր բովանդակ մատենագրության բոլոր դարերի վրա: Մեծ է նրա երախտիքը մեր ազգային-եկեղեցական կյանքում: Մեծարանքի և երախտագիտության ամենաջերմ զգացմունքով է կապված եղել հայ ժողովուրդը երախտաշատ սիրար Լուսավորչի և նրա Գահի հետ: «Այրն հրաշալի», որ իր պարթևական Արշակունի ծագումով, իր սքանչելի նահատակությամբ, կրած չարչարանքներով, իր քարոզությամբ, առաքելական գործունեությամբ, «լուսաւորութեամբ և հանոյական սիրով և աստուածպաշտութեամբ և հաւատոյ ծանօթութեամբ» փարատեց հայ հոգիներից կռապաշտության թանձր մշուշը և հայ երկրի վրա և հայ հոգիների համար բերեց քրիստոնեության արշալույսը, և այդ փրկարար լույսը պահեց, ամփոփեց Լույս Խորան հոյակապ Ս. Էջմիածնի եկեղեցական կամարների տակ: Այդպես է հավատացել ու այսօր էլ այդպես է հավատում հայ ժողովուրդը Լուսավորչի տեսիլքին:

Ահա այսօր անցյալի մշուշից, դարերի մաշումից, ժամանակների հողմահարումից վերանորոգված, իր անցյալի փառքի և գեղեցկության մեջ, մի անգամ ևս հավերժացել է Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որովհետև վերացել է սգի սև քողը Ս. Լուսավորչի Գահի վրայից և Նորընտիր Հայրապետի՝ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա առաքելաշավիղ և աստվածարյալ Կաթողիկոսի արժանավոր ընտրությամբ, փառավորվել և մխիթարվել է նորից Լույս Խորան Կաթողիկե Ս. Էջմիածինը համազգային տոնի երջանիկ առիթով: Երախտագետ ու հավատացյալ հայ ժողովուրդը, կրոնազգած երկյուղածությամբ և սրտառուչ ջերմեռանդությամբ, ծնրադրում է Լուսավորչահիմն Մայր Տաճարի լուսեղեն խորանների առաջ և սրտագին աղոթում, որ Լուսավորչի Աստվածը է՛լ ավելի ծաղկեցնի և պայծառացնի մեր Նորընտիր և շնորհալի Հայրապետի՝ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի քահանայապետական իշխանության գավազանը, որպեսզի միշտ վառ մնա քրիստոնեական կրոնի սուրբ լույսը, հայրենի սրբությունների սերը, հայրենասիրության ու եկեղեցասիրության զգացմունքը հայ հոգիներում, միշտ անշեջ ու պայծառ փողփողի Լուսավորչի հավատարձարծ կանթեղը՝ հայ երկնակամարի վրա:

«Թագաւո՛ր երկնաւոր, զեկեղեցի Քո Հայաստանեայց միշտ անշարժ պահեա»:

# ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

*Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետը արտասահման կատարած իր հովվապետական այցելությունից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալուց հետո, թեև չափազանց կլանված Մայր Աթոռի և ներքին թեմերի հետ կապված կազմակերպչական աշխատանքներով և վանական վերանորոգման ու շինարարական հարցերով, այնուամենայնիվ շարունակել մտահոգությամբ հետևել Անթիլիասի կաթողիկոսական ընտրության շուրջ ստեղծված կացության և դրանից բխող իրադարձությունների ընթացքին, ցավով հաստատելով, թե ներքին համերաշխությունն այնքան դանդաղում է և նույնիսկ խորանում բարդություններ սպառնում են խորացնել երկփեղկումն ու պառակտումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի ծոցում:*

*Նորին Ս. Օծությունը, մտահոգված Անթիլիասի մեջ ստեղծված կացությամբ և ընդառաջելով Զարեհ եպիսկոպոսի երկնակի խնդրանքներին, կատարված Եղիշե արքեպիսկոպոսի միջոցով, առաջինը Փարիզ 6 ապրիլ թվակիր նամակով և երկրորդը Էջմիածին 4 և 6 հունիս թվակիր հեռագրերով, և չերմագին փափագելով, որ համաձայնություն գոյանա կողմերի միջև և խաղաղություն վերահաստատվի Կիլիկյան Աթոռի մեջ և շինարար աշխատանքի մի շրջան սկսվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծոցում առհասարակ, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու մեր մյուս նվիրապետական Աթոռների միջև ամրապնդվեն քրիստոնեական սերն ու միությունը և ազգային-եկեղեցական համագործակցությունը, հունիսի 9-ին Անթիլիասի Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսին ուղարկեց հեռագիր:*

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀԵՌԱԳԻՐԸ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Դոհունակությամբ ստացանք Եղիշե արքեպիսկոպոսի հեռագիրը Զարեհ սրբազանի խնդրանքով:

Որպեսզի համաձայնությունը իր լրումին հասնի, Ս. Էջմիածին կհրավիրենք Աթոռիդ եպիսկոպոսները և կողմերու աշխարհական ներկայացուցիչները առանց խտրության: Ցանկալի կգտնենք օծումը կատարել Էջմիածնի Տաճարին մեջ համազգային ընդհանուր համերաշխությամբ և ուրախությամբ, առանց որ այդ պարագան նախընթաց մը հանդիսանա ապագայի համար:

Կոչ կընենք բոլորիդ, Ս. Աթոռիդ միաբանության և ժողովրդին, սիրո և միության ոգիով առաջնորդվիլ ի շահ Ս. Եկեղեցվույս և Ազգիս Հայոց:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*Այս հեռագրի բովանդակության մասին ի գիտություն տեղեկացվեց նաև Կոստանդնուպոլսի ամենապատիվ Պատրիարք Հոր, Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոսին, Հարավային Ամերիկայի Հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսին, Արևմտյան Եվրոպայի Հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոսին, Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանին և Եգիպտահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանին:*

*Կոստանդնուպոլսի Պատրիարք Սրբազանից հունիսի 13-ին ստացվեց հեռագիր-պատասխան:*

## ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Մայր Աթոռի հեռագիրը Անթիլիասի խնդրի վերաբերմամբ մեծ գոհունակություն և ուրախություն պատճառեց ամենուս: Լուծման իմաստուն կերպ էր առաջարկած: Հուսով ենք, թե հրավիրյալներն ալ իմաստություն կունենան ընդունելու պատվաբեր հրավերը: Երբ համաձայնություն գոյանա և Աստված կամենա, ես ևս կփափագիմ ուխտի գալ Ս. Էջմիածին:

ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱՐԵԳԻՆ

*Իսկ Անթիլիասի Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոսից հունիսի 16-ին ստացվեց բացասական հեռագիր-պատասխան։*

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ստացանք Վեհափառությանդ 9 հունիսի հեռագիրը: Խորապես կցավինք, որ առաջարկությունները անընդունելի են: Օծումը տեղի պիտի ունենա Անթիլիասի Մայր Տաճարին մեջ: Ի նշան և ի պահպանություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո միության, կխնդրենք հրահանգել Ձեր սրբազան եպիսկոպոսներուն բերել իրենց մասնակցությունը օծումին:

ՏԵՂԱՊԱՀ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

*Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը, միշտ լավատես և շինարար ոգով առաջնորդված, հունիսի 22-ին մի երկրորդ հեռագիր ևս հղեց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ գերաշնորհ Տ. Խորեն սրբազանին, ընդառաջելով Անթիլիասի Մայր Տաճարում կաթողիկոսական օծումը կատարելու նրա ցանկությանը։*

## ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌԱԳԻՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ի սրտե բղձալով, որ Տանն Կիլիկիո Աթոռը վերագտնե իր ներքին խաղաղությունը մեր Ս. Եկեղեցվո միության ոգիին մեջ, և որպեսզի կողմերը համաձայնության հանգին, Ս. Էջմիածին կհրավիրենք Աթոռիդ եպիսկոպոսները և կողմերու աշխարհական պատվիրակները առանց խտրության, օծումը հետագային կատարելով Էջմիածին կամ Անթիլիաս: Կոչ կընենք Ձեզ և բոլորին՝ չմերժել եղբայրական սիրո հրավերը, որ կուգա Հայաստանյայց Եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼՒՈՅ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՎՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԻ, Ի ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՅԱՇԱԿԵՐՏԷ ՆՈՐԻՆ



Այն, զոր ի նախակարգ բանին նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմել, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ։ Ի մանկութեան տիսն վարժեալ՝ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ նահապետութեամբն՝ աշխարհին Հայոց՝ Առաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն. և անդէն առ եղեալ փութով ընթերցասիրութեամբ աստուածեղէն գրոց. որով առ ժամայն լուսաւորեալ և ընամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն հանդերձանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւնն:

... Եւ այնպէս տրտմական հոգւով պաշարեալ և բախարդապատեալ և անկեալ ի ծովս խռովութեանց. Եւ, որդիք՝ արդեօք եւս իւրեանց զատանիցէ: Եւ իբրև աւուրս բազումս անցին ի նոյն դիպուածս, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն համբաւէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հասանել: Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ազգաց Քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. և զայն առնէին աւուրս բազումս: Ապա եղանէր նոցա պարգեւական յամենաբարին Աստուծոյ ժողովել զաշխարհական խորհուրդն եռանդի միաբանելոցն, և գիրս նշանագրոյ Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և մենութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ. ազդ առնէին ասքս և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

... Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օգտակ գտանելոյ: Որում պարգևէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական շափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ. յօրինէր սիղոբայիւք և կապօք:... Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանել լինել, ասելով. Եւէ՝ «ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին զօրութեան:

... Յայնմ ժամանակի եռանդի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրումն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադիմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդովն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառ հայերէնախօսք գտան:

Անդ էր այնուհետեւ սիրալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայկոյն: Քանզի եղիցի, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնք գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իւրացն եղելոց խելամուտ լինէր, ոչ միայն ժամանակապաշտելեացն, այլ և յառաջագոյն յաւիտենիցն, և ապա եկելոցն սկզբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր աւանդութեանցն: Իսկ իբրև զչափ առեալ զիւրացն հաստատութեան, և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և բերել. և պատրաստական Մաշտոցութեանն անցեալ մարդկան յօրինել. որոց և ընծաւք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յուղեալ և գրեալ հասանէին ի բուցեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և Մահանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ:

# ՔԱՐՈԶ

ՄԵՍՐՈՊ ԱԲԵՂԱ ԱՇՃՅԱՆ

## ՕՇԱԿԱՆԻ ՄԵԾ ՍՈՒՐԲԸ

(Խոսված Մայր Տաճարում հունիսի 24-ին,
Ս. Մեսրոպ Մաշտոցի հիշատակին)

«Կենդանի ձայնիւ և ոչ մեռեալ բարբառով...»:

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

*Սիրելի հավատացյալ ժողովո՛ւրդ։ Մեկ-երկու օր առաջ Հայաստանյայց բազմերախտ Եկեղեցին և երախտագետ հայ ժողովուրդը հարգանքով և խորունկ սիրով նշեցին Օշականի մեծ սրբի խնկելի հիշատակը, որի երախտիքը շատ մեծ է եղել հայ գրի ու գրականության ստեղծման ու զարգացման բնագավառում։*

*Ամեն տարի, ամեն տեղ, հատուկ հուզմունքով, սրտագին աղոթքներով և ազգային արժանապատվության ջինջ զգացմունքների ամբողջ ջերմությամբ են դիմավորում այդ տոնը մեր ժողովուրդն ու Եկեղեցին, որովհետև այդ միմիայն Ս. Մեսրոպի տոնը չէ, այլ նաև հայ գրի ու գրականության, հայ դպրության տոնը։ Ս. Մեսրոպի անունն ու գործը իշխում են մեր ողջ պատմության վրա։*

*Որտեղի՞ց և ինչո՞ւ է սկիզբ առել այդ խորունկ երախտագիտությունն ու հարգանքը Օշականի մեծ սրբի հանդեպ։*

*Մեր ժողովրդի պատմության մեծ ու տագնապալի դարաշրջաններից մեկն է եղել Ս. Մեսրոպի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանը։ Քաղաքական հեղհեղուկ իրադրությունների մեջ, երկու հզորագույն պետությունների՝ Բյուզանդիոնի և Տիզբոնի կրունկների տակ քաղաքականապես, տնտեսապես և հոգեպես տրորվում էր մեր ժողովուրդը։ Օրակարգի վրա էր դրված մեր ժողովրդի ֆիզիկական, բարոյական, հոգեկան լինելության հարցը։ Այդ երկու պետությունները աշխատում էին իրենց ձևերով վերջնականապես ձուլել հայ ժողովրդի միասնությունը, սպառնում էին նրա ազատությանը, նրա մշակույթին, ազգային գոյության, վերջապես սպառնում էին նրա լույս հավատքին ու դավանությանը։ Մեր երկիրը կիսված էր օտարների թաթերի մեջ, արյուն էր կաթում մեր ազատատենչ ժողովրդի սրտից և շնչահեղձ էր լինում նրա հոգին։ Հայաստանյայց Եկեղեցին ևս տառապալից վիճակ էր ապրում, քանի դեռ իր հավատացյալ հոտի հետ խոսում էր ոչ հարազատ ձայնով ու խոսքով, քանի դեռ իր ոգին չէր կարողանում ներարկել իր որդիների հոգիների մեջ իր սե-*

փական ու անմիջական միջոցներով, քանի դեռ նա ինքնիրեն չէր գտել որպես Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի։ Ծանր երկունքի ժամանակ էր, և հպարտությամբ պիտի արձանագրել, որ այդ երկունքը իր արժանավոր ծնունդն ունեցավ։ Ծնվեցին մարդիկ և այդ մարդիկ ծնեցին գրեր և հանդիսացան մեր պահպանության, մեր մշակույթի ու գիտության, մեր դպրության ու հավատքի հրեղեն սյուները։ Նրանցից մեկն էր մեծ Օշականցին։

Ս. Մեսրոպ Մաշտոցը լինելով իր ժողովրդի և իր Եկեղեցու հարազատ որդին, ունենալով քաղաքական զգոն հոտառություն. լայնահորիզոն միտք ու հեռատեսություն, անցավ քրտնաթոր գործունեության գալիք քաղաքական ու կրոնական վտանգները կանխելու անձնահանձ վճռականությամբ։ Նա տեսավ, որ իր ժողովուրդը վճռել է ապրել, ցանկանում է իր մտքի և սրտի հետ խոսել հարազատ լեզվով, գիտակցեց, որ օտար ազդեցությունները, օտար մշակույթը մեր ժողովուրդը պետք է ընկալի միմիայն իր սեփական մտքի խողովակների միջոցով, համոզվեց, որ Քրիստոնեական Եկեղեցին Հայաստանում պետք է հայանա, որպեսզի կարողանա ապրել ու շնչել իր հոտի հետ և իր հոտն ևս շարունակի ապրել իր թեկուզ դառն՝ բայց ստեղծագործ կյանքը։

Օշականի մեծ վարդապետը և՛ այն ժամանակ, երբ ձեռքում բռնել էր զինվորականի թուրը, և՛ այն ժամանակ, երբ Քրիստոսի քառաթև խաչն էր իր ձեռքին, շնչել էր իր ժողովրդի ոգին, Հարազատ Եկեղեցու բուրումնավետ խնկի ծուխը, ապրել էր նրանց երակների արդար արյունով, և այդ ոգու ու արյան պարտադիր թելադրությամբ նվիրվել է իր ժողովուրդն ու Եկեղեցին ապրեցնելու սուրբ գործին։

Ս. Մեսրոպ Մաշտոցը ստեղծագործ երկունքի տարիներ ապրեցավ, գտավ Հայաստանյայց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը քաղաքական ու բարոյական կործանարար կապանքներից ազատագրելու ամենահուսալի միջոցը։ Անհրաժեշտ էր գեթ ներքին, բարոյական ազատությունն ունենալու և պահպանելու միջոցն ստեղծել, խիստ կարևոր էր, որ մեր Եկեղեցին արմատանար մեր ժողովրդի սրտի մեջ։ Այս անհրաժեշտությունը խթանեց նրա զգացմունքները և նա վճռականորեն համոզվեց, որ այդ գործի համար հարկ է ստեղծել սեփական գիր ու գրականություն, և տարված այդ փրկարար տեսիլքով, ստեղծեց մեր սրբատառ գրերը։ Գրերի գյուտը, սիրելի հավատացյալնե՛ր, մեր պատմության իրոք շրջադարձային կետերից մեկն է և ամենայն իրավամբ երախտագետ հայ ժողովուրդն ու Հայաստանյայց Եկեղեցին հրաշքով են նվիրականացնում այն, Հրաշք չէ՞ր միթե, որ Ս. Մեսրոպի գրերով ապրեցավ ու ստեղծագործեց մեր Եկեղեցին, հրաշք չէ՞ր միթե նրա շնորհիվ քաղաքական ուրույն դիմագիծ պահպանելը, հրաշք չէ՞ր միթե, երբ մեր ժողովուրդը հայ գրերի գյուտով հանդրվան առ հանդրվան նվաճեց գիտության ու մշակույթի, գրականության և արվեստի շատ ու շատ դժվարամատույց բարձունքներ, հրաշք չէ՞ր միթե, երբ հայոց Ս. Եկեղեցին հարազատ լեզվով խոսեցավ իր որդիների հետ, կոչելով նրանց պայքարի իրենց անկախության և խաղաղության համար, պահեց ու պահպանեց նրանց օտար ոտնձգությունների դեմ։ Հրաշք էր անկասկած, որ բազմաթիվ սպիներից հետո անաղարտ մնաց մեր ժողովրդի ազգային դիմագիծը, կենդանի մնաց մեր ժողովրդի նախնյան շունչը։ Քրիստոնեության ամենակարող Աստվածը Հայ Եկեղեցու սրբազան բեմից հայերեն խոսեց մեր ժողովրդի հետ....։ Հրաշք էր, սիրելի հավատացյալնե՛ր, կենդանի հրաշք էր այդ, այս բառի բարոյական խորունկ նշանակությամբ։ Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդն ավելի քան հազար հինգ հարյուր տարի շարունակ ծնկի է եկել Օշականի մեծ վարդապետի շիրմի առաջ, այդ է պատճառը, որ Հայաստանյայց Ս. Եկեղեցին նույնչափ տարիներ շարունակ օրհնում և խնկում է մեծ սրբի համեստ շիրիմը։

Հանձն առնել ամբողջ մեկ ժողովրդի լուսավորության գործը, դաստիարակել ամբողջ մեկ ժողովուրդ, դնել հզոր խարիսխը ամբողջ մեր հոյակապ գրականության՝ այդ գործն է միայն հանճարեղ ու տեսիլք ունեցող անհատականությունների։ Պայծառացնել հարազատ Եկեղեցին, շենցնել նրա բարոյական ու կրոնական կապը իր սիրեցյալ հոտի հետ՝ այդ էլ միմիայն սուրբ մարդկանց գործն է։ Հպարտությամբ պիտի շեշտել, որ Մեսրոպ Մաշտոցն էլ եղավ այդ հանճարն ու այդ սուրբը։ Գտավ հայ գիրը, հիմնեց հայ դըպրոցը, սկզբնավորեց հայ գրականությունը, բարի մշակի հավատով սերմանեց նրա աստվածային սրբազան պատգամները և իր անդրանիկ ավանդը պատգամեց իր ժողովրդին այսպես. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այս հանճարի խոսքն էլ անընդհատ հնչել է մեր ժողովրդի ականջին ամեն անգամ, երբ նա տվել է իր մեծ որդու անունը։ Իմաստություն, գիտություն էր հարկավոր մեր ժողովրդին ապրելու, ստեղծագործելու և հասնելու այսօրվա պայծառ օրերին։

Ս. Մեսրոպ Մաշտոցի գործը մեր ժողովրդի պատմության մեջ, մեր մշակույթի և գիտության պատմության մեջ, մեր արվեստի ու գրականության պատմության մեջ, մեր Եկեղեցու հնադարյան պատմության մեջ եղել ու

մնում է որպէս անխախտ անկիւնաքար, որի վրա հայ ժողովուրդն ու Հայաստանեայց Եկեղեցին կառուցել են իրենց ազգային շէնքն ամէն կողմից խուժած հողմերի և կարկտահարութեան ընդդէմ։ Այդ շէնքը այսօր առաւել քան ամուր ու հաստատուն է մեր երկրի գըրկում ու խաղաղ երկնքի տակ, մեր բարգաւաճող ու ծաղկող երկրի մշակութային կեանքի կենտրոն Երեւանում, մեր հոգևոր ու կրօնական կեանքի կենտրոն Ս. Էջմիածնում, և նոյնիսկ շատ ու շատ հեռաւոր ափերի վրա, որտեղ հնչում է Մեսրոպ Մաշտոցի այբուբենը, որտեղ երգւում են Մեսրոպատառ մեր շարականները։

Ոշական փոքրիկ գյուղի մեծ վարդապետը եղել է մեր ժողովրդի վառ հույսերի, ձգտումների, երազների և հույզերի մշտավառ ատրուշանը, եղել է Հայաստանեայց Եկեղեցու լուսարձակ կանթեղներից պայծառագույններից մէկը, եղել է այն լուսեղեն սյունը, որը նշել է մեր ժողովրդի փրկութեան, ինքնուրոյնութեան, մշակույթի, գրականութեան և վերելքի լայնարձակ ուղին։

Մեսրոպ Մաշտոցը եղել և մնում է պայծառ դիմաց կանգնած ազգային աստղա-ժրո, որը ցույց է տալիս մեր ժողովրդին և լուսավորում է նրա ճանապարհը, առաջնորդում միտքն ու ազատատենչ հոգին։

Ոշականի մեծ սուրբը եղել է Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի և Հայաստանեայց Եկեղեցու մեծ գործի անխոնջ և բազմաբեղուն սպասավորը, և հազար հինգ հարյուր տարի շարունակ հայ երախտապարտ ժողովուրդը եղել է նրա սրբազան շիրմի ուխտավորը։ Սիրելի ու թանկագին է եղել Ս. Մեսրոպի անունն ու հիշատակը հայ սերունդների համար։

Հայաստանեայց Եկեղեցին նվիրականացնում և օրհնում է այդ սրբազան ուխտը ու հավատարիմ իր հավատին և իր ավանդներին, նույնպես վճռած է երգել իր Մեսրոպյան շարականը և ծխել իր խունկը նրա ժողովրդի համբույրներով օծված շիրմի վրա։

Թո՛ղ տոնական պայծառ մնա Ս. Մեսրոպի մեծ հիշատակը։

Թո՛ղ մեր և մեր մանուկների շրթերին միշտ կարկաչի Մեսրոպատառ հայոց լեզուն։

Թո՛ղ նրա մեծ հոգին մեզ հետ լինի հավիտյան։ Ամեն։



ՄԱՇՏՈՑ ԱՐԵՂԱ ԹԱՋԻՐՅԱՆ

# ՆԱՀԱՏԱԿ ԿՈՒՅՍԵՐԸ

(Խոսված Ս. Շողակաթի եկեղեցում, 1956 թ. մայիսի 31-ին)

«Եկայք ճառասացեալք զծնունդս սոցա ճռչակեսցուք, և օրհնութեամբ զկատարած փառաւորեսցուք»։

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Այսպես է երգում երջանկահիշատակ Կոմիտաս կաթողիկոսը Հռիփսիմյանց կույսերի մարտիրոսությունը իր «Անձինք նուիրեալք» շարականով, որն իր ոճի գեղեցկությամբ, կրոնա-բարոյական արժեքներով կարող է մրցել նույն կույսերի հիշատակը հավերժացնող Հայրապետի բարեպաշտ մտքի հղացումը հանդիսացող հայ ճարտարապետական արվեստի գոհարներից մեկի՝ Ս. Հռիփսիմեի տաճարի հոյակապ կառուցվածքի հետ։

Այդ երկու վեհապանծ կոթողներով մեր մեծագործ Հայրապետը մի անգամ ևս շեշտեց քրիստոնեական լուսավոր հավատի համար զոհված այն սուրբ կույսերի մարտիրոսությունը, որ արդեն սրբագործված էր Ս. Գրիգոր Լուսավորչի հրաշագեղ տեսիլքով։

Ո՞րն է այն հողը, որի վրա իջան մեր պատվական Հայրապետ Գրիգոր Լուսավորչի տեսած լուսաշող կամարները, ո՞ր տեղից էին սկսում նրանք և ի՞նչ էին նշանակում։

Այդ այն հողն էր, որի վրա մենք ենք կանգնած և մեր նախնյաց ջերմեռանդ հավատով աղոթում ու գովերգում ենք Հռիփսիմյանց կույսերի գերագույն զոհաբերությունը, որոնց «ժուժկալեալք փորձութեանց և պէսպէս լլկանաց, եղեալք ժառանգորդք անթառամ պսակին»։ Իսկ լուսաշող կամարների իմաստը մեզ տալիս է հայ մատենագրության առաջին ներկայացուցիչը՝ Ագաթանգեղոսը։ Նա ասում է, որ այդ լուսաշող կամարները, որ Ս. Գրիգորի տեսիլքի մեջ երևացին, կանգնած էին չորս սյուների վրա։ Հողը՝ սկսում էր ճիշտ այս կետից, այսինքն Շողակաթի տաճարից, որտեղ թափվել էր սուրբ կույսերի արյունը և շարունակվում էր մինչև այն կետը, ուր գտնվում էր Ս. Հռիփսիմեի մարմինը, որի վրա էլ երևում էր հրեղեն սյունը։ Լույսի շողը այնտեղ կանգ չէր առնում, այլ տարածվում էր մինչև Ս. Գայանեի մարմնի գտնված տեղը և շարունակվելով հասնում էր այն կետին, ուր Էջմիածինն է կանգնած դարերից ի վեր։ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։ Եվ այս տեսիլքով առաջնորդվելով, Գրիգոր Լուսավորիչը կառուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Գայանեի, Հռիփսիմեի, Շողակաթի տաճարները։ Այս աստվածային շողը լուսավորեց Հայաստան աշխարհը և հայ ժողովուրդը ընդունեց քրիստոնեությունը։ Ահա այն հունձը, որ տվեց սուրբ կույսերի արյունով շաղախված հայոց հողը, «բառնալով վիշապաց դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէս»։

Ս. Կույսերի քրիստոնեական հավատի համար մարտիրոսացումը և աստվածային հրա-

շակերտք ու միայն ամրապնդեցին Հայ ժողո-վրդի մէջ քրիստոնէական կրօնը և նրա քարոզած բարոյականութիւնը, այլև այն հաւատով դաւանեցին Հայ ոգին բարոյական այն մեծ ուժով, որ նա Հայրենասիրեց իր ընտանեկան պատուաւորութեան, իր հաւատի և Եկեղեցու և իր Հայրենասիրութեան մէջ։

Ի պարծանս Հայ կանանց պէտք է ասել, որ նրանք շարունակ մերժեցին օտարին մարմնական կենցաղը, զի ծանեան եթէ երազ է սուտ պահանջներ. ու հեշտացեալ ի գրգանս փափկութեան, իմացան, եթէ սնոտի է անցաւոր մեծութիւնը։

Ահա այսպիսի հաւատով զինված, Հայ կինը պահպանեց իր ընտանեկան պատիւը, մաքառեց դարեր շարունակ բռնութեան դէմ, կուրծք տուեց այլազան ցեղերի արշաւանքներին, թափեց իր արյունը, պահպանելով իր հոգու մէջ աստուածութեան, սրբագործ սիրո և գաղափարութեան խորհուրդը։

Արդ, պահպանենք Հռիփսիմյանց սուրբ կոյսերի անմահ հիշատակը, ունենալով մեր հոգու խորքում նրանց պաշտած Քրիստոսին, պահենք Քրիստոսի պատուիրանները և ամենվանենք Նրա սիրո հրապոյրով։ Սիրենք Նրան, որ եղավ մարդկային երջանկութեան գերագոյն քարոզիչը Իր սիրո վարդապետութեամբ։ Հռիփսիմյանց կոյսերի նման անաղարտ պահենք Քրիստոսի քարոզած սերը որպէս մեր կյանքի ուղեցոյց, դառնալու համար Աստուծո ճշմարիտ հոգևոր զաւակները։ Աստուծո հոգևոր զաւակը լինել նշանակում է լինել քրիստոնէական բարոյականութեան պաշտպանը և գործադրողը։

Մաղթենք, որ Հռիփսիմյանց կոյսերի մեզ ավանդ թողած քրիստոնէական բարոյականութեան մեծ ուժը լավագույն օրինակ լինի մեր ներկա և գալիք Հայ մատաղ սերունդին, բարձր պահելով իրենց անձի, իրենց ընտանիքի, իրենց ազգի, իրենց Եկեղեցու, իրենց հարազատ Հայրենիքի փառքն ու պատիւը, և թո՛ղ ապագա սերունդները հրճվանքով գոչեն. «Սկայք հաւատացեալք զենքութիւնս սոդա հոյակեցաք, և օրհնութեամբ զԱստուած փառաւորեցաք»։

«Շնորհք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ», և թո՛ղ աստուածային շնչի կաթիլը անմար մնա ձեր սրտերում։ Ամէն։

ՀԱՅՐԻԿ ԱՐԵՂԱ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

(Խոսված Երևանի Կոնդ թաղամասի Ս. Հովհաննես եկեղեցում Կաթողիկե Ս. էջմիածնի տոնի առիթով, 1956 թ. հունիսի 3-ին)

«Ի վերայ Այսոյն և Ս. էջմիածնի ամենայն ազգն Հայոց կախեալ կան»:

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻ

Տասնյոթներորդ դարի ականավոր պատմաբան Առաքել վարդապետ Դավրիժեցին այսպես է բնորոշել Ս. էջմիածնի նշանակությունը ամբողջ հայ ժողովրդի համար։ Այսքան պարզ և այսքան սեղմ ու հակիրճ արտահայտությամբ ավելի լավ բնորոշում հնարավոր չէր տալ։ Զուր չէ, որ դարեր շարունակ Ս. էջմիածինը եղել է օգտաշատ քարոզների նյութն ու բնաբանը և պիտի լինի նաև այսուհետև։

Աստվածակառույց, լույս Խորան Ս. էջմիածինը արդարև բյուրավոր անքակտելի թելերով կապված է եղել հայ ժողովրդի հոգու, սրտի ու մտքի հետ. այդ կուռ միությունը դարձել է միս ու արյուն, անխորտակելի զորություն՝ սրբագործված մեր բազմադարյան պատմությամբ։ Չի եղել և չկա ոչինչ ավելի թանկ, ավելի սիրելի ամեն մի հայի համար, քան Ս. էջմիածինը, նրա վեհ գաղափարը, Սրբություն Սրբոցը, որը մի նոր էջ, մի նոր լուսավոր դարաշրջան բացեց մեր ժողովրդի ընդհանուր կյանքի տարեգրության մեջ։ Ս. էջմիածնի, նրա հիասքանչ սկզբնավորության մեծ հիշատակն է, որ այսօր փառաշուք հանդեսներով տոնում է երախտագետ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին։

Ավելի քան 1650 տարի առաջ, չորրորդ դարի արշալույսին, Հայաստան աշխարհի սիրտը հանդիսացող Արարատյան հարթավայրի վրա երկնքից իջնում է Քրիստոս և լույս փառաց ընդ նմա ու ոսկե ուռով բախում երկիրը։ Այս հրաշալի երևույթի ականատեսն է լինում մեր բազմերախտ Հայրապետ Ս. Գրիգորը, որն Ավետարանի կենարար լույսը Հայաստանում տարածելու համար և ի սեր Քրիստոսի կրեց անպատում չարչարանքներ, մինչև որ աստվածային հրաշքով ազատվեց և դարձավ հայ ժողովրդի մկրտիչն ու երկրորդ մեծ լուսավորիչը Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներից հետո։

Միածնաէջ սուրբ տեղում Լուսավորչի նախաձեռնությամբ հիմնվում է Մայր Կաթողիկեն և Ամենայն Հայոց Հայրապետությունը։ Ս. էջմիածինը դառնում է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և հայ ժողովրդի միասնության խորհրդանշանը, այն գլխավոր կենտրոնը, որից լույսի ճառագայթներ են հորդում Հայաստանի չորս ծագերը, հայ ժողովրդի հոգու, սրտի ու մտքի վրա։ Հայ ժողովուրդը դառնում է հայ քրիստոնյա և մկրտվում Ս. էջմիածնի քրիստոնեական ավազանում, որտեղից ստացած հոգեկան նորանոր ուժերն ու Ս. Հոգու բազմազան շնորհ-

ները նախապատրաստեցին նրա հետագա աննախըն-թաց վերելքը կյանքի բոլոր բնագավառնե-րում։

Իր ամբողջ գոյության ընթացքում Ս. Էջ-միածինը եղել է հայ ժողովրդի արթուն պա-հապանը, հույս ու անձնվեր հովիվը, որը հա-նապազ ձգտել է միշտ պահել իր հոտը ներ-քին և արտաքին ոչխարազգեստ գայլերից, անաղարտ պահել Ս. Ավետարանի սկզբունք-ները հանդերձ մեր Եկեղեցու հայրերի վար-դապետությունը, առաքելահաստատ սովո-րությունները ու ավանդությունները։ Շատ անգամներ են սև, մութ ամպեր գիզվել Հայ Եկեղեցու երկնակամարի վրա, շատ փո-թորիկների ու անել խաչընդատների է հանդի-պել Ս. Էջմիածինը, բայց ոչ երբեք ընկրկել այդ ահեղ փորձությունների առջև, հերոսա-բար վարելով մեր Եկեղեցու նավը դեպի փրր-կության ափը։

Մեծ են Ս. Էջմիածնի ծառայությունները մեր ժողովրդի նաև մտավոր զարգացման ու այլ բնագավառներում, որոնց մասին հնարա-վոր չէ հանգամանորեն խոսել այստեղ։ Ս. Էջմիածինը եղել է մեր ժողովրդի մեկենասը. Նա էր, որ առաջին անգամ տվեց նրան սե-փական գիր և գրականություն՝ մեր գոյու-թյան, գրականության, արվեստի և մյուս աս-պարեզներում ձեռք բերած հետագա բոլոր հաղթանակների հուսալի առհավատչյան։ Ս. Էջմիածինը տվել է հայոց հանճարի ռահվի-րաները հանդիսացող, հայի նկարագիրը մարմնավորող բազմաթիվ կաթողիկոսներ ու անձնվեր հոգևորականներ, որոնց անմահ ա-նունները ոսկե տառերով են գրված մեր հե-րոսական պատմության փառապանծ էջերում։

Ակնառու դեր է խաղացել Ս. Էջմիածինը մեր ազգային-քաղաքական կյանքում, լինե-լով միակ հույսի, փրկության ու մխիթարու-թյան աղբյուրը, մանավանդ երբ հայը են-թարկվել է անողոք ճակատագրի դաժան հարվածներին, երբ ամենուստ թևատված ու անօգնական է մնացել նա։ Որպես միասնու-թյան խորհրդանշան Ս. Էջմիածնի նպատակն է եղել հայ ժողովրդի մեջ հաստատել խա-ղաղություն, սեր և միություն՝ ի շինություն, ի բարգավաճումն և ի բարօրություն համայն ազգին Հայոց։

Էջմիածինն է եղել, որ միշտ վառ է պահել թե՛ բնաշխարհի և թե՛ տարագիր հայության մեջ հավատքի ոգին, ազատասիրության, պայ-քարի և դիմադրության դյուցազնաշունչ ոգին, որոնցով միայն պետք է բացատրել այն հրաշքը, որ այսօր մեր ժողովուրդն ապրում է, կառուցում և ստեղծագործում։

Էջմիածինն իր անջնջելի կնիքն է թողել մեր ազգի վրա, նրա կյանքի բոլոր բնագավառ-ների, նրա նկարագրի ձևավորման վրա։ Նա դաստիարակել է մեր ժողովրդին, առաքինա-զարդել ու անմահացրել։

Մեր ժողովրդի հետ և մեր ժողովրդի հա-մար նա՛ էլ կենդանի նահատակվել է, անցել արյունոտ ու տառապալից ճանապարհ, բայց փառքի ճանապարհ։ Էջմիածնի ճակատագի-րը մեր ժողովրդի ճակատագիրն է, նրա պատմությունը՝ մեր ժողովրդի պատմությու-նը։ Նա եղել և մնում է մեր ազգի խորհրդա-նշանը, խտացույն մարմնացումը նրա խո-հերի, տենչերի ու իմաստության։

Ճիշտ է, այսօր մեր ժողովրդի զգալի մասը հասել է փրկության ափին, Հայրենի երկրի հետ միասին Ս. Էջմիածինն էլ հարություն է առնում ու պայծառանում, ազատ ու լիաթոք շնչում վերընձյուղած Հայրենի երկրի հայրե-նի իշխանության հովանու ներքո, անհրաժեշ-տաբար ձերբազատվել է իր մարմնական մի շարք պարտականություններից, սակայն նա տակավին պատմական մեծ առաքելություն ունի կատարելու մեր տառապած ժողովրդի համար, որի մնացորդ, ցրուցրիվ բեկորնե-րը շարունակում են ապրել պանդխտության մեջ՝ հեռավոր հորիզոնների տակ՝ Ս. Էջ-միածնի և ծաղկած Մայր Հայրենիքի սերն ու կարոտը ամուր սեղմած իրենց սրտին։

Այժմ ավելի քան երբեք այնքան կարևոր է դարձել Ս. Էջմիածնի դերը որպես հզոր գոր-ծոնի՝ անխախտ ու կենդանի պահելու գաղ-թաշխարհի հայության մեջ մեր Եկեղեցու Հավատամքը, մեր լույս պապերի՝ մեր Աբրա-համների ու Իսահակների սուրբ հավատը, մեր ազգային-եկեղեցական սովորություն-ներն ու ավանդությունները, մեր Մեսրոպյան մեծասքանչ լեզուն, սերը դեպի Ս. Էջմիածի-նը, դեպի Հայրենիքն ու նրա պանծալի պատ-մությունը։ Ահա պայմաններ, որոնցով միայն

հնարավոր է խուսափել ինքնաչնչման մղձավանջից և պահպանել հայի իսկական շունչն ու հոգին օտար ազդեցությունների շրջանակում։

Այժմ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության ղեկը գտնվում է հուսալի և կարող ձեռքերում։ Ազգիս նորընտիր Հայրապետ Վազգեն Ա երիտասարդ է, օժտված աշխատանքի անսպառ եռանդով ու հոգևոր բարեմասնություններով։ Նախանձախնդիր լինելով մեր սուրբ հավատին, ավանդություններին ու մեր ժողովրդի սրբազան շահերին, Վեհափառ Հայրապետը, արթուն հովվի պես, գիշեր ու ցերեկ պահպանում է իր հոտը, աշխատում գերծ պահել նրան ամեն տեսակ վտանգներից և առաջնորդել աստվածահաճ նախնիքների լուսավոր շավղով։

Ընդամենը մի քանի ամիս է անցել Վեհափառ Հայրապետի գահակալությունից, բայց արդեն սկիզբ է դրվել շինարարական մի հսկայական աշխատանքի՝ մեր եկեղեցական կյանքում։ Նոր հունի մեջ է մտնում, նոր շունչ ու թափ է առնում Ս. Էջմիածինը, մեր եկեղեցական կյանքը։ Ներշնչված Վեհափառի անձնական օրինակով, մեր հոգևոր անդաստանի մշակներն աշխատում են մեղվաջան, կոփվում նվիրման, ժուժկալության, սիրո ու համերաշխության ոգով, որը գրավական է ամեն տեսակ հաղթանակների։ Վեհափառի ազգաշեն նպատակների անկյունաքարերից է՝ է՛լ ավելի հմայք ու շուք պարգևել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, զորացնել նրա առինքնող ազդեցությունը որպես հույսի ու փրկության խորանի, որպես հավատի ու լույսի վառարանի համայն հայության համար։

Մեր միահամուռ աղոթքի մրմունջները միացնենք մեր սիրելի Հայրապետի մաքրափայլ աղոթքներին, որպեսզի Ամենաբարձրյալը սատար լինի նրան, իրականացնի նրա, ինչպես և բոլորիս սրտագին փափագը՝ շուտով տեսնել այն երջանիկ օրը, երբ Հայր մի անգամ ընդմիշտ կթոթափի իր ուսերից պանդխտության դարավոր փոշին և կհավաքվի իր հայրենի շեն օջախի շուրջը՝ այստեղ միասին աղոթելու, միասին ապրելու ու շինելու։

Աղոթենք, որ Տերը միշտ անշարժ պահի զԱթոռ Հայկազնեայց, մեր հույսի, մեր լույսի, մեր փրկության Ս. Խորանը՝ Իր իսկ հիմնած Ս. Էջմիածինը, որի վրա ամենայն ազգն Հայոց կապեալ կան։ Ամեն։

# ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը արտասահմանյան իր ուղևորություններից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադառնալուց հետո առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ շատ մոտիկ ապագայում Մայր Աթոռի, Վեհարանի և մյուս վանքերի վերանորոգչական և շինարարական ծավալուն աշխատանքներին, որոնց մասին ընդարձակ զեկույց էր տրված 1955 թվականի սեպտեմբերին գումարված Ազգային-եկեղեցական պատկառելի ժողովում և ընդունված էր համապատասխան որոշում վանքերում կատարվելիք այդ աշխատանքների մասին։*

*Վերանորոգչական այդ աշխատանքները կանխամտածված և ծրագրային ձևով կատարելու համար, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի ցանկությանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հրաչյա Գրիգորյանը Էջմիածնում հրավիրեց հեղինակավոր ճարտարապետների խորհրդակցություն հետևյալ կազմով.*

*1. Մ. Մազմանյան, ճարտարապետ, Երևանի քաղաքային Սովետի Նախագծային արվեստանոցի վարիչ.*

*2. Վ. Հարությունյան, ճարտարապետության թեկնածու, Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչ.*

*3. Ռ. Իսրայելյան, ճարտարապետության թեկնածու, Նախագծային արվեստանոցի վարիչ.*

*4. Կ. Հովհաննիսյան, ճարտարապետության թեկնածու, Հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ.*

*5. Կ. Ղաֆադարյան, դոկտոր, Երևանի պետական պատմական թանգարանի դիրեկտոր.*

*6. Լ. Սադոյան, ճարտարապետ.*

*7. Մ. Մանուկյան, ճարտարապետ.*

*8. Ա. Սահինյան, ճարտարապետության թեկնածու, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի աշխատակից.*

*9. Վ. Պարոնյան, Էջմիածին քաղաքի գլխավոր ճարտարապետ։*

*Խորհրդակցությանը մասնակցում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության կոմիտեի նախագահ Ռ. Աղաբեկյանը և Էջմիածնի քաղաքային Սովետի նախագահ Հ. Հովհաննիսյանը։*

*Սույն թվականի հունիսի 25-ին Վեհափառ Հայրապետի անմիջական մասնակցությամբ և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանի ներկայությամբ վերոհիշյալ ժողովը տեղվույն վրա քննեց և ստուգեց վերանորոգության ենթակա մեր ճարտարապետության չքնաղ կոթողներ Ս.*

Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակաթ վանքերը, արձանագրեց կատարվելիք աշխատանքները, որոնք վիթխարի ծավալ են բռնում։

Ապա Հանձնախումբը հավաքվեց Վեհարան նախնական քննության առնելու համար շինարարական բոլոր կետերն ու միջոցառումները։

Քննության ենթարկվեցին վերոհիշյալ վանքերի, Ներկա Վեհարանի, Մայր Տաճարի ամբողջ շրջափակի, Տրդատյան դռան և մոտիկ ապագայում ստացվելիք Նոր Վեհարանի հետ կապված վերանորոգչական, շինարարական և բարեզարդման բոլոր խնդիրները։

Կառավարության բարեհաճ կարգադրությամբ Վեհարանի նորակառույց շենքը հանձնվում է Ամենայն Հայոց Հայրապետության։ Այդ պատճառով շինարարական աշխատանքների լայն հնարավորություններ են ստեղծվում։ Բարեփոխման է ենթարկվելու Մայր Աթոռի ամբողջ շրջափակը, քանդվելու է Նոր Վեհարանը հին Վեհարանից անջատող հողաշեն հին պարիսպը, Տրդատյան դուռը պիտի ստանա իր նախկին կերպարանքը և պիտի ծառայե որպես Վեհափառ Հայրապետի պաշտոնական մուտքի դուռ դեպի Մայր Տաճար, ծառատնկումներն ու ծաղկազարդումը կատարվելու են նոր հատակագծի համապատասխան և այլն։

Խիստ նկատելի էր ճարտարապետների եռանդն ու նախանձախնդրությունը, որոնք յահեկան վիճաբանություն ստեղծեցին քննության ենթակա ամեն մի հարցի շուրջ։ Առանձնապես գործուն հետաքրքրություն ցուցաբերվեց այժմյան Վեհարանի ճակատագրի նկատմամբ։ Ճարտարապետները արտահայտեցին սկզբունքային կարծիքների երկու տարբերակ, մեկը՝ շենքը ամրացնելու և պահպանելու մասին, մյուսը՝ շենքը վերացնելու մասին։ Առաջին տեսակետի կողմնակիցները պատմականորեն վերլուծման ենթարկելով խնդիրը գտան, որ այժմյան Վեհարանը ունի պատմական հետաքրքիր անցյալ, նա հանդիսանում է մեր մշակութային ու կրոնական ականավոր գործիչների գործունեության հետ առնչություն ունեցող ուշագրավ հիշատակարան, ունի մանրանկարչական արվեստի կարևոր զարդարանքներ (Մաղկյա դահլիճը) և եռանդուն կերպով պաշտպանեցին շենքը պահպանելու իրենց տեսակետը։

Երկրորդ տեսակետի կողմնակիցները, ելնելով Մայր Տաճարի և շրջակա շենքերի ամբողջ կազմի գեղեցկագիտական տեսակետից և շրջափակի ներդաշնակ ու վայելուչ բարեզարդման անհրաժեշտությունից, դիտելով շենքի արդեն գրեթե կիսով չափ կազմալուծված հանգամանքը, գտան, որ հարմար է այն քանդել և հնագիտական ու մանրանկարչական արժեք ներկայացնող մանրանկարներն ու իրեղենները դասավորել թանգարանում։

Այս երկու տեսակետների շուրջը մտքերի աշխույժ փոխանակությունից հետո համաձայնություն գոյացվեց, որ գործը ընթացքի մեջ դնելու համար ստեղծվի հեղինակավոր մի մարմին, որը նկատի ունենա այս տարբեր առաջարկությունները ու մտքերը և կազմի ընդհանուր պատճառաբանված նախագիծ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խորհրդակցությունը եզրափակեց հետևյալ խոսքերով.

— Կաթողիկոսները չեն քվեարկեր կողմ շեշտելու համար։ Այստեղ գոյություն ունի այժմյան Վեհարանի շենքի պահպանման կողմնակիցներու և վերացման կողմնակիցներու երկու տեսակետ։ Մեկը հատկապես պատմականորեն կնայի գործին, իսկ մյուսը՝ գեղագիտական, ներդաշնակ ընդհանուր կազմ ստեղծելու տեսանկյունեն կդիտե գործը։ Դժվար է այժմ առավելությունը տալ այս կամ այն կարծիքին։ Վերջնական եզրակացություն կուտանք հետո։ Համաձայն ենք, հատուկ մարմին մը կազմվի, որ նկատի ունենա երկու տեսակետներն ալ և ներկայացնե ընդհանուր նախագիծ՝ ի քննություն և ի հաստատություն։

Խորին շնորհակալություն Ձեզ բոլորիդ Ձեր նախանձախնդրության, Ձեր գործոն հետաքրքրության համար, որոնք մեծ գոհունակությամբ նկատեցինք այս պահուն։ Ձեզ կհայտնենք նաև ի սփյուռս ցրված մեր հարազատ որդիներու երկյուղած, հավատավոր ու խանդավառ վերաբերմունքը։ Մեր կողմեն ձեռնարկված այս վերանորոգչական և շինարարական շնորհակալ աշխատանքներու նկատմամբ։ Սփյուռքահայությունը իր այդ զգացումը շեշտեց զոհողություններ ընելու իր անվարան պատրաստակամությամբ և առատաձեռնությամբ։ Այս գործ մըն է, որ ունի կրոնա-եկեղեցական և ազգային-պատմական մեծ արժեք։ Երախտագիտությամբ պիտի հիշեն Ձեզ մեր հաջորդ սերունդները։

Կառաջարկենք, որ ձեզմե մեկը այս շինարարության մասին մանրամասն գիտական հոդված մը կազմե «Էջմիածին» պաշտոնաթերթին մեջ հրատարակելու համար։

Վեհափառ Հայրապետը կրկնեց իր անկեղծ շնորհակալությունները ներկաներին և հաջողություն մաղթեց։



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին, շաբաթ օր. «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն» տոնին, Ս. Էջման սեղանի վրա պատարագեց Տ. Վաչէն արեղա Գալամքարյանը և ավուր պատշաճի քարոզ խոսեց։

⁂

Հունիսի 3-ին, կիրակի, Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնին, Մայր Տաճարում պատարագեց Տ. Եղիշե արեղա Սարգսյանը։ Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։ Պատարագի ավարտին տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք։ Պատարագիչ Տ. Եղիշե արեղան քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնադրության և Նրա կատարած գործունեության մասին։

⁂

Հունիսի 3-ին, կիրակի օրը, Երևանի Ս. Զորավոր եկեղեցին տոնական տեսք էր ստացել։ Հավատացյալների հոծ բազմությունը հավաքվել էր եկեղեցի։ Այդ օրը պետք է կարդացվեր Վեհափառ Հայրապետի անդրանիկ կոնդակը։

Մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր Տ. Լևոն քահանան։ Պատարագի կեսին կարդացվեց Վեհափառ Հայրապետի կոնդակը, որից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք և ապա շարունակվեց պատարագը։

Ժողովուրդը գոհ և ուրախ մեկնեց եկեղեցուց։

Նույն օրը Երևանի Ս. Սարգիս և Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցիներում արժանավայել հանդիսավորությամբ կարդացվեց Ամենայն Հայոց Հայրապետի անդրանիկ կոնդակը և կատարվեց Հայրապետական մաղթանք։

⁂

Հունիսի 21-ին, հինգշաբթի օրը, ավանդական շքեղությամբ տոնվեց «Սրբոց Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրովպայ» տոնը։

Առավոտյան ժամը 9-ն էր, Մայր Աթոռի միաբանությունը կազմ ու պատրաստ է, որպես ուխտավոր հայ ժողովրդի տաղանդավոր զավակի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին ուխտի գնալու և ծնրադրելու Նրա առաջ։

Մեծ սրբին ուխտի էր եկել հայ ժողովրդի հոծ բազմություն։ Վանքի բակը և շրջակայքը լի էր ժողովրդով։ Բացի Մայր Աթոռի միաբանությունից Ս. Մեսրոպի ուխտատեղին էին եկել նաև մեկ տասնյակից ավելի քահանաներ։ Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան բարձրաշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաշիրյանը, որը «Հայր մեր»-ից առաջ հակիրճ, բայց ազդու կերպով բացատրեց Ս. Սահակի և Մեսրոպի կատարած հսկա աշխատանքի անուրանալի նշանակությունը հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար։ Քարոզիչ հայր սուրբն իր խոսքն ավարտեց կոչ անելով հավատացյալներին, որ նրանք ավելի սերտ կերպով բոլորվեն մեր Ազգային Ս. Եկեղեցու շուրջը և պահպանեն հայերեն լեզուն և դարավոր մշակույթը, մեր Ս. Եկեղեցին։

Սուրբ պատարագից հետո տեղի ունեցավ հոգեհանգիստ նվիրված հայ մտքի մշակների հիշատակին։

Երեկոյան Մայր Աթոռի միաբանությունը վերադարձավ Էջմիածին։

⁂

Հունիսի 24-ին, կիրակի, «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի» տոնի օրը, Մայր Տաճարում քարոզեց բարձրաշնորհ Տ. Մեսրոպ արեղա Անթարյանը Սրբոց Թարգմանչաց մասին։

⁂

Ընթացիկ գործերով Մայր Աթոռ ժամանեց Բաքվի և Թուրքեստանի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Աղնավուրյանը, որը գործերը կարգավորելուց հետո մեկնեց իր պաշտոնատեղին։

*Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Տ. Գարեգին աբեղա Գևորգյանը ազատվեց Վեհափառ Հայրապետի գավազանակրի պաշտոնից և նշանակվեց Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ։ Հոգեշնորհ Հայր Գարեգինը մեկնեց իր պաշտոնատեղին։ Վեհափառ Հայրապետի գավազանակիր է նշանակված Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանը։*

*Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Թբիլիսիի և Ռոստովի առաջնորդների օգնական նշանակվեցին Մայր Աթոռի միաբաններ Տ. Տ. Վահան և Հայրիկ աբեղաները, որոնք մեկնեցին իրենց նոր պաշտոնատեղիները։*

*Հունիսի 24-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներից Մայր Աթոռ վերադարձավ Մայր Աթոռի միաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որ մասնակցում էր Նյու-Յորքում տեղի ունեցած ԱՄՆ-ի և ՍԱՌՄ-ի քրիստոնեական եկեղեցիների ժողովին, որպես Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ։*

# ՀԱՆԳԻՍՏ
# Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

*1956 թվականի մարտի 29-ին, ավագ հինգշաբթի օրը, Նյու-Յորքի եպիսկոպոսականների Սեյնտ Լյուքս հիվանդանոցում, ի Տեր հանգչել է Մայր Աթոռի միաբան Տ. Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը 89 տարեկան հասակում։*

*Ապրիլի 4-ին, չորեքշաբթի օր, Նյու-Յորքի հայոց Ս. Խաչ եկեղեցու մեջ Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Կալֆայանի նախագահությամբ մատուցվեց հոգեհանգստյան սուրբ պատարագ, որի ընթացքում կատարվեցին վերջին օծման և թաղման կարգերը, ապա հանգուցյալ սրբազանի մարմինը ամփոփվեց Յոնկըրսի գերեզմանատան մեջ։*

*Հանգուցյալ սրբազանը վերջին ներկայացուցիչն էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության այն փաղանգին և Գևորգյան Ճեմարանի առաջին սերնդին, որը սրբությամբ և մեծ արդյունավետությամբ ծառայեց Հայ Եկեղեցուն, հայ մշակույթին և հայ ժողովրդին։*

*Հանգուցյալ սրբազանի մահով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին կորցնում է իր ինքնատիպ, նախանձախնդիր, ավանդապահ, կենցաղագետ և հայրենասեր մշակներից մեկին։*

*Հանգուցյալ սրբազանը ծնվել է 1867 թվի ապրիլի 21-ին, Ղարաբաղի Բոնակոթ գյուղում։ Իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում և ապա սովորել է Շուշու թեմական դպրոցում։ Ուսումնատենչ պատանին ապա ընդունվել է Ս. Էջմիածնի Գևորգյան Ճեմարանը, որի լսարանական բաժինը հաջողությամբ ավարտելուց հետո մեկնել է Պետերբուրգ շարունակելու իր ուսումը, հետևելով պատմա-բանասիրական դասընթացներին։*

*Որոշ ժամանակ ուսումնատենչ երիտասարդը եղել է Լոնդոնի և Փարիզի համալսարաններում, գիտության նոր պաշարներ ավելացնելով իր գիտելիքների և ընդհանուր զարգացման վրա։*

*Արտասահմանից Մայր Աթոռ վերադառնալուց հետո կուսակրոն քահանա է ձեռնադրվել Հայրիկից, օծակից ունենալով երջանկահիշատակ Գևորգ Զ և Գարեգին Ա կաթողիկոսներին։*

*Երիտասարդ և խոստումնալից հոգևորականի առաջ բացվում է ազգային-եկեղեցական և կրթական գործունեության ընդարձակ ասպարեզ։ Նա որոշ ժամանակ դասավանդում է Գևորգյան Ճեմարանում, Երևանի թեմական դպրոցում և ապա վարում է Ղարաբաղի թեմական դպրոցի տեսչությունը։*

*Ապա Տ. Տիրայր վարդապետին տեսնում ենք թեմական առաջնորդական պաշտոններում, նա նշանակվում է Բեսարաբիայի թեմի առաջնորդական փոխանորդ և հոգևոր խորհրդի (կոնսիստորիա) փոխ-նախագահ, ապա Թիֆլիսի Ս. Սարգիս եկեղեցու փոխանորդ։*

*1917—1920 թվականներին Տ. Տիրայր վարդապետը Եղբայրական օգնության հանձնախմբի կողմից ձեռնհասորեն և հայրենասիրությամբ զբաղվում է Էջմիածնում արևմտահայ գաղթականների տեղավորման հարցով։*

*Այդ տարիներին նա եղել է նաև Մայր Աթոռի դիվանապետ, մինչև 1921 թիվը։*

*Անցնող տարիների հետ միասին Տ. Տիրայր վարդապետը խորացնում է պատմա-բանասիրական իր գիտությունը. Նա տիրապետում էր հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և մասամբ ես վրացերեն լեզուներին։ Նա աշխատակցում է Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրին կրոնական և պատմա-բանասիրական ուսումնասիրություններով։*

*1921 թվականին Տ. Տիրայր սրբազանը նշանակվում է հեռավոր Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ։ Իր առաջնորդության տարիներին՝ 1921—1928 թվականներին նա*

այդ թեմը ղեկավարում է ձեռնհասորեն, կազմակերպում է հայուհյաց, երիտասարդական միություններ, կիրակնօրյա դպրոցներ, զարկ է տալիս ազգային-եկեղեցական կյանքին, եկեղեցու շուրջ համախմբելով բոլոր մարմիններին ու ազգային կազմակերպություններին։

Վարչական-առաջնորդական պաշտոնավարությունից հոգնած, Տ. Տիրայր եպիսկոպոսը նվիրվում է բանասիրության և կրոնական նյութերի ուսումնասիրության։ Նրա գրչին է պատկանում «Ֆրիկի դիվանը» պատմա-գրական կարեոր ուսումնասիրությունը։ Հանգուցյալ սրբազանը թողնում է նաև կրոնական, պատմական և լեզվաբանական բազմաթիվ անտիպ նյութեր։

Հանգուցյալ սրբազանը ո՛ւր որ էլ գնաց, միշտ մնաց Ս. Էջմիածնի հավատարիմ միաբանն ու զավակը. միշտ բարձր պահեց հայ հոգևորականի արժանապատվությունը, անունն ու կոչումը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կրոնական կարգապահության նախանձախնդրությունը։ Նա միշտ սիրվեց, հարգվեց և գնահատվեց իր ժողովրդից որպես գրչի մարդ, որպես հայրենասեր, որպես Ս. Էջմիածնի գերագահության հանդեպ ջերմ հարգանք ու խոհական վերաբերմունք ունեցող հոգևորական և միաբան։ Նա միշտ ջերմ կարոտով էր խոսում և մտածում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին։

Հանգուցյալ սրբազանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է նվիրած իր հարուստ մատենադարանն ու թանգարանը, հավերժացնելու համար իր հիշատակը Մայր Աթոռում։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

Հավիտենական խաղաղությո՜ւն Նրա հոգուն։





# ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

## ԳԻՐԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՀԱՎԱՔՈՒՅԹԸ

Ուսումնական տարվա դրական վերջին հավաքույթ-բանախոսությունը տեղի ունեցավ մայիսի 30-ին Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ։ Ներկա էին Մայր Աթոռի միաբանները, աշխատավորները, Ճեմարանի ուսուցիչները և ուսանողները։

Օրվա բանախոսն էր հոգեշնորհ Տ. Գարեգին արեղա Գևորգյանը, որը պատմեց իր արտասահմանյան տպավորությունները, նկարագրեց Ամենայն Հայոց Հայրապետին ցույց տրված սիրալիր ընդունելությունը Մոսկվայում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Իտալիայում, Անգլիայում։

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետը գեղեցիկ խրատներով քաջալերեց Ճեմարանի ուսանողներին։

## ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանի վերջին քննությունները տեղի ունեցան մայիսի 21-ից մինչև հունիսի 5-ը։ Քննություններին ներկա գտնվեցին Վեհափառ Հայրապետը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, արեղաները, վերատեսուչն ու դասատուները։ Քննությունների արդյունքները գոհացուցիչ են։

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎ

Հաջող քննություններից հետո կազմակերպված ուսանողական արշավի ընթացքում էջմիածին—Սևան ճանապարհի վրա Ճեմարանի ուսանողները ուսումնասիրեցին Հրազդանի նորակառույց մեծ կամուրջը Ծիծեռնակաբերդի մոտ, Արզնի՝ համբավավոր առողջարանի հանգստավայրերն ու հանքային ջրերը, Ծաղկաձորում Կեչառիսի պատմական վանքերը, որոնք նորոգվում են այժմ և Սևանա լիճը, կղզին և նրա հուշարձանները (Առաքելոց եկեղեցին) ու բուժավայրերը։

## ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՓԱԿՈՒՄ

Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանը փակվեց հունիսի 9-ին ավուր պատշաճի հանդեսով, որին նախագահեց Տ. Վարդան եպիսկոպոսը։

Նախագահ՝ սրբազանի, վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանի և ուսուցիչ պ. Ա. Նազարյանի խրատականները լսելուց հետո, ուսանողները վերատեսչի առաջնորդությամբ ներկայացան Վեհափառ Հայրապետին և ստացան Նորին Ս. Օծության օրհնությունը։

Վեհափառ Հայրապետի հրամանով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ կարգադրություններ են արված առաջիկա 1956—1957 կրթաշրջանի համար Հոգևոր Ճեմարանում նոր ուսանողներ ընդունելու մասին Մայր Հայրենիքից և արտասահմանից։ Նախատեսվում է հետզհետե կազմակերպվելիք վեց դասարաններում ուսանողների թիվը բարձրացնել 100-ի։

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի հրավերով հունիսի 1-ին Մոսկվայից ինքնաթիռով Նյու-Յորք մեկնեցին Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները, որոնց կազմում էին Կրուտիցկու և Կոլոմենսկայի միտրոպոլիտ Նիկոլայը (պատվիրակության ղեկավար), Լենինգրադի ավագ քահանա Միխայիլ Սլավնիցկին, Մոսկվայի Հոգևոր ճեմարանի դասախոս դոցենտ Վլադիմիր Իվանիչ Տալիզինը, որոնք ներկայացնում էին Ռուսական և Վրացական Պրավոսլավ եկեղեցիները։

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի կողմից Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ էր նշանակված Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Սովետական Միության քրիստոնեական մյուս եկեղեցիներն ևս ունեին իրենց ներկայացուցիչները։

1956 թվականի մարտի 10-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի պատգամավորությունը եկել էր Մոսկվա, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի հրավերով։

Այժմ, հունիսին, Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը փոխադարձ այցելության էր մեկնում Ամերիկայի Միացյալ Նահանգներ։

Հունիսի 2-ի երեկոյան պատվիրակությունը ժամանեց Նյու-Յորք և մնաց մինչև հունիսի 13-ը։ Պատվիրակությունը այդ ժամանակամիջոցում տեսակցություններ և խորհրդակցություններ ունեցավ Ամերիկայի Քրիստոնեական եկեղեցիների ազգային խորհրդի և եկեղեցական ղեկավարների հետ հետևյալ հարցերի շուրջ.

1. Սովետական Միության և Ամերիկայի քրիստոնեական եկեղեցիները ի՞նչ են կատարել և ի՞նչ կարող են կատարել աշխարհում խաղաղության գործին ի նպաստ։
2. Քրիստոնեական եկեղեցիների ազատությունը՝ կատարելու համար իրենց առաքելությունը։
3. Քրիստոնեական հավատը և մյուս կրոնները։
4. Քրիստոնեական հավատը և արդի գիտությունը։
5. Ընթացիկ ուղղություններ աստվածաբանական կրթության մեջ։
6. Քրիստոնեական գրականություն։
7. ՍՍՌՄ-ում և ԱՄՆ-ում գտնվող եկեղեցիների փոխհարաբերությունները։

Քրիստոնեական եկեղեցիների միության փոխադարձ հասկացողության և համագործակցության հարցերը կարևոր և այժմեական խնդիրներ են։

Այսօր մանավանդ պետք է միասնական հնչի Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու հավաքական ձայնը ի պաշտպանություն առաջադիմության, խաղաղության, ազգերի և կրոնների համերաշխ գործակցության։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, իր դարավոր պատմության ընթացքում, ամենաջերմ պաշտպաններից մեկն է եղել քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և միասնության։ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մյուս քույր եկեղեցիների նկատմամբ ունեցել է քրիստոնեական հանդուրժողության լայն ոգի։ Նա, ամուր կանգնած իր ազգային-եկեղեցական դարավոր ավանդությունների վրա, երբեք չի արհամարհել մյուս եկեղեցիների ազգային իրավական ու ներքին ինքնուրույնությունը և երբեք չի ձգտել միջամուխ լինելու նրանց ներքին գործերի մեջ։

րաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը Ամերիկայի Միացյալ Նահանգների Քրիստոնեական եկեղեցիների Ազգային խորհրդի անդամների և այլ եկեղեցական ղեկավարների հետ բարեկամական զրույցներ ունեցավ, ներկայացնելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու աստվածաբանական ուղղությունը, ներկա կացությունն ու Հայ Եկեղեցու առաջ կանգնած հոգևոր գործերի և եկեղեցական կազմակերպչական աշխատանքները։

Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը եղավ ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում՝ Նյու-Յորքում, Վաշինգտոնում, Սիրաքի-Հաուզում, Նյ-



Սահակ սրբազանը (ձախում) և Ռոյ Գ. Ռոսը (աջում) հետևում են Միտրոպոլիտ Նիկոլայի և դոկտ. Էժեն Կարսոն Բլեյկի խոսակցությանը։

«Միությո՛ւն ի կարևորս, ազատությո՛ւն յերկբայս, և սէր յամենայնի» — ահա՛ Եկեղեցու միության այն սկզբունքները, որոնցով առաջնորդվել է և այսօր էլ առաջնորդվում է Հայ Եկեղեցին։

Այս գաղափարների լույսի տակ է, որ հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը մասնակցեց Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած փոխադարձ այցելությանը։ Գե-

լի համալսարանում, Տոլեդոյում, ծանոթացավ տեսարժան վայրերին, բարեկամական զրույցներ և խորհրդակցություններ ունեցավ ԱՄՆ-ի Քրիստոնեական եկեղեցիների Ազգային խորհրդի անդամների և այլ եկեղեցական ղեկավարների հետ։

Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակությունը սիրալիր ընդունելություն էր գտնում ԱՄՆ-ի բոլոր տարբեր եկեղեցիների և հավատացյալների կողմից։

Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատգամավորության ճանապարհորդությունները, խորհրդակցությունները ու այցելությունները անցնում էին բարեկամական սիրալիր մթնոլորտում։

Քրիստոնեական բոլոր եկեղեցիների սերտ փոխհարաբերությամբ և համագործակցությամբ միայն կարող է իրագործվել եկեղեցական միությունը՝ որն իր հերթին կհանդիսանա ամբողջ աշխարհում քրիստոնեական վեհ գաղափարների, ճշմարտությունների և

Հունիսի 3-ին, կիրակի օր, Սովետական Միության քրիստոնեական եկեղեցիների պատվիրակության անդամ բոլոր հոգևորականները այցելեցին իրենց ազգային եկեղեցիները։

Միտրոպոլիտ Նիկոլայը եղավ Ռուս Պրավոսլավ եկեղեցում, պատարագեց, քարոզեց և մի սարկավագ ձեռնադրեց։

Գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը հունիսի 2-ին, շաբաթ երեկոյան, հրավեր ստացավ Նյու-Յորքի Հայոց Ս. Խաչ եկեղեցու հո-



Սովետական Միության Քրիստոնեական Եկեղեցիների պատվիրակությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգների եկեղեցական պատվիրակությունը Միսսուրի Նահանգում։

խաղաղասիրական պատգամների կենսագործման, ժողովուրդների և ազգերի միջև քրիստոնեական եղբայրության ազնիվ իդեալների իրականացման խթանը։

***

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնված օրերին պատեհություն ունեցավ նաև այցելելու մի շարք հայաշատ կենտրոններ, եկեղեցիներ, և բանին կենաց քարոզությամբ, ինչպես նաև Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մասին խանդավառող լուրերով մխիթարելու հավատացյալներին։

գաբարձության կողմից՝ հաջորդ օրը ներկա լինելու սուրբ պատարագին։ Ընդունելով հրավերը, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը կիրակի օր նախագահեց եկեղեցական արարողություններին։

Այդ օրը Ս. Էջմիածնի տոնն էր։ Եկեղեցին լիքն էր հավատացյալների բազմությամբ։ Պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը քարոզեց Էջմիածնի տոնի և Ս. Էջմիածնի խորհրդի ու նշանակության մասին, «Եթէ մոռացայց զքեզ, Էջմիածին» բնաբանով։ Գերաշնորհ սրբազանը պատմեց հայրենադարձ հայերի նոր կյանքի մասին Հայրենի Հողի

վրա և Սովետական բարեխնամ կառավարության հայրենադարձներին ցուցաբերած և դրամական նպաստներով այժմյան մասնա… Սրբազանը խոսեց Հայաստանի մայրաքաղաք Երևանի, Սևանի, Հայրենիքի հզոր, մշակութային ծաղկման մասին և այդ ծաղկման ժամանակից հետո Ս. Օծության մեռած Հայրապետի այցելին գործունեության վրա։ Վերջում սրբազանը սրտագին հայտնեց հավատացյալներին՝ մի օր ուխտի գալ Ս. Էջմիածին և Հայրենիք, այցելել մեր պատմական վանքերն ու Սովետական Հայաստանի տեսարժան վայրերը։

Դասախոսից հետո գերաշնորհ Տ. Սահակ սրբազանի նախագահությամբ կատարվեց հանդիսավոր Հայրապետական մաղթանք։

Կեսօրին գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը հյուրասիրվեց տիար Հարություն Հակոբյանի տանը։ Ընդունելության ներկա էին 50 հոգի։ Ճաշին բաժակը սրբազանը առաջարկեց նորընտիր Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի, Մայր Աթոռի, Մայր Հայրենիքի կենացը, որ ընդունվեց ոգևորությամբ և բուռն ծափահարությամբ։ Ընդունելությունը անցավ ջերմ և սիրալիր մթնոլորտում, հայրենի քաղցր հաճառախոսներով համեմված։ Խանդավառ և սրտագին կոչով ասված ճառերը և արտահայտեցին իրենց սերն ու նվիրվածությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Ամենայն Հայոց Հայրապետությունը և պանծալի Սովետական Հայաստանը։

Այս առթիվ տիար Հ. Հակոբյանն իր անձնական թանգարանից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրեց 260 տարվա հնություն ունեցող մի գեղազարդ շարական, բերված Կեսարիայի Ս. Հակոբ եկեղեցուց։

Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը Մայր Աթոռ վերադարձավ լավագույն տպավորություններով և այն խոր համոզմամբ, որ Հյուսիսային Ամերիկայի հայ գաղութի մեջ ևս վառ է սերը, նվիրվածությունն ու խանդավառությունը դեպի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Ս. Էջմիածինը և պանծալի Սովետական Հայաստանը։

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ*

*Յանկություն ունենալով իմ կարողության սահմաններում օգնած լինել որոշ չափով Սովետական Միության ժողովուրդների պատմության դասագրքեր կազմող հեղինակներին, ես նպատակահարմար համարեցի գրել և հրատարակել իմ այս աշխատությունը՝ «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության», որտեղ հաշվի են առնված բոլոր նորագույն ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմական անցյալին։*

*«Համառոտ տեսությունը» ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 16-րդ դարը, այսինքն մինչև Հայաստանի գրավումը Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան Թյուրքիայի կողմից։ Նրա մեջ բերված են Հին Հայաստանի պատմության վերաբերող գլխավոր ընդհանրացումները, որոնք քաղված են, գլխավորապես, հենց իմ աշխատություններից և որը ծառայելու է ոչ միայն իբրև ձեռնարկ Սովետական Միության ժողովուրդների պատմության դասագրքեր կազմող հեղինակների համար, այլև դասատուների, ուսանողների և հայ ժողովրդի պատմությամբ հետաքրքրվողների համար։*

❀❀❀

*Հայ ժողովուրդը, որ հանդիսանում է իբրև Սովետական Միության հնագույն ժողովուրդներից մեկը, Հին Հայաստանում պատմության ասպարեզ է մտել մեր թվականությունից վեց հարյուր տարուց ավելի առաջ։*

Armina *(Արմինա) երկրի և* Arminiya *(Արմինիյա) անունները առաջին անգամ հանդիպում են Դարեհ Վշտասպի կամ Դարեհ I-ի (522—486 թ. թ. մ. թ. ա.) թագավորի սեպագիր արձանագրություններում։ Այդ արձանագրությունների արմինները, որոնք Հերոդոտի մոտ կոչվում են արմեններ, ինչպես ապացուցված է ժամանակակից գիտության մեջ, եղել են հնդեվրոպական ժողովուրդ, որ գաղթել եկել են իրենց նոր հայրենիքը Եվրոպայից՝ Փոքր Ասիայի վրայով։ Մոտավորապես 12-րդ դարում մեր թվականությունից առաջ ժամանակակից հայերի հնդեվրոպական նախահայրերը իրենց ազգակից փռյուգիական ցեղերի հետ միասին Թրակիայից գաղթել են Փոքր Ասիա և մոտավորապես վեց հարյուր տարի ապրել են այդտեղ խեթական ժողովուրդների կողքին։ Գիտնականները ենթադրում են, որ այդ արմենները, որոնք Հոմերոսի Իլիականում կոչվել են արիմներ, այդ միայական երկի երևան գալու ժամանակաշրջանում, մոտավորապես 9—8-րդ դարերում (մ. թ. ա.) գրավել են հետագա Կապադովկիական Կեսարիայի շրջանը (այժմյան Կեսարիան), որը եղել է այդ ժամանակ Հին Կիլիկիայի մի մասը։*

*Հին Հայաստանում, մինչև արևմուտքից գաղթած արմենների հանդես գալը, բնակվելիս են եղել ոչ հնդեվրոպական ցեղեր, որոնք միավորված են եղել խալդերի իշխանության տակ և որոնց ասորեստանյան արձանագրությունները անվանում են ուրարտացիներ։*

*9—6-րդ դարերում (մ. թ. ա.) ուրարտական թագավորության ժողովուրդների կողմից ստեղծված է եղել ինքնատիպ բարձր հին քաղաքակրթություն, որը և դրել է իր*

** Ակադ. Հ. Մանանդյանի ներկա չահեկան ուսումնասիրությունը խմբագրությանս տրամադրել է ականավոր հայագետի եղբայրը՝ Արսեն Մանանդյանը։*

նները։ Հին Հայաստանի կուլտուրական ա-ռաջացի վրա։ Այդ բարձր կուլտուրայի մասին վկայում են ոչ միայն ուրարտական սեպագիր նշանագրերով եղած գրագրության գոյությունը, այլև նրանց մոտ՝ հողագործության, անասնապահության, այգեգործության և մետաղագործության զարգացումը, նմանապես և ոռոգման ու քաղաք-ամրոցների կառուցման բարձր տեխնիկան։

Չափազանց ուշագրավ է, որ ջրանցքներից մեկը, որ ուրարտացիք կառուցած են եղել ազգաբնակչության ջրամատակարարման համար, պահպանվել է և գործում է Վան քաղաքում նաև այժմ։

Խալդական թագավորությունը շատ էր թուլացել դեռևս մինչև արմենների աշխարհակալ արշավանքները, 8-րդ և 7-րդ դարերում (մ. թ. ա.) տեղի ունեցած կիմմերական և սկյութական հարձակումների ժամանակ։ Հենց այդ շարժումների հետ է կապված, ինչպես ենթադրում են, արմենների տեղաշարժը Կապադովկիայից և Փոքր Ասիայից դեպի արևելք և նրանց հիմնավորումը Հայաստանի արևմտյան և հարավ-արևմտյան բնագավառներում։

Սկզբնական շրջանում արմենները բնակություն էին հաստատել այստեղ, ինչպես ցույց է տրված Ստրաբոնի մոտ, Ակիլիսենեի (այժմյան Երզնկայի) շրջանում և Սոփինի-տիս-Ծոփքիայի բնագավառում, որը գտնվում էր Տիգրիսի ակունքների մոտերքում և այստեղից մուտք էին գործել Հայկական բարձրավանդակի ներքին և հյուսիսային շրջանները։

6-րդ դարում տեղի ունեցած արմենների ու խալդերի համառ կռիվների մասին ուշագրավ տեղեկություններ կան հույն պատմիչ Քսենոփոնի «Կիրոպեդիա»-յում։ Ինչպես հաղորդում է Քսենոփոնը, արմենները շահագրգռված են եղել, որպեսզի թույլ տան իրենց օգտվելու լեռնային արոտատեղիներից, իսկ խալդերը, որ ապրում էին լեռներում, ուզում էին անարգել կերպով օգտվել անմիջական բերքատու հողերից, որոնք գտնվում էին արմենների զբաղեցրած դաշտային մասերում։ Քսենոփոնի պատմությունից երևում է, որ մեդացիները և պարսիկները, օգտվելով այդ երկրում տեղի ունեցող երկպառակություններից, հպատակեցրին այդ շրջանները իրենց իշխանությանը և ապահովեցին այնուհետև բնիկների ու եկվորների խաղաղ կենակցությունը։

Այդ խաղաղ կենակցության հետևանքով հետզհետե տեղի ունեցավ տեղական ժողովուրդների և հնդեվրոպական արմենների միաձուլումը և առաջ եկավ նոր խառնուրդ ժողովուրդ, որի նախահայրերն էին ոչ միայն արմենները, այլև հին Ուրարտուի բնիկ ժողովուրդները։ Հայ ժողովուրդը, հիշված խառնուրդային ծագման հետևանքով, ստացել է երկու տարբեր անուններ։ Մինչդեռ ժողովուրդներից շատերին հայերը հայտնի են «արմեն» անունով, իրենք իրենց անվանում են ոչ թե «արմեն», այլ «հայ»։

«Հայ»-ը, ինչպես ենթադրում են, հանդիսանում է նրանց նախնիների՝ Հայասա երկրի բնիկ հին ժողովրդի անունը, որը գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևմուտքում և հյուսիսում, և որի հետ միաձուլվել էին հնդեվրոպական արմենները։

7-րդ և 6-րդ դարերում (մ. թ. ա.) Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում կատարվել էին էական փոփոխություններ։ Հին Արևելքի պետությունների՝ Ասորեստանի, Բաբելոնի, Ուրարտուի և Եգիպտոսի փոխարեն հանդես էին եկել նոր, ռազմատենչ՝ Մեդիայի և պարսիկ ցեղերի դաշնակցային միավորությունները, որոնք տարհացրել էին հին կուլտուրական ժողովուրդներին և ստեղծել էին նոր պետություններ։ Կան տեղեկություններ, որ դեռևս 6-րդ դարի առաջին կիսում արմենները եղել են մեդացիների դաշնակիցները և վասալները, որոնք ենթարկել էին իրենց իշխանությանը Ուրարտու երկիրը։

Ինչպես երևում է Քսենոփոնի Կիրոպեդիայի վկայություններից, առաջին Աքեմենյանների՝ պարսկական Կյուրոս (550—529 թ. թ.) և Կամբյուզ (529—522 թ. թ.) թագավորների ժամանակ, արմենները, որոնք միավորված էին եղել Ռուզիկես-թագավորի իշխանության տակ, եղել են դաշնակցային և վասալական հարաբերությունների մեջ նաև պարսկական հզոր պետության հետ, որը փոխարինել էր մեդացիների թագավորությանը։ Սակայն կարճ ժամանակից հետո պարսից Դարեհ թագավորը (522—456 թ. թ.), Հայաստանի ապստամբությունը ճնշելուց հետո, թե՛ արմենների թագավորությունը և թե՛ Պարսկաստանի մյուս վասալական թագավորությունները, դարձրել էր սատրապություն (520 մ. թ. ա.)։

Հին պարսիկների իշխանությունը Հայաստանում տևել է երկու հարյուր տարուց ավելի (550—330 մ. թ. ա.)։

Աքեմենյանների ժամանակաշրջանում Հին Հայաստանի ներքին կյանքի մասին կան մի շարք ցուցմունքներ Քսենոփոնի մոտ, որն իր «Անաբասիս» երկի մեջ, իբրև ականատես, նկարագրել է 10.000 հույների նահանջը Հայաստանի միջով դեպի Սև ծովը (401—400 մ. թ. ա.)։

Արմենների գլխավոր զբաղմունքները, ինչպես երևում է նրա վկայություններից, եղել

են՝ հողագործությունը, անասնապահությունը և այգեգործությունը։ Հայաստանի վրայով հետնահանջող հույները ամեն տեղ գյուղերում գտնում էին գյուղատնտեսական մթերքների առատ պաշարներ՝ ցորեն, գարի, պատիճավոր (стручковые) պտուղներ, չամիչ, անուշահոտ գինիներ, խոզի ճարպ, զանազան բուսական յուղեր՝ քունջութի, նուշի և փստայի (фисташка)։ Հիշվում է նաև գարուց պատրաստված, պիվայի նման մի խմիչք, որը կարասներից ծծում էին եղեգնի միջոցով։ Ընտանի կենդանիներից «Անաբասիս»-ում հիշվում են՝ այծեր, ոչխարներ, եզներ, կովեր, խոզեր, հավեր և ձիեր։ Ստրաբոնը հաղորդում է, որ «Հայաստանը ունի սքանչելի արոտատեղիներ ձիերի համար, և դրանում նա չէր զիջում Մեդիային, այնպես որ նեսայան ձիերը, որոնք ծառայում էին պարսիկ թագավորներին, դարգացնում էին նաև այստեղ, և հայկական սատրապը ամեն տարի, Միթրայի տոնակատարություններին ուղարկում էր պարսիկին 20.000 քուռակ» (XI, 14—9—Թարգմանություն Միշչենկոյի)։

Հիշված տվյալները վկայում են արմենների մոտ գյուղատնտեսական կուլտուրայի զգալի զարգացման մասին։

Երկրի սոցիալական դրության մասին հնագարյան գրողների մոտ կան միայն անուղղակի ցուցմունքներ։

Այդ ցուցմունքներից երևում է, որ այդ ժամանակաշրջանում արմենների հասարակական կազմակերպության հիմքը եղել է համայնական իրավակարգը։ Իսկ տնտեսությունը այդ դարաշրջանում եղել է զուտ բնական։

Համաձայն Քսենոփոնի նկարագրության, արմենները ապրելիս են եղել համախմբված բնակությամբ, որոնք բաղկացած են եղել բազմաթիվ ամրացված գյուղերից, շրջապատված թումբերով։ Նրանց գլխավորել են կոմարխները՝ գյուղական համայնական ավագները, որոնք սատրապների հետ դուրընթաց հանդիսացել են իբրև վարչական մարմին։

Իբրև ցուցանիշ ազգաբնակչության թույլ շերտավորման, կարող է ծառայել, ի միջի այլոց, քաղաքների բացակայությունը Հայաստանում։ Քսենոփոնի «Անաբասիս»-ում բերված տեղեկություններից երևում է, որ Հայաստանի վրայով հետ նահանջող հույները իրենց ճանապարհին տեսել են միայն ամրացրած գյուղեր, այսպես կոչված քաղաքատեղերը (городище), բայց ոչ իսկական քաղաք, որը ծառայելիս լիներ իբրև առևտրական կենտրոն։ Որ այդ ժամանակաշրջանում Հայաստանում չեն եղել այդպիսի քաղաքներ, այդ երևում է, ի միջի այլոց, նրանից, որ Քսենոփոնի հիշած սատրապի աթոռատեղին գտնվել է գյուղերից մեկի հատուկ ամրոցում։

Միանգամայն հնարավոր է, որ պարսկական տիրապետության այդ ժամանակաշրջանում տեղի է ունեցել համայնական հարաբերությունների զգալի բեկում և համայնական ու ցեղական պետերի իշխանության և իրավունքների բարձրացում։

Արմենների տեղաշարժերի առաջընթացը և տեղական բնիկ ժողովուրդների նվաճումը, անշուշտ, ստեղծելու էին տնտեսական ու սոցիալական անհավասարություն և, հավանորեն, օժանդակելու էին համայնական կենցաղի քայքայմանը ու դասակարգերի առաջացմանը։

Ըստ Հերոդոտի, արմենները պակտիների և այլ հարևանների հետ գտնվել են տասներեքերորդ սատրապության կազմի մեջ, որը պետք է վճարեր պարսկական թագավորին 400 տաղանդ արծաթ (որ ոսկու հաշվով կազմում է 1.160.000 ոսկի ռուբլի)։ Հայաստանը պետք է, բացի այդ, պարսկական արքունին տար որոշ քանակությամբ մտրուկներ, ըստ երևույթին, 40.000 հետևակ և 8.000 հեծելազոր։ Հայաստանի այդ օժանդակ զորքը մասնակցել է այն բոլոր կռիվներում, որ վարել են պարսկական թագավորները։ Այսպես օրինակ՝ ինչպես հաղորդում է Հերոդոտը, հույն-պարսկական կռիվների ժամանակ, Քսերքսեսի զորաբանակում, 480 թվին. եղել են արմեններ, որոնք զինված են եղել փռյուգիացիների օրինակով։ Նրանց սպառազինությունը բաղկացած է եղել փոքր վահաններից և կարճ նիզակներից։ Նրանք ունեցել են նաև տեգեր և սուրեր, ունեցել են հյուսված սաղավարտ, իսկ ոտներին՝ բարձր մաշիկներ (башмаки).

Հունա-հռոմեական աղբյուրներում առանձնապես հիշվում են նաև հայկական զորամասեր, որոնք պարսիկների հետ կռվել են Ալեքսանդր Մակեդոնացու դեմ։

Պարսկաստանի գրավումը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից (330 թ. մ. թ. ա.) և Արևելքում Սելևկյանների հելլենիստական միապետության կազմակերպումը (312 թ. մ. թ. ա.) նշանավորվում է, իբրև նոր շրջան, Հայաստանի քաղաքական ու տնտեսական զարգացման մեջ։

Այդ դարաշրջանի սկզբին արմենների գրավեցրած երկրամասը կազմել են առանձին մարզեր՝ Մեծ Հայաստան, որի կենտրոնական մասը կարճ ժամանակից հետո դարձել է Արարատյան դաշտավայրը. Ծոփքը՝ Եփրատ գետի, Արածանի գետի ստորին հոսանքի և Տիգրիսի վերին հոսանքի միջև. և Փոքր

Հայք՝ Եփրատի, Հալիս գետի ակունքների և Լիկոս գետի վերին հոսանքի միջև։

Այդ մարզերից և ոչ մեկը մակեդոնացիները չեն կարողացել վճռական կերպով գրավել՝ ոչ Աղեքսանդր Մակեդոնացու և ոչ նրա հաջորդների ժամանակ։ Սելևկյան թագավորության առաջանալուց հետո այդ երեք մարզերը պահել են իրենց ներքին անկախությունը և կառավարվել են տեղական իշխանների կողմից, որոնց հին աղբյուրները անվանում են հաճախ «թագավոր»-ներ (բասիլևս)։

Կախումն ունենալով Սելևկյաններից, Հայաստանի պետերը պարտավոր են եղել վճարել նրանց տուրք և կարճ ժամանակ գնալ ծառայության իրենց զորքով։ Սակայն, օգտվելով Սելևկյանների ներքին երկպառակություններից, հաճախ ժխտել են նրանց գերագույն իշխանությունը։

190 թվին (մ. թ. ա.) Սելևկիայի Անտիոքոս 3-րդ թագավորը պարտությունից հետո հռոմայեցիներից, որի հետևանքով սկիզբ ունեցավ Մեծ Հայքի և Ծոփքի փաստական ազատագրումը Սելևկյանների տիրապետությունից։ Տեղական պետերը՝ Արտաշես և Զարեհ, որոնք այդ ժամանակ եղել են հիշված մարզերի վարիչները, հայտարարել են իրենց անկախ թագավորներ. առաջինը՝ Մեծ Հայքում, իսկ երկրորդը՝ Ծոփքում։

Այնուհետև սկսվեց այդ պետությունների զարգացման արագ թափը։ Արտաշեսի և Զարեհի ժամանակ, ինչպես հաղորդում է Ստրաբոնը, նախկին փոքրիկ Հայաստանը մեծացել էր ի հաշիվ հարևան երկրների, նոր կազմակերպված թագավորություններին միացված են եղել հարևան երկրամասերը, որոնք գրավել էին մեդացիներից, իբերներից, խալյուբներից, մոսինոյկներից, կատաոններից և սյուրիացիներից։ Այդ երկրամասերի մեծագույն մասը միացված է եղել Մեծ Հայքին։ Ենթադրվում է, որ Արտաշես Առաջինի ժամանակ Մեծ Հայքը գրավել է ամբողջ հայկական լեռնաշխարհը, և նրա սահմանները հասել են՝ հյուսիսում— մինչև Կուր գետը և Կասպից ծովը, արևելքում— մինչև Ատրպատական, հարավում— մինչև Միջագետք և արևմուտքում— մինչև Ծոփք և Փոքր Հայք։

Արտաշեսյանների թագավորության հենց սկզբին ոչ միայն ավարտված էր արմենների տեղավորման պրոցեսը հայկական լեռնաշխարհում, այլև հայացված է եղել համարյա այդ ամբողջ երկիրը, և այնտեղ, ինչպես հաղորդում է Ստրաբոնը[1], խոսում էին միայն հայերեն լեզվով։

Ինչպես տեսնում ենք, դեռևս մինչև Արտաշեսյանների թագավորության հիմնումը, արդեն ավարտված է եղել հնդեվրոպական արմենների միաձուլումը տեղական ժողովուրդների հետ և հայ ժողովրդի վերջնական ձևավորումը։

Հելլենիստական դարաշրջանը Արևելքում իրենից ներկայացնում էր աշխույժ առևտրի և արդյունաբերության զարգացման շրջան, նաև փողային տնտեսության տարածման և մեծ չափով հունական գաղութների ու քաղաքների հիմնադրման, որոնք մեծ ազդեցություն են ունեցել Առաջավոր Ասիայի կուլտուրական զարգացման վրա։ Արևելքի այդ կուլտուր-տնտեսական առաջադիմությունը առաջացրել էր զգալի բեկում նաև Հայկական մարզերի կյանքում։

Հայկական երկրի տեղական մշակույթը, որը արեմենյան շրջանում ուժեղ կերպով զգացել էր պարսկական իրանիզմի ազդեցությունը, գտնվելով հելլենիստական աշխարհի հետ հարևանության մեջ, դեռևս 3-րդ դարում (մ. թ. ա.) ենթարկվել հելլենիզմի ազդեցությանը, որը 2-րդ — 1-ին դարերում ավելի և ավելի ուժեղացավ։

Հելլենիստական ազդեցությանը ենթարկվեցին Ծոփքում և Մեծ ու Փոքր Հայքում ամենից առաջ իշխող դասերը՝ թագավորները և ազնվականության բարձր խավերը։ Չափազանց ուշագրավ է, որ նույնիսկ հին Արմավիրի հնավայր շրջանում վերջերս գտնված է 282 թվի (մ. թ. ա.) հունական արձանագրություն, որտեղ նշանակված են մակեդոնական օրացույցի բոլոր ամիսները։ Հայկական թագավորների կտրած սեփական դրամները հունարեն նշանագրերով, որը Արևելքում տարածված երևույթ էր, ծառայում է իբրև անվիճելի ցուցանիշ առևտրական փոխանակության ուժեղացման և դրամական շրջանառության՝ ինչպես առաջավոր Ասիայում, այնպես և Հայաստանում։

Ուստի միանգամայն բնական է, որ հենց Սելևկյան շրջանումն են հիմնվել հին Հայաստանի առաջին քաղաքները՝ Արշամաշատ, Կարկաթիոկերտ և Արտաշատ։

Արշամաշատ քաղաքը հիմնել է 3-րդ դարում (մ. թ. ա.) Ծոփքի Արշամ թագավորը Եփրատ-Արածանիից ոչ հեռու, այժմյան Խարբերդի և Բալուի միջև։

1. Ստրաբոնի Աշխարհագրություն (XI, 14—5) ըստ [illegible] թարգմանության այն մասով, որ արմենների լեզուն այդ ժամանակ դարձել է հայկական [illegible] ընդգրկվածներում միակ լեզու։

Ծոփքի մյուս քաղաքը, Կարկաթիոկերտը, կամ, ավելի ճիշտ, Արկաթիակերտը, որն ըստ երևույթին հիմնել է Արկաթիոսը, գտնվում էր Տիգրիս գետի ստորերքում, այժմյան Էգիլի ավերակների մոտ։

Շնորհիվ հելլենիստական կուլտուրական աշխարհին մոտ լինելուն և Աքեմենյան արքայական ճանապարհ»-ի երկարությամբ ունեցած նպաստավոր դիրքին, որը Տավրոսի վրայով անցնում էր դեպի Խարբերդի դաշտավայրը և այնտեղից էլ Եփրատի վրայով դեպի Մելիտենե—Մալաթիա, հիշված երեք հայկական երկրներից կուլտուր-տնտեսական զարգացման համար ամենից նպաստավոր պայմաններ ունեցել է հին Ծոփքը։ Հենց դրանով է բացատրվում, որ Հին Հայաստանի առաջին քաղաքները՝ Արշամաշատը և Արկաթիակերտը հիմնված են եղել ոչ թե Մեծ կամ Փոքր Հայքում, այլ Ծոփքում։

Մեծ Հայքը իբրև անկախ պետություն հայտարարելուց հետո 166 թվին (մ. թ. ա.) Արտաշես Առաջինը հիմնեց Արարատյան դաշտավայրում, Արաքս գետի ափին, Արտաշատ քաղաքը (Artaxiata) այսինքն — Արտաշեսի բերկրությունը), որը գտնվելով դեպի Սև ծովը տանող մագիստրալ ճանապարհի վրա, դարձավ ոչ միայն քաղաքական, այլև Հին Հայաստանի կարևոր առևտրական կենտրոնը։ Այդ քաղաքի հիմնադրման ժամանակը զուգադիպում է Չինաստանի հետ միջազգային տրանզիտային հարաբերությունների հաստատմանը և Հնդկաստանի ու Միջին Ասիայի հետ ցամաքային առևտրական հաղորդակցությունների զարգացման ժամանակաշրջանին։ Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատը, որը Պլուտարքոսի մոտ կոչվում է «Հայաստանի Կարթագեն», ինչպես երևում է հունա-հռոմեական հեղինակների վկայություններից, հռոմեական հասարակության մեջ ուներ խոշոր ու գեղեցկագույն քաղաքի համբավ։

1-ին դարում (մ. թ. ա.) Արտաշես Առաջինի թոռան՝ Տիգրան Մեծի (95—56 թվը մ. թ. ա.) ժամանակ, Մեծ Հայաստանը հասավ քաղաքական ամենաբարձր հզորության և կարճ ժամանակով դարձավ մեծ պետություն։

Տիգրան Մեծի պետության զորեղացմանը նպաստեց ոչ միայն հաջող դասավորված արտաքին քաղաքական իրադրությունը, այլև նրա առաջադիմող զարգացումը և նրա ազգաբնակչության ինտենսիվ աճը նախընթաց դարերում։

«Տիգրան Մեծի հաջողությունների բանալին,—ինչպես ճիշտ է նկատել Գր. Խալաթյանը,— պետք է փնտրել տնտեսական ուժերի այն վիթխարի պաշարի մեջ, որ կուտակվել էր Հայաստանում դարերի ընթացքում պարսիկների տիրապետության խաղաղ շրջանում, Սելևկյանների ժամանակ և հետագայում»։

Եվ հիրավի, հունա-պարսկական կռիվների, Աղեքսանդր Մակեդոնացու՝ Արևելքը նվաճելու և դիադոխների ժամանակ տեղի ունեցած խռովությունների ժամանակաշրջաններում հայկական մարզերը մնացել էին այդ խոշոր համաշխարհային իրադարձությունների մեկ կողմում և նրանց զարգացումը խախտվել է համեմատաբար հազվադեպ։

Ըստ երևույթին հենց այդ իրադրությունների առկայությամբ պետք է բացատրել հետզհետե տեղի ունեցած հնդեվրոպական բնակչության արմենների արագ աճը հնագույն այս ժամանակաշրջանում, նաև նրանց երկրի հարստությունը և բարեկեցությունը, որ հիշվում են հունա-հռոմեական աղբյուրներում։

Հերոդոտի և Քսենոփոնի ժամանակ, 5-րդ դարում (մ. թ. ա.), այն երկրամասը, որտեղ տեղավորվել էր արմենների գլխավոր զանգվածը, եղել է համեմատաբար փոքր. նոր եկվորները գրավել էին բացի Փոքր Հայքի և Ակիլիսենեի բնագավառներից նաև Հին Հայաստանի հարավ-արևմտյան մասը և այնտեղ ապրել են, գլխավորապես, Արածանի գետի և նրա վտակների ավազանում ու ավելի հարավ՝ Տիգրիս գետի վերին հոսանքում։ Իսկ Ստրաբոնի վկայություններից երևում է, որ հայ բնակչությունը, որը ցրված է եղել տարբեր կողմերում, իր ժամանակը գրավելիս է եղել ոչ միայն պատմական Հայաստանի համարյա բոլոր մարզերը, այլև կազմել է Պապագոմկիայի, Աղիարենի և Հյուսիսային Միջագետքի բնակչության զգալի մասը։

Շնորհիվ իր աճի ու զարգացման արտաքին և ներքին պայմանների բարեհաջող զուգակցման, Մեծ Հայքը, միանալով Տիգրան Մեծի իշխանության տակ, նրա կողմից նվաճած Ծոփքի հետ, իբրև մի քաղաքական ամբողջություն, դարձել էր 1-ին դարում (մ. թ. ա.) խոշոր կենտրոնական ուժերով հագեցված պետություն, ավելի հզոր, քան հարևան փոքր թագավորությունները՝ Օսրոյենը, Կորդուքը, Աղիարենը և Մեդիա-Ատրպատականը։

Ուստի շատ հասկանալի է, որ նա դաշն կնքելով Պոնտոսի թագավոր Միհրդատ Եվպատորի հետ, և ապահովելով իր թիկունքը արևմուտքից, կարող էր հակադրել իր մեծապետությունը Պարթևների մեծապետությանը, որոնք ուժեղացել և տարածել էին իրենց սահմանները մինչև Եփրատ գետը։

Օգտվելով պարթև Արշակունիների մեջ առաջացած խռովություններից, Տիգրան Մեծը

խլեց պարթևներից նրանց պետության արևմտյան մարզերի քաղաքական տիրապետությունը և միացրեց իր գերիշխանության տակ վերոհիշյալ թագավորությունները։ Այնուհետև նա գրավեց նաև Միջագետքի, Ասորիքի, Կիլիկիայի, նույնիսկ Փյունիկիայի ու Պաղեստինայի զգալի մասերը։ Այդպիսով ստեղծվեց Տիգրան Մեծի լայնածավալ պետությունը, որը տարածվում էր Կուր գետից և Կասպից ծովից մինչև Եգիպտոսի սահմանները և Միջերկրական ծովը և Ատրպատականից մինչև Կապադովկիա և Արևմտյան Կիլիկիա։

Մեծ Հայքի զորեղացումը եղավ, սակայն, ոչ երկարատև։ Տիգրանի դաշնակից Միհրդատ Պոնտացու պարտություններից հետո, նա ընկավ հզոր Հռոմի և ուժեղացած Պարթևստանի միջև, որոնք սկսել էին սեղմել արևմուտքից և արևելքից, և արագ կերպով սկսեց կազմալուծվել (69—66 թ. թ. մ. թ. ա.) Լուկուլլոսի և Պոմպեոսի հռոմեական զորամասերի ճնշման տակ։ Տիգրանի իշխանության տակ թողնվել էին միայն Մեծ Հայքը (առանց Ծոփքի) և նրա կողմից գրաված Կորդուքը և Միջագետքը։

Տիգրանի լայնածավալ նվաճումները և Հայաստանի ընդարձակումը մինչև Միջերկրական ծովը, ստեղծել էին նոր՝ հարավային Անդրկովկասի սերտ շփման համար Ասորիքի և Միջագետքի հելլենիստական կենտրոնների հետ։ Թեև Տիգրանի պետությունը կազմալուծվեր 69—66 թվերին, այդ ընդարձակ կապը հելլենիստական հարավի կուլտուրայի հետ ունենալու էր, անշուշտ, խոշորագույն նշանակություն Հայաստանի կուլտուրական և տնտեսական առաջընթացի համար։

Հին աղբյուրների մի շարք ցուցմունքներից երևում է, որ Տիգրան Մեծը, որ շրջապատված է եղել հունական փիլիսոփաներով և գիտնականներով, աշխատել է ունեցել բարեփոխել Հայաստանը Հելլենիստական կուլտուրայի լայն արմատավորման և առևտրի, արհեստների ու արդյունագործության զարգացման միջոցով։

Այդ նպատակին հասնելու պետք է նպաստեր երկրի բնակեցումը քաղաքային առևտրական-արդյունաբերական բնակչությամբ ուստի և նա, գրաված հարավային պետություններից, գաղթեցրել էր այստեղ մեծ թվով գաղթականներ, գերազանցորեն քաղաքի բնակիչներ, որոնք տեղավորված են եղել իրենց զույգով նոր հիմնադրված Տիգրանակերտ քաղաքում և Հին Հայաստանի մյուս կենտրոններում։

Ինչպես երևում է աղբյուրների ցուցմունքներից, Սելևկյանների մայրաքաղաքների օրինակով, Տիգրանակերտը պետք է լիներ հելլենիստական գիտության, արվեստի և գրականության կենտրոններից մեկը։ Հայաստան է հրավիրված եղել Ամփիկրատեսը, այդ ժամանակվա ականավոր գրող և հռետոր, որը աքսորված է եղել Աթենքից. հրավիրված է եղել Սկեպսիսից՝ Միտրոդորոսը, պոնտական թագավորության քաղաքական գործիչ և հայտնի փիլիսոփա, որին Պլինիոսը անվանում է «Հռոմայեցիների ատելին», և որը եղել է Տիգրանի ամենամոտ խորհրդականներից մեկը և գրել է նրա պատմությունը, որ, դժբախտաբար մեր ձեռքը չի հասել։ Տիգրանակերտում գտնվել է, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը, թատրոնական խումբ, որը հրավիրված է եղել Տիգրանի շինած թատրոնի բացման համար։ Թե որքան խորն է եղել հելլենիզմի և հույն լեզվի ազդեցությունը հասարակական բարձր խավերի վրա, երևում է նրանից, որ Տիգրանի որդին և նրա հաջորդ Արտավազդը գրել է հունարեն լեզվով տրագեդիաներ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը, Պլուտարքոսի վկայությամբ, եղել են նրա ժամանակը։

Հին Տիգրանակերտը, որ պետք է դառնար Տիգրանի պետության քաղաքական և կուլտուր-տնտեսական կենտրոնը, գտնվում էր, ինչպես արդեն վերջնականապես որոշված է գիտնականների մանրազնին հետազոտություններով, Տիգրիս գետի հյուսիս, այժմյան Ֆարկինի տեղում։

Տիգրանի պետության անկման հետևանքով, Հայաստանում արդյունագործության և առևտրի զարգացումը չէր կարող այլևս շարունակվել նույն թափով, որովհետև Հայաստանը, հաստատվելով իր նախկին սահմաններում, կորցրել էր իր կապը հելլենիստական հարավի կուլտուրական երկրների հետ և, բացի այդ, նրա նոր մայրաքաղաք Տիգրանակերտը ավերված է եղել Լուկուլլոսի զորքերի կողմից և բնակիչները ցրված և բռնությամբ(?) դատարկվել էր.

Տիգրանյան Հայաստանի քաղաքական և հասարակական կարգերի մասին կան աղքատիկ կամ անուղղակի ու անորոշ տեղեկություններ՝ Պլուտարքոսի, Տակիտոսի և Պլինիոսի մոտ։

(Շարունակելի)

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

# ՊԱՐԱՐՎԵՍՏԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

*Պատմական Հայաստանի արվեստների ուսումնասիրության մեջ պարը ամենից քիչ է արժանացել մեր բանասերների ուշադրության։ Եթե ճարտարապետության, քանդակագործության, նկարչության հին և միջին դարերից մեր օրերն հասած նյութական հիշատակարաններն այսօր էլ պայծառ կերպով վկայում են իրենց գոյության մասին և առատ նյութ են տալիս հայ կուլտուրայի պատմությանը, ապա երաժշտությունը և պարարվեստը չեն թողել և չէին կարող թողնել կերպարվեստների պես իրական, նյութական հիշատակարաններ, բացի մի քանի երաժշտական գործիքների և պարերի շատ հազվագյուտ բարելիեֆներից ու նկարներից. այնպես որ մեր ժամանակի բանասիրությունն այդ ուղղությամբ պրպտումներ կատարելու և նյութն ուսումնասիրելու համար պետք է դիմի գլխավորապես պատմական գրավոր աղբյուրների և ապա սերնդից սերունդ մեր ժամանակին հասած կենդանի վկայությունների։*

*Մեր պատմիչները, ինչպես շատ ուրիշ ազգերի հին պատմագիրներ, իրենց մատյաններում մեծագույն չափով զբաղվել են երկրի պետական-քաղաքական կյանքով, թագավորների, նախարարների և իշխանների ինտրիգներով ու նրանց վարած անվերջ պատերազմներով արտաքին ներխուժումների դեմ, լուսաբանելով նույնիսկ այդ բախումների տնտեսական և այլ պատճառները։ Ժողովրդական զանգվածների, հասարակական շերտավորումների փոխհարաբերությունը, կուլտուրական կենցաղը և առհասարակ ֆոլկլորը գրեթե դուրս են մնացել նրանց տեսողության շրջանակից. հազվագյուտ տեղեկություններ միայն, այն ևս հարակից քաղաքական ու եկեղեցական իրադարձությունների, գտնել կարող ենք նվիրված կուլտուրական կյանքի այս կամ այն երևույթին։*

*Պարարվեստն ինչպես ուրիշ հին ազգերի մեջ, այնպես էլ Հայաստանում, գոյություն է ունեցել շատ վաղ, դեռես նախաքրիստոնեական, կամ, ինչպես ընդունված է ասել, հեթանոսական դարերում։ Մենք էլ մեր ուսումնասիրելի նյութին մոտենում ենք ժամանակագրական այսպիսի բաժանումներով՝ ա) հնագույն շրջան (հեթանոսական դարեր), բ) վաղ քրիստոնեական և միջին դարեր, գ) վերջին դարեր։*

## Ա. ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

*Եթե Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի դարաշրջանում իր հնագույն պատմությամբ զուտ արևելյան երկիր էր և իր նահապետական կենցաղով համեմատաբար ավելի ինքնամփոփ, ապա Ալեքսանդր Մակեդոնացու ռազմական արշավանքներից հետո Սելևկյանների օրով, և ապա Պարթևական ու Սասանյան Պարսկաստանի դարերում, կարելի է ասել դառնում է կես արևելյան և կես արևմտյան պետություն, միաժամանակ հաղորդակից լինելով նաև հույն-հռոմեական կուլտուրական կյանքին՝ Ասորիքի և Կապադովկիայի վրայով։ Աշխարհագրորեն գտնվելով այն ժամանակի հարևան մեծ պետությունների՝ միահեծան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության շահերի ու բախումների միջև, հայ թագավորներն ու նախարարները իրենց օրիենտացիայով մեկ այս, մեկ այն կողմն էին հակվում, նայելով իրերի դրության։ Այսպիսի քաղաքական իրադարձությունների հարաբերությամբ բնական է դառնում որոշ փոխազդեցություններ Արևելքից և Արևմուտքից տարբեր դասե-*

---

** Ականավոր արվեստագետ Գարեգին Լևոնյանի արժեքավոր այս ուսումնասիրությունը խմբագրությանն է տրամադրել հանգուցյալի այրին՝ տիկին Բիժա Լևոնյանը։*

րի» թե՛ կենցաղի և թե՛ արվեստների վրա։ Եթե գրքի ազդեցությունները ակնհայտ են հայ հեթանոս աստվածների պանթեոնում, ճարտարապետության ու քանդակագործության վրա, եթե Տիգրան Բ-ի և Արտավազդ Բ-ի տերության մայրաքաղաքներում՝ Արտաշատում և Տիգրանակերտում հույն դերասանների ներկայացումներ էին տեղի ունենում, ապա ժամանակի հայկական պարարվեստը չէր կարող հետ մնալ այս ազդեցություններից։ Սակայն խոսել այն մասին, թե մեր հնագույն պարերի ո՞ր տեսակներն են եկամուտ, ո՞ր տեսակները՝ տեղական, հայկական, այդ արդեն շատ դժվար է և նույնիսկ անհարկի։ Մեր պատմիչների հաղորդած տեղեկությունների համաձայն, մենք հնարավորություն ունենք հայկական հնագույն պարերը բաժանել հետևյալ կարգերի.

1. **Մեհենական և կրոնական պարեր.** Պարը որպես կրոնական ծիսակատարության մաս Աշտիշատի պարերը տեղի էին ունենում մեհյանի ներսում, սկզբում խորհրդավոր, ծանր, ապա և ավելի աշխույժ. պարում էին սպիտակազգեստ քրմերը, պարում էին և բագինի շուրջը հավաքված հավատացյալները՝ մեծ պատկառանքով և երկյուղածությամբ։ Աշտիշատի պարերն ավելի հանդիսավոր էին լինում տոնական օրերին, երբ ներկա էին լինում իրենք թագավորը, պալատականները ու նախարարական տները։

1917 թվականին Սարիղամիշում գտնված մի քանի բրոնզե արձանիկների մեջ հայտնաբերվեցին պարող ֆիգուրներ։ Այդ արձանիկների մասին իր գրած հոդվածում Ս. Վ. Բեզսոնովը նրանց բաժանելով չորս խմբի, գտնում է, որ բոլորը միասին ներկայացնելիս են եղել հայ հեթանոսական շրջանի մի կրոնական ծիսակատարության։ Չորրորդ խմբի ֆիգուրներն արդեն որոշ կերպով արտահայտում են պարի շարժումներ։ Ձեռները մեկնած են, իրանը կորացած, մի ոտը բարձրացրած պարի համար։ Հավանական է, որ այդքան հեռավոր ժամանակաշրջանի մի արվեստագետի հաջողվել է այդքան պարզորոշ արտահայտել պարի պահած ձևը։ Եվ ահա այդ շարժումներից ու կիսաշրջաններից մենք պատկերացնում ենք այնպիսի մի տեսարան. աստվածությունը վեհորեն կանգնած է պատի մոտ պատվանդանի վրա, նրա առջև, ձեռները տարածած, կանգնել է գլխավոր գործող անձը՝ թերևս քուրմը, և երկու պարողներ, որ պաշտամունքի սպասավորներ են, իսկ կողքերին, պատերի տակ, կանգնած են աղոթողները կամ հանդիսատեսները, որոնք այնքան ոգևորված են պարերով, որ թվում է, թե ահա իրենք էլ կմասնակցեն պարին»[1]։

Եթե հետագայում քրիստոնեության սկզբնում Հայոց Եկեղեցու հիմնադիրները եռանդուն կերպով կործանել են այն ամենը, ինչ որ հեթանոսական էր, պատմական Հայաստանի հողի վրա երևան եկած արձանիկները փրկվել են այդ կործանումից և այսօր իրենց պատմա-հնագիտական մեծ արժեքով գալիս են իրական կերպով հաստատելու մեհենական-կրոնական պարերի գոյությունը հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանում։

Մենք այնպես ենք կարծում, որ Բայինում երևան եկած մի հնագույն կոթողի (ստելեի) պատվանդանը նույնպես մնացորդ է հայ հեթանոսական շրջանից։ Այդ պատվանդանի վրա քանդակված են երկու տանական միասնավոր ֆիգուրներ՝ հոգևորականի զգեստով։ Նրանք պատկերացնում են պարի տեսարան, քանի որ երևում է, որ պարը լուրջ է, ծանր և հանդիսավոր, առանց համարձակ շարժումների։ Քրմեր չե՞ն արդյոք այդ մարդիկ, որ մի-մի ձեռքերը պահած միմյանց, մյուս ձեռքերով աղոթքի գիրք են բռնել. այլապես քրիստոնյա շրջանում ո՞վ կհամարձակվեր այդպես ծաղրել եկեղեցու հայրերին, նրանց պատկերելով ծիծաղելի գրության մեջ, այն էլ շիրմաքարի վրա։ Մեզ համար որոշ հիմք են ծառայում թե՛ Բայինում և թե՛ Դարբանց գյուղում (Շիրակ) հեթանոսական շրջանից մնացած այն կոթողները, որոնց լուսանկարներն առաջին անգամ հանել է ճարտարապետ Թորամանյանը և մի երկուսը տպագրության հանձնել «Գեղարվեստ»-ի 6-րդ գրքում։ Համենայն դեպս այս քանդակապատկերի մասին վերապահությամբ հայտնելով մեր կարծիքը, մենք այդ կարծիքներ լսելու համար սպասում ենք բանասիրության նոր խոսքին։

2. **Ազգային-ծիսական պարեր.** Կրոնական-տոնախմբական պարերից հետո նախաքրիստոնեական Հայաստանում գոյություն են ունեցել ազգային, սովորութենական պարեր, որոնք տեղի էին ունենում վառվող կրակի շուրջը, բացօթյա, տարեկան մի անգամ, ի պատիվ Միհր աստծու, որի մեհյանը անշեջ ատրուշանով գտնվում էր Դերջանի Բագայառիճ գյուղում։ Պարերը խմբական էին։ Պարողները շուրջպար էին բռնում կրակի շուրջը և ապա թռչկոտում նրա վրայից։ Այս սովորությունը շարունակել է Հայաստանում քրիստոնեության ոչ միայն առաջին դարերում, այլև անցնելով ամբողջ 1.700 տարի,

---

1. Ս. Վ. Բեզսոնով, «Բրոնզե արձանիկներ Սարիղամիշից», «Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտ. և արվ. ինստիտուտի», 1930 թ., № 4.

հասել է մեր օրերը։ Եկեղեցու Հայրերը չկարողանալով ժողովրդի միջից վերացնել հեթանոս սովորությունը, կապել են քրիստոնեության հետ, նաև հրեշտակների հետ։ Միջնադարում գրված մի «Տօնապատճառ»-ի մեջ ահա ինչպես է նկարագրվում այդ հանդեսը. «Մանկունք և ծերքն և երիտասարդքն յըջապատեալ զբոցովն, շուրջ գան, ծպտեալ իբր սերովբէքն սաւառնեալ թեօքն և գոչեն «Տէր ընդ այս է»։

Անկասկած այստեղից էլ ծագել է Տերընդառ կամ Դեռընդեզ ժողովրդական բառը, որը նույնացվել է կամ միացվել Տյառնընդառաջի տոնին։

Ազգային-ծիսական պարերն ավելի ճոխ, ավելի հարուստ, համաժողովրդական, տեղի էին ունենում Հայոց Նոր տարուն, ամանորին։ Նոր տարին հին Հայաստանում սկսվում էր հայկական առաջին ամսի՝ Նավասարդի 1-ին, որ զուգադիպում էր այժմյան ամիսներից օգոստոսի 11-ին (23-ին)[2]։ Այսպիսով հացարույսերի, ամեն տեսակ պտուղների և մրգեղենի հասուն և առատ ժամանակում էին կատարում Նոր տարվա տոնը հայ ազատ ու շինականը, երկրի ամեն կողմերից համախմբվելով Բագրևանդ գավառը (Ալաշկերտ), Վանատուր «հյուրընկալ» աստծու մեհյանի շուրջը ընծայաբերելու իրենց նվերները (հացարույսեր, պտուղներ, արջառներ) զվարճական խաղերի, երգի ու նվագի և պարի հետ միասին։

Ամանորի տոնական հանդեսները տեղի էին ունենում նաև «կեցուցիչ և սնուցիչ» Անահիտ աստվածուհու մեհյանների շուրջը Արտաշատում, Արմավիրում, Երիզայում (Բարձր Հայք) և, ամենից ավելի ճոխ, Աշտիշատում (Տարոն)։ Վերջին տեղում էր գտնվում Անահիտի ոսկեձույլ արձանը, դրա համար և աստվածուհին ստացել էր ոսկեմայր, ոսկեծին անունները։ Այստեղ էին նաև «վիշապաքաղ» Վահագնի և Աստղիկ դիցուհու մեհյանները։

Վաղ առավոտյան, երբ քրմերը գլխավոր մեհյանի ներսում վերջացնում էին իրենց կրոնական արարողությունը, դուրս ժողովուրդն ուրախական բացականչություններով բաց էր թողնում սպիտակ աղավնիներ և վարդեր շաղ տալիս Աստղիկի մեհյանի շուրջը, ապա ջրախաղեր սարքում, միմյանց վրա ջուր ցանում։ Այս ծիսական սովորությունների կատարումից հետո սկսվում էին խաղերն ու պարերը։ Պարող երիտասարդ տղաներ և աղջիկներ, խմբերի բաժանված, ձեռքերում բռնած հաղնիի կամ ուռենու ճյուղեր, զուռնաների, բամբիռների նվագակցությամբ վազ էին տալիս մի քանի անգամ (վազք), ապա պարում ազգային-ժողովրդական տեսակ-տեսակ պարեր՝ կայրք, դուցք, սարանցիկ և այլն։

Վենետիկյան հրատարակություններից մեկում այս հանդեսների մասին կարդում ենք հետևյալը.

«Ներկայանային հայոց թագավորն, մեծ քրմապետը, նախարարները, մեծամեծ իշխաններ և ժողովրդական բազմությունք և մեծեն մինչև փոքրը, ամենքը, կմատուցանեին իրենց ընծերը։ Նոր տարին իրեն հետ կբերեր նաև նոր կյանք և Հայաստան պարտական էր այդ տոնախմբության ժամանակ յուր աստվածոց ցույց տալ յուր անցած տարվան հառաջդիմության պտուղները. Վահագն քաջություն կպահանջեր, Անահիտ՝ արվեստ, իսկ Աստղիկ՝ սեր և բանաստեղծություն։ Հոն կկատարվեին հանճարի և քաջության մրցությունները։ Բանաստեղծն յուր հորինած երգը կերգեր, երաժիշտը յուր բամբիռը կզարներ, ըմբիշը ցույց կուտար յուր բազուկներու զորությունը, իսկ վարպետը՝ յուր գեղարվեստի արդյունքը։ Կլինեին պարանամարտություններ, արշավանքներ կառքով, ձիով և ոտքով։ Հաղթողները կստանային այն վարդյա պսակները, որոնցմով զարդարված կլինեին նույն օրը Աստղկան տաճարը. այս պատճառով այս տոնախմբությունը կկոչվեր Վարդավառի տոնախմբություն։ Հին տարվա մեղքերը քավելու և նորը մաքուր սկսելու համար նույն օրը կկատարվեր նաև ընդհանուր մկրտություն մը։ Քրմապետը ոսկյա ցրնցուղով կառներ Արածանիի սուրբ ջուրը և կսրսկեր բազմության վրա և ապա բոլոր ուխտավորները ալ միմյանց վրա ջուր կսրսկեին, այդ միջոցին օդը կլեցվեր անթիվ սպիտակ աղավնիներու բազմությամբ, ամեն ուխտավորը կթռցնեին մեկմեկ աղավնի («Բնաշխարհիկ բառարան», հատ. Ա, էջ 232)։

2. Հին հայկական ամիսներն էին՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկի, Արեգ, Ահեկի, Մարերի, Մարգաց, Հրոտից. թվով 12, յուրաքանչյուրը 30 օր, ընդամենը 360 օր. և որպեսզի տարվա 365 օրը լրանար, կար և մի լրացուցիչ ամիս՝ Ավելյաց, որ ուներ 5 օր, և նահանջ տարիներին՝ 6 օր։

3. Հետագայում Հայաստանում քրիստոնեության հիմնադիրները այս հեթանոս սովորությանը վերջ տալու համար Ամանորի տոնը նույնացրին Քրիստոսի Այլակերպության տոնի հետ։ Աշտիշատի կործանած կռատունների տեղում շինեցին Հովհաննես Մկրտչի անվան եկեղեցի, իսկ հայ ժողովուրդը երկար դարեր պահեց Վարդավառին միմյանց վրա ջուր սրսկելու սովորությունը։

Ահա այսպիսի հանդեսներն են, որ, ըստ գուսանական երգի, հիշում է Արտաշես Բ.-ն իր մահվան անկողնում ասելով.

«Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի և
զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարգելն
եղջերուաց...»։

Որքան զարմանալի է, որ անցյալ դարի վերջերին Սիսիանում դեռևս նոր տարվա տոնը տոնում էին ոչ թե հունվարին, այլ՝ Նավասարդի 1-ին։ Այդ մասին վկայում է ազգագրագետ Երվանդ Լալայանը. «Նավասարդի 1-ը սիսիանցիների համար այժմ էլ համարվում է տարեմուտ։ Բարեկամները միմյանց մոտ են գնում և շնորհավորում են նոր տարին։ Ամեն տան անպատճառ հարիսա է գնում. այս օրվա հատուկ կերակուրն այդ է։ Նշանած աղջկան սկեսուրը բերկույց, մրգեր և չորցրած են ուղարկում» («Ազգագրական հանդես», Գ. էջ 250)։

3. Հարսանեկան և կոչունքի պարեր. Զվարթ, աշխույժ, սրտախորսական պարեր էին տեղի ունենում արքունի և նախարարական խնջույքներին, կամ, ինչպես այն ժամանակ ասում էին, կոչունքների ժամանակ, ապա-վեն և հարսանեկան հանդեսներին։ Պալատում կամ իշխանական ապարանքներում այն մեծ դահլիճը, ուր տեղի էին ունենում կոչնականների ընդունումը տանտիրոջ կողմից և խնջույքի կերուխումը, կոչվում էր տաճար։ Տաճարի պատերին կից, փափուկ բազմոցների վրա, բազմում էին հյուրերը ըստ առավելության, նրանցից յուրաքանչյուրը ձախ թևով հենված թիկնելով իրեն հատուկ բարձի վրա։ Տաճարի մի կողմում, որոշ բարձրության վրա, նստում էին գուսանները, իրենց բամբիռներով, երգ ու նվագով ուրախացնելու կոչնականներին։ Երբ ճոխ կերուխումից ու գինու ազդեցությունից նրանց տրամադրությունը բարձրանում էր, հանկարծ տանտիրոջ տված նշանով ներս էին մտնում պարուհիները, կաքավիչները, դեզավորները, խաղալիկները և դահլիճի մեջտեղի ազատ տարածության վրա սկսում էին իրենց նազելի պարերը։ Վերևում նստած գուսանները լռում էին. խաղ ու պարի համար կային առանձին կատակագուսաններ, որոնք տակտի համար նվագում էին դափ-րափող և թմբուկ։ Իրենք էլ միաժամանակ պարում, թռչկոտում և կատակներ էին անում։ Ամենից հետո ներս էին մտնում վարձակները, պրոֆեսիոնալ պարուհիներ, թեթև շղարշով փաթաթված և մատներին ոսկերիկներ անցկացրած, ու սկսում էին պարել։

Հարսանիքների ժամանակ պարում էին ոչ միայն հրավիրվածները, այլև դրսից եկած կողմնակի մարդիկ՝ կամ միջանցքներում, կամ դուրսը, որովհետև ցույց տան իրենց խնդակցությունն ամուսնացող զույգին[1]։ Ագաթանգեղոսի վկայությամբ, երբ Տրդատ թագավորը բանի իր պալատն է բերել տալիս գեղեցկուհի կույս Հռիփսիմեին իր կնության համար, անմիջապես սկսել է երգը, խաղն ու պարը ոչ միայն արքունիքում, այլև միջանցքներում և դուրսը.

«Արդ իբրև եկն եմուտ նա (Տրդատ) ի ներքս, առհասարակ մարդիկն, ամենայն արտաքոյ ապարանիցն, կէսքն ի փողոցս ի ներքսագոյնսն առհասարակ երգս առեալ բարբառեցան կայթիւք փողելով ցոյց բարձեալ մարդկանն. կէսքն ի բերդամիջին և կէսք դրսաքարամէջն լցին խնդութեամբ. առհասարակ համարէին հարսանեացն զպարսն պարել զհարսան յարգորեալ» (Ագաթ., ԺԱ)։

Մի իշխանական կոչունքի և այնտեղ պարող վարձակ Նազենիկի մասին հիշատակություն ունի Մովսես Խորենացին (Բ, կգ)։

Մեծ խնջույք է Այունյաց նահապետ Բակուրի ապարանքում. այդ խնջույքի պահին անսպասելի կերպով հեռավոր տեղից հյուր է գալիս իշխան Տրդատ Բագրատունին, Տիրան Բ թագավորի փեսան, որ փախչում է Մարաստանից։ Տանտերը սիրով ընդունում է Տրդատին և բազմեցնում կոչնականների մեջ, մի պատվավոր տեղում։ Խնջույքի տաք ժամանակը ներս է մտնում Բակուրի գեղեցկուհի վարձակը՝ Նազենիկը և սկսում է իր պարը հիացմունք պատճառելով բոլորին։ Տրդատը տարվելով նրա պարով և գեղեցկությամբ, կես հրամայական, կես խնդրական ձևով դիմում է Բակուրին՝ ասելով. «Տուր ինձ զվարձակս զայս»։ Նա մերժում է. «Ոչ տամ», զի հարճ իմ է»։ Այն ժամանակ համարձակ և ֆիզիկապես մեծ ուժի տեր Տրդատ Բագրատունին խլում է Նազենիկին և զոռով քաշելով, ձի է նստում ու փախչում (տե՛ս նաև Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հատ. Ա, էջ 353)։

Արևմտահայ բանաստեղծ Դանիել Վարուժանը այս նյութն առնելով իր «Հեթանոս երգեր»-ում կերտել է մի հոյակապ պոեմ՝ «Հարճը», վառ և գունեղ կերպով նկարագրելով իշխանական ապարանքի, կոչունքի, Նազենիկի ու պարի ամեն մանրամասնությունը.

1. Այդպիսի սովորություն մինչև վերջերս կար մեր գյուղական հարսանիքների ժամանակ. երբ լսվում էր Զմրուխ-զուռնայի ձայնը, հարևան տներից դուրս էին գալիս երիտասարդներ, հասած-հասած աղջիկներ և տղաներ, և դուրսը կամ կտուրներին սկսում էին պարել։

վարպետորեն և դարին ու միջավայրին հարազատ պատկերելով նաև Բակուրի և Տրդատի կերպարները։

4. Սուգի և հուղարկավորության պարեր. Այս կարգի պարերը շատ հին ծագում ունեն։ Հին Եգիպտոսի քանդակների վրա պատկերված կան հուղարկավորության այնպիսի տեսարաններ, որտեղ հուղարկավորներից ոմանք նվագում են և պարում։ Հայաստանի հեթանոսական դարերում կային հատուկ լալկան կանայք, որոնք հուղարկավորության թափորի հետևից հեռարձակ գնալով բարձրաձայն լաց էին լինում, կոծում, ճիչեր արձակում, մեջքընդմեջ պարելով և պտույտներ կատարելով։ Պարում էին նաև թափորին մասնակցողներից տղամարդ և կին դեմ առ դեմ։ Ինչպես երևում է, 4-րդ դարում քրիստոնեությունն ընդունելուց հետո էլ այդ հեթանոսական սովորությունը դեռևս մնացած է եղել Հայաստանում, որին արդելք է դրել ժամանակի քահանայապետը՝ Ներսես Պարթև. այդ երևում է Փավստոս Բյուզանդի խոսքերից.

«Այլա յետ մահուանն Ներսէսի, յորժամ զմեռեալսն լային փողովք և փանդռօք և վնօք և զկոծսն պարուցս կաքաւելով արք և կանայք... պարուք դէմ ընդ դէմ հարկանելով զմեռեալսն ուղարկէին» (Փավստոս Բյուզանդ, Ե, լա)։

Նույն արգելքը ավելի օրինականացած ենք տեսնում 5-րդ դարում Շահապիվանի ժողովի (447 թ.) մշակած կանոնագրության մեջ։ 11-րդ հոդվածով նզովքի են ենթարկվում նրանք, ովքեր «կոծ դնեն մեռելոց»։ Նրանց մի տարի արգելվում է եկեղեցի մտնելը, պահանջելով նաև հիսուն կամ հարյուր դրամ տուգանք («Կանոնագիրք Հայոց», էջ 68)։

Սակայն ո՛չ սպառնալիքները և ո՛չ տուգանքները չեն կարողացել վերջ տալ մահացողի հուղարկավորության ժամանակ կոծելու և պարելու հին սովորությանը. այդ տեսնում ենք մինչև իսկ Զաքարիա Ձագեցու օրերում (9-րդ դար)։ Սյունյաց մեծ սեպուհ իշխանը՝ Վասակ Գաբուռը մեռնում է երիտասարդ հասակում։ Նրա կինը՝ Մարիամը, որ Աշոտ Բագրատունու աղջիկն էր, մեծ հանդեսով և արքայական պատիվներով կատարում է ամուսնու թաղման հանդեսը, որին ներկա է լինում և Զաքարիա կաթողիկոսը։ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, այդ ժամանակ տեղի են ունեցել հուղարկավորության պարեր։

Եթե հեթանոսական դարերի մեջ մինչև այստեղ հիշատակված պարերը գլխավորապես վերաբերում էին բարձր դասերին, ապա մեզ մնում է պրպտումներ անել տեսնելու, թե եղե՞լ են արդյոք ժողովրդական-շինական պարեր, ուրախացե՞լ են երբևիցե երկրագործն ու ռամիկը և ունեցե՞լ են արդյոք իրենց հատուկ պարերը։

4-րդ դարի սկզբում քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն էր արդեն, ավելի շուտ, քան Բյուզանդիայում։ Հեթանոսական կյանքի շատ սովորություններ ու ծեսեր, ինչպես նաև երգեր ու պարեր, դեռևս բավական ժամանակ մնում են անմոռանալի թե՛ բարձր շրջաններում և թե՛ ժողովրդական զանգվածների մեջ։ Եկեղեցու հայրերը, պաշտոնապես ջատագով նոր կրոնին, հայ հեթանոս հայրենի սովորությունները աշխատում են համակերպել քրիստոնեական վարդապետության պահանջներին։ Ներսես Պարթևը խափանելով մեռելի հուղարկավորության ժամանակ լաց ու կոծը և պարերը, հրամայում է, որ մահվան թափորները կատարվեն «սաղմոսիւք և օրհնութեամբ, կանթեղօք եւ մոմեղինօք» (Բյուզանդ, Ե, լա)։ Հոգևորականությունը խստագույն հալածանք էր սկսել թատրոնի, աշխարհիկ երաժշտության, երգ ու պարի դեմ։ Մեր հոգևոր պատմիչները գուսաններին, վարձակներին ու խաղարարներին անվանում են միայն ճացկատակ, խաղկատակ, իսկ նրանց երգ ու պարը լկտի, վավաշ, ճերանոս... Սակայն թագավոր, նախարար, զանազան կարգի ու աստիճանի ֆեոդալները անտես էին առնում այդ բոլորը, և դեռ կյանքի հարբեցության խնջույքներում, ի հաշիվ «վշտացեալ դեղուկի» խնջույքներ էին սարքում նույնիսկ վանքերում։

«Եւ քաղում հատեալ արբշռութեան զԱստուծոյ տաճարան այնպէն առնէին և երթեալ երկոքին եղբարքն (Պապ և Աթանագինես)... ըմպէին անդ գինի վարձակօք և գուսանօք և կատակօք, զաուրբ և զնուիրեալ տեղին քամահեալ կոխան առնէին»— գրում է Փավստոս (Գ, ժթ)։

(Շարունակելի)

ՎԱՀԱՆ ԱԲԵՂԱ ՊԱԼԱՐՓԱՐՅԱՆ

# ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆՅԱՆԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԽՈՍ

*Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կարկառուն և մեծավաստակ դեմքերից մեկն է հանդիսացել 19-րդ դարի վերջում և 20րդ դարի սկզբներում որպես մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա և հայրենասեր հոգևորական։*

*Այս հոդվածով մենք մտադիր չենք Օրմանյան պատրիարքի կենսագրության, աստվածաբանական ու բանասիրական և կամ եկեղեցական բազմաբնույթ գործունեության մասին խոսել և գրել, այլ ցանկանում ենք տալ ականավոր եկեղեցականի մեկ տարվա՝ 1888 թվականի ընթացքում Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում աստվածաբանություն դասավանդելու պատմությունը, նրա բարերար ազդեցությունը իր աշակերտների վրա՝ նրանց կրթական հոգևորական դաստիարակության գործում և մանավանդ նրա հեռացումը ցարական կառավարության միջոցով Էջմիածնից և առհասարակ Ռուսաստանից։*

*Պատմական նորահայտ փաստերը խոսում են այն մասին, որ Օրմանյանին ցարական կառավարությունը բռնի կերպով հեռացրել է Գևորգյան Ճեմարանից։*

*Լենինգրադի պետական կենտրոնական պատմական արխիվի № 821 ֆոնդում գտնվում են Օրմանյան [illegible] հեռացման մասին ցարական կառավարության պաշտոնական փաստաթղթերը, որոնք վկայում են, թե ինչու՞ կառավարությունը ցանկանում էր անպայման հեռացնել Օրմանյանին Ճեմարանից։*

*Օրմանյանին հեռացնելու համար Կովկասի քաղաքացիական բաժնի պետ Իշխան Դոնդուկով-Կորսակովը 1888 թվականի մարտի 20-ին ներքին գործերի մինիստր կոմս Դմիտրի Անդրեևիչ Տոլստոյին ուղղած № 187 գաղտնի գրությամբ մանրամասն շարադրում է Օրմանյանին հեռացնելու պատճառները։*

*Հրատարակության ենք տալիս իշխան Դոնդուկով-Կորսակովի 1888 թ-ի մարտի 22-ի № 2872 նամակը՝ ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա-ին։*

*Օրմանյանը այս հարցի կապակցությամբ գրում է. «Հունիս 27-ին շքավոր պաշտոնյա մը հասավ Պետերբուրգէ, Օրմանյանի և իրեն մտերիմ և կառավարության անհամակիր կարծված ոմանց հեռացումը պահանջելու համար»[1]։ Այդ պաշտոնյան գաղտնի խորհրդական Գիրսն էր, որին գործուղել էր ներքին գործերի մինիստրությունը։*

*1874 թվականին Ս. Էջմիածնում բացված Գևորգյան Ճեմարանը Գևորգ Դ կաթողիկոսի ամենանշանավոր գործերից մեկն էր այդ։*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն ունենալը հրատապ խնդիր էր։ Այդ տիպի դպրոց ունենալու ուղղությամբ աշխատանք կատարել էին նախորդ կաթողիկոսները, բայց հնարավոր չէր եղել գործական արդյունքի հասնել։*

*Գևորգյան Ճեմարանը շատ կարճ ժամանակամիջոցում բազմաթիվ աշակերտներ է ունենում, սակայն, ինչպես Օրմանյանն է ասում, Ճեմարանը «յուր իսկական նպատակին չծառայեց, որ էր ժառանգավորաց ճե–*

1. «Ազգապատում», հատոր Գ, Երուսաղեմ, 1927 թ., էջ 4882։

մասամբ ըլլալ և ուսումնական ու զարգացյալ հոգևորականներ պատրաստել. գի Հին Ժառանգավորաց Վարժարանը, որ Ճեմարանի բացման առեն առժամապես պահվեցավ, 1882-ին գոցվեցավ, բայց Գևորգի ժամանակ և ոչ մի շրջանավարտ կամ աշակերտ հոգևորականության չհետևեցավ[2]։

Գևորգյան Ճեմարանը, չնայած իր գոյության առաջին օրից չտվեց կուսակրոն հոգևորականներ, սակայն նա հետագայում հայ կուլտուրայի պատմության մեջ կատարել է պատվավոր դեր՝ տալով հայագետների, պատմաբանների, գրողների գեղեցիկ բույլ, ինչպես Ա. Մալխասյանը, Մ. Աբեղյանը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշները։ Ճեմարանը տվել է նաև իրենց կոչմանը գիտակից հոգևորականների մի պատկառելի սերունդ, որի ներկայացուցիչներն էին հանգուցյալ Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսը, Կարապետ Տեր-Մկրտչյան գիտնական եպիսկոպոսը, Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանը, Կոմիտաս վարդապետը և ուրիշները։

Ճեմարանը սակայն իր բնական դերի մեջ մտավ և սկսեց ծառայել իր նպատակին Մակար Ա կաթողիկոսի օրով, երբ լսարանական բաժնում Օրմանյանի ջանքերով սկսեցին դասավանդվել աստվածաբանական գիտելիքներ և ուսանողներ պատրաստվեցին հոգևորականության համար։

Մինչև Օրմանյանի գալը Ճեմարանում չկար աստվածաբանություն։ Դեռևս 1867 թվին Ներսես եպիսկոպոս Գալֆայանը, երբ Էջմիածին էր եկել եպիսկոպոսանալու, Գևորգ Դ-ին խոսք էր տվել, որ բացվելիք Ճեմարանում առնվազն երեք տարի կդասավանդի։ «Սակայն Կաթողիկոսի հետ Պետերբուրգ երթալէ ետքը պատճառանքով մը առժամյա բացակայության արտոնության առնելով, և անգամ մը Կոստանդնուպոլիս երթալեն ետքը այլևս չվերադարձավ[3]։

Գալֆայանի չգալու հետևանքով նորաբաց Ճեմարանի ղեկավարման գործը հանձնված է Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանին, որը այնքան էլ Ճեմարանով չէր մտահոգված, քանի որ նա Վրաստանի առաջնորդությունը պայման էր դրել։ Նա Թիֆլիս մնալով Էջմիածնի Ճեմարանն է սկսում ղեկավարել տեղեկատուների, ծանոթությունների և հրամանների միջոցով. դրա հետևանքն է լինում 1878 թվին Ճեմարանի երրորդ դասարանի ըմբոստացումը և ուսանողների խմբովին հեռացումը։

Ճեմարանի ուսումնական ծրագիրը Մուրադյան և Հայկազյան վարժարանների ծրագրի նմանությամբ էր կազմված, ավելի ընդհանուր, քան եկեղեցական ուսման ուղղությամբ, այնպես որ Ճեմարանը բոլորովին ձրի և ազատ միջնակարգ ուսումնարանի դեր է առնում։ Օրմանյան սրբազանը այդ մասին գրել է. «Եւ զարմանալու չէ, եթե ձրի երկրորդական ուսում առնելու և ազատաբար դուրս ելլելու պայմաններու ներքև աշակերտաց թիվը դյուրավ և տարապայման աճեցավ[4]։

Գևորգ Դ-ի օրով Ճեմարանը ոչ մի հոգևորական չտվեց և այդպես շարունակվեց մոտավորապես 18 տարի։

Մակար կաթողիկոսը Ճեմարանի հոգևոր կրթության մակարդակի բարձրացմանը և զարգացմանը հատուկ ուշադրություն է դարձնում։ Իր կաթողիկոսության առաջին իսկ տարվանից, Մակար կաթողիկոսը Ռուսաստանում գտնված անվանի դասախոսներին հրավիրել էր Ճեմարան դասավանդելու համար։ Դրանք էին Արշակ Նահապետյանը (հետագայում եպիսկոպոս), Մանդինյանը, Կարապետ Կոստանյանը, Սարգիս Գաբրիելյանը, Ստեփան Փալասանյանը, Միքայել Պապյանը և ուրիշներ, որոնք Նահապետյանի տեսչության օրով ծաղկեցրել էին Ճեմարանը։

Այս դասախոսները, սակայն, բոլորն էլ արտաքին գիտությունների մասնագետներ էին, իսկ կրոնական մասնագիտության և կրթության չունեին։ Ճեմարանին պակասում էր աստվածաբանության դասախոս։ Ինչպես երևում է Ճեմարանի մինչև 1888 թվի վերատեսուչների զեկուցագրերից և տեղեկագրերից, հազիվ թե Ս. Գրքի պատմությունն էր դասավանդվել դասարաններում, իսկ լսարաններում կրոնական առարկաներ համարյա չեն եղել։ Այդպիսով այս լուրջ հարցը կաթողիկոսի ուշադրությանն են ներկայացնում։ Մակար կաթողիկոսը հանձնարարում է Ճեմարանի վարչությանը՝ կարող մի անձնավորության գտնել և առաջարկել, որպեսզի ինքն էլ գործի հրավիրի նրան։

Ուսուցչական խորհուրդը երկար վարանումներից հետո տեսուչ Արշակ Նահապետյանի թելադրությամբ առաջարկում է Օրմանյանին, որի հետ ծանոթացել էր Կարինի Սանասարյան վարժարանի հիմնադրման ժամանակ։ Օրմանյանն այդ միջոցին Կարինի թեմի առաջնորդն էր և բարեբախտաբար Ս. Էջմիածին պետք էր գար եպիսկոպոսանալու։ 1886 թվին Օրմանյանին առաջարկվում է թողնել Կարինի առաջնորդությունը և մնալ Էջմիածնում որպես Ճեմարանի դասախոս։ «Նա,— գրում է Օրմանյան

2. Նույն տեղում, էջ 1242։

3. Նույն տեղում։

4. Նույն տեղում։

իր մասին,— աշակերտին հետ ի սրտի համակրելով միշտ, Հայրիկ կանչելով զինքը տալ... առանց վիճակին գիտակցության և առանց պատրիարքարանի հաճանության, սրբազան հրաժարական մը իրեն անունի կնքելով. ասոր զորեր կճանները կաթողիկոսին բարձր և մյուս անորինությանն»: Երկար բանակցություններից հետո կաթողիկոսի և պատրիարքի միջև, 1887 թվին գրված է Մակար կաթողիկոսի հրամայական կոնդակը: Երբ Օրմանյանն ստանում է այդ կոնդակը, ներկայացնում է իր հրաժարականը և անմիջապես մեկնում Ս. Էջմիածին ու նույն տարվա սեպտեմբերին ստանում Ճեմարանի աստվածաբանական ճյուղի դասախոսությունը երեք լսարաններում»:

Անտեղի չենք համարում վերատեսուչ Ա. Նահապետյանի 1887—1888 ուսումնական տարվա տեղեկագրից տալ գնահատականը Օրմանյանի մասին, ինչպես նաև նրա ավանդած դասերի թիվը: Նկարագրելով դասախոսների և դասերի բաժանումն ըստ դասարանների և լսարանների, նաև ավելացված աստվածաբանության առարկան, վերատեսուչ Նահապետյանը գրում է. «Իսկ լսարանների վերաբերությամբ ծրագիրը նշանավոր փոփոխության ենթարկվեցավ, որովհետև գերաշնորհ Տ. Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը աստվածաբանական գիտությանց ուսուցիչ և միանգամայն քարոզիչ նշանակվեցավ Ճեմարանում»:

Վերատեսուչ Նահապետյանի կազմած և «Արարատ»-ում հրատարակած տեղեկագիրդասացուցակից տալիս ենք նաև Օրմանյան սրբազանի պարապած դասերի ցուցակը.

«Տ. Մաղաքիա Եպիսկոպոս

| ունեցել է | պակաս է | ավելորդ | ընդամենը |
|---|---|---|---|
| 488 | » | 2 | 490»[6] |

Օրմանյան սրբազանը դասավանդել է հետևյալ առարկաները հետևյալ լսարաններում.

ա. Աստվածաբանական (բնական, տեսական և բարոյական)

Ա լսարան 2 դաս
Բ » 3 »
Գ » 5 »

բ. Քեմբասացություն

Ա լսարան 2 դաս
Բ » 2 »
Գ » 2 »

գ. Բացատրություն Ս. Գրոց

Ա Բ Գ լսարանք 2 դաս (միացյալ)

դ. Մեկնություն Ս. Գրոց

Գ լսարան 2 դաս

—

20»[7]

Ինչպես վերևում շեշտեցինք, Ճեմարանը մոտավորապես 18 տարի չէր ավել հոգևորականներ: Կաթողիկոսը և Ճեմարանի վարչությունը միշտ ջանացել են համոզել Ճեմարանավարտներին, որ հոգևոր կոչում ընդունեն, սակայն ոչ ոք չէր ընդառաջում նրանց հորդորներին: Տարիներն անցնում էին, հին ժառանգավորաց դպրոցը չկար, նոր միաբան չէր տալիս, ամբողջ այդ 18 տարվա ընթացքում դրսից միայն մեկ-երկու պատահական մարդիկ են ավելանում Մայր Աթոռի միաբանական շարքերում: Նոր, երիտասարդ, կրթություն ստացած հոգևորականների պահանջը օրավուր զգալի էր դառնում, իսկ Ճեմարանը ամուլ էր մնում: Երջանկահիշատակ Մակար կաթողիկոսն ու Ճեմարանի վարչությունը մեծ հոգսերի մեջ էին: Մյուս կողմից ցարական կառավարությունը պահանջում էր Ճեմարանի ծրագիրն ու կանոնագրությունը, հարցապընդում անելով, թե այդ ինչ հոգևոր Ճեմարան է, որ տարիների ընթացքում ոչ մի հոգևորական չի տալիս: Ճեմարանավարտներն էլ իրենց ուղղված հորդորների դեմ մեծ մասամբ այն էին առարկում, թե իրենց պատրաստված չեն զգում հոգևոր կոչման համար, մանկավարժություն, գրականություն էին ուսել: Ավարտողները կարող էին ուսուցիչ լինել, բայց կրոնական, եկեղեցական գիտելիքներ այնքան թույլ էին ավանդվել, որ ձգտում չէր առաջացել իրենց մեջ եկեղեցական ասպարեզն ընտրելու և ոչ էլ կարողություն զարգացրել այդ ասպարեզում գործելու: Եվ ահա այդ պակասը լրացրեց և վերոհիշյալ զորեղ առարկությունը մեջտեղից վերցրեց, զանազան դժվարություններ հաղթահարելով, աստվածաբանական առարկաների հրավիրված դասախոս, իր ժամանակի հայ եկեղեցականության մեջ ամենից ավելի հայտնի և գիտուն ու նվիրված աստվածաբան եկեղեցականը:

Օրմանյան սրբազանի ուշադրությունը և եռանդը լսարանների, հատկապես Գ լսարա-

5. «Արարատ», հատոր Գ., էջ 4591.
6. Նույն տեղում, էջ 624.
7. Նույն տեղում, էջ 621—622.

նի վրա է կենտրոնանում։ Նա կարողանում է ճեմարանականներին ներշնչել սեր դեպի եկեղեցին և դեպի հոգևոր ասպարեզը։ Մակար կաթողիկոսի գերագույն բաղձանքի իրագործումը՝ կուսակրոն հոգևորականների պատրաստման գործը երբ չէր հաջողվում, «Այդ նպատակն ալ Օրմանյանի հանձնվեցավ, որ հաջողեցավ 1888 հունիս 15-ին տեսուչ Նահապետյան և ճեմարանի ընթացավարտներեն չորսը կաթողիկոսին ներկայել ուխտերնին հայտնելու և օրհնությունը ընդունելու»[8]։

Օրմանյան սրբազանի այս գործունեության մասին պատմում է նաև մեր երջանկահիշատակ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը, որի վրա ևս ազդեցություն է ունեցել Օրմանյանը։ Նա միշտ իր խոսակցության մեջ պարծանքով էր հիշում Օրմանյանին և պատիվ էր համարում Օրմանյանին աշակերտած լինելը։ Հանգուցյալը պատմում էր, որ Օրմանյանը սեր արթնացրեց դեպի հայրենի բազմադարյան պատմություն ունեցող Եկեղեցին։ Այդ վկայում է նաև Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի նամակը. «Այսպես թե այնպես մենք բարոյական մեծ պարտականություն զգացինք այդպես վարվելու, և մի քանի շաբաթ շարունակ գտնվում էինք ոգևորության ու երիտասարդական վառ երևակայությունների մի այնպիսի շամանդաղի մեջ, որին մատչելի չէ ոչ մի հաշիվ, ոչ մի կողմնակի մտածում։ Հարկավ մեզ հետ ոգևորված էին ու շատ ուրախացած մեր տեսուչը (Ա. Նահապետյան), մեր ուսուցիչները, երջանկահիշատակ Հայրապետը. ամեն երեկո Օրմանյան սրբազանի շուրջը բոլորած՝ ծրագրներ էինք կազմում ապագայի համար, թե ինչպես պետք է շարունակենք եկեղեցական ու հայագիտական հրահանգություններ և ուսումնասիրություններ, ինչպես պետք է մի նոր միաբանության սկիզբը դնենք»[9]։

Կարապետ Տեր-Մկրտչյանը և նրա ընկերները խոստում են տալիս ու պատրաստություն տեսնում սարկավագ ձեռնադրվելու. սակայն հարկից ազատվելու համար անսպասելի կերպով նրանք մեկնում են իրենց ծննդավայրը՝ վերադառնալու մտադրությամբ, և ձեռնադրությունը հետաձգվում է։ Օրմանյան սրբազանը հենց այդ ժամանակ հեռացվում է Էջմիածնից։

«Էջմիածնի մեջ,— գրում է Օրմանյանը իր մասին,— յուր ցանած կրոնագիտական և եկեղեցասիրական սերմերը տակավ աճեցան, ճեմարանի ծրագրին մեջ հաստատվեցան աստվածաբանական ուսուցումներ, Օրմանյանի ներկայացած հինգ ընծայացուներեն հետևեալ երեքը պարագաներեն վհատանալով ետ քաշվեցան, բայց Ա. Նահապետյան տեսուչ և Կ. Տեր-Մկրտչյան ընթացավարտ ձեռնադրություն ստացան և հետևողներ ունեցան մյուս լսարաններեն, որոնք Գերմանիո համալսարանաց մեջ ալ կատարելագործվեցան, և ճեմարանական ընթացավարտ վարդապետներու ընտիր խումբ մը կազմվեցավ Մայր Աթոռի մեջ»[10]։

Օրմանյան սրբազանը ինչու է անտեսել այն իրողությունը, որ սարկավագ են ձեռնադրվել, բացի տեսուչ Արշակ Նահապետյանից և ընթացավարտ Կ. Տեր-Մկրտչյանից, նաև Գևորգ Չորեքչյանը և Գարեգին Հովսեփյանը։ «Արարատ»-ը այդ մասին գրում է. «Ամսույս 17-ը և 18-ը հունիս (1889 թ.) նշանավոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցան ի վաղուց ցանկալի ձեռնադրությունք Ս. Գայանեի վանքում՝ սրբագործությամբ գեր. Ներսես եպիսկոպոսի։ Ս. Էջմիածնի Ճեմարանը հընգետասանամյա երկունքից ետը ի վերջո տվեց երախայրիքը Հայ Եկեղեցուն և ազգին։ 17-ին առավոտյան սարկավագության աստիճան ստացան Ճեմարանի տեսուչ մեծահարգ Արշակ Նահապետյան և Ճեմարանի ուսումնավարտ պ. պ. Կարապետ Տեր-Մկրտչյան և Գևորգ Չորեքչյան ու երրորդ լսարանի ուսանող Գարեգին Հովսեփյանը»[11]։

Մեկ տարվա արդյունքները, ինչպես տեսանք, մեծ էին։

Ստորև տալիս ենք Օրմանյանի՝ Ռուսաստանից բռնի վտարմանը վերաբերող նորահայտ փաստաթղթերը։

8. «Ազգապատում» հատոր Գ, էջ 4584։

9. Երվանդ Տեր-Մինասյան, «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան», Մոսկվա, 1911 թ., էջ 7—8։

10. «Ազգապատում», հատոր Գ, էջ 4582—4583։

11. «Արարատ», 1889 թ., էջ 358։— «Էջմիածին», 1954 թ., № 3, էջ 28։

Հույժ գաղտնի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ
ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏ
ԿՈՎԿԱՍՈՒՄ
20 ապրիլի 1888 թ.
№ 187

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆԸ ԿՈՄՍ Դ. Ա. ՏՈԼՍՏՈՅԻՆ

*Ողորմած տե՛ր, կոմս Դմիտրի Անդրեևիչ*

*Անցյալ մարտի 8-ի № 212 նամակում Ձերդ Պայծառափայլությունը խնդրում է հաղորդել իմ վերջնական եզրակացությունը Օրմանյան եպիսկոպոսին Թյուրքիա հեռացնելու և հայ լուսավորչական դավանության պատկանող Էջմիածնի Հոգևոր ճեմարանի ու հոգևոր դպրոցների կանոնադրությունները կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին։*

*Ղեկավարվելով հենց նույն նկատառումներով, որ ձեզ հաճո է եղել հաղորդել ինձ, թե ցանկալի է մեր կողմից բարի հարաբերություններ պահպանել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ, ես միշտ գտնում էի իմ պարտքը համարեցի մի անգամ ևս մատնանշել Նորին Վեհափառությանը, որ ծագած թյուրիմացությունը հնարավոր է հանգիստ և խաղաղ լուծում տալ կառավարության պահանջը նրա կողմից համակողմանի կատարելու միջոցով։*

*Լիովին վստահ լինելով, որ Պատրիարքին հղած միանգամայն անկեղծ և բարի ցանկություններով լի իմ նամակը (որի պատճենը օգտակար եմ համարում ընդ սմին ուղարկել), բարեբար ազդեցություն կունենա, ինձ ավելի քան զարմացրեց—անախորժության պատճառեց Նորին Վեհափառության պատասխան նամակը (նույնպես սրան կցված), որի մեջ, հնազանդ և հեզ միջնորդի քողի տակ նա ցուցաբերում է համառություն և աներկյուղ պատրաստվում է պայքարելու կառավարության պահանջների դեմ վստահ լինելով, ըստ երևույթին, դրա հաջողությանը։*

*Օրմանյան եպիսկոպոսի նկատմամբ իր պահանջների բավարարման համար որպես հիմք Պատրիարքը հայտարարում է երկու փաստարկ. առաջինը՝ Կոստանդնուպոլսի մեր դեսպանի միջոցով Արտաքին գործերի մինիստրության կողմից իբր տրված թույլտվությունն է և երկրորդը՝ նրա պաշտոնակատար նախորդ հանգուցյալ Գևորգ Պատրիարքի օրինակը։*

*Սակայն հիմնվելով բազմաթիվ այն դեպքերի վրա, ըստ որում հայ հոգևոր բարձր աստիճանավորները յուրահատուկ կերպով են հասկացել կամ, ավելի շուտ, դիտավորյալ խեղաթյուրել են որոշ փաստեր, ես այժմ ևս հակամետ եմ ենթադրելու, որ Օրմանյանի՝ Ռուսաստան մտնելու համար միայն մեր Արտաքին գործերի մինիստրության կողմից տրված համաձայնությանը,— որի համար, թերևս, հենց ինքը Օրմանյանը կամ, մինչև իսկ Պատրիարքն է խնդրել՝ առանց գալու իսկական պատճառը բացատրելու,—Նորին Վեհափառությունը տալիս է այնպիսի նշանակություն, թե իբր, Օրմանյանին տրված է միանգամայն օրինական թույլտվություն Էջմիածնի ճեմարան պաշտոնի հրավիրվելու համար։*

*Ընդ սմին Պատրիարքի հետագա վկայակոչումները, որ նա բերում է որպես Օրմանյանի գործի վերաբերմամբ իր գործողությունների օրինականության և օգտակարության արդարացում, հակասում են ճշմարտությանը։ Նորին Վեհափառությանը պետք է շատ լավ հայտնի լինի, որ հանգուցյալ Գևորգ Պատրիարքի կողմից ճեմարանում պաշտոնավարելու համար Թյուրքիայից հոգևորականներ հրավիրելու դեպքերը, առանց որևէ, իբր, արգելքի հանդիպե-*

յու մեր քաղաքացիական իշխանությունների կողմից, եղել են խիստ ծայրահեղ կամայականության և օրենքի խախտման այն արտահայտություններից մեկը այդ Պատրիարքի կողմից, որի դեմ մեր կառավարությունը բազմիցս բողոքել է, թեպետև, ցավոք սրտի, ապարդյուն կերպով։

Սակայն, եթե ինձ բոլորովին անհայտ՝ Արտաքին գործերի մինիստրության վերոհիշյալ թույլտվությունը իսկապես կարող է մեկնաբանվել Օրմանյանին ճեմարանում պաշտոնավարելու թույլտվության իմաստով, ապա, գործը հարթելու նպատակով, մնում էր, թերևս, խնդրել բարձրագույն բարեհաճությունը՝ Պատրիարքի միջնորդությունը բավարարելու համար, վերապահում անելով, որ այդ արվում է որպես հատուկ բացառություն և անհրաժեշտ պայմանով, որպեսզի Օրմանյանը ռուսական հպատակություն ընդունի։

Բայց ընդ սմին ես չեմ կարող չմատնանշել Օրմանյանի անբասիրության վերաբերմամբ Նորին Վեհափառության հավաստիացման առթիվ, որ Պատրիարքին հայտնի են այդ հոգևորականի հակակառավարական գործունեությունը Թյուրքիայում և նրա քաղաքական ձգտումները, ապա և Պատրիարքի պնդումներն այն մասին, որ Օրմանյանը նշանակվի երիտասարդ սերնդի դաստիարակության և կրթության ղեկավար էջմիածնի ճեմարանում,—ցույց են տալիս, թերևս, որ նա ձգտում է շեղվել իր հոտի մասին բացառապես հոգևոր հոգատարություն ունենալուց և բռնել իր նախորդ Գևորգ Պատրիարքի գործունեության ուղին։

Ես չեմ կարող ընդ սմին Ձերդ Պայծառափայլության ուշադրությունը չհրավիրել Պատրիարքի կողմից ինձ ուղղված նամակի եզրափակիչ խոսքերի վրա, որոնք, կարծես, մատնանշում են չափազանց կարևոր, և, թերևս, ցավալի այն հետևանքները, որ կարող են ստացվել նրա խնդրանքը չկատարելու պարագայում, համապատասխան նաև բոլորովին լռություն պահպանելը կառավարության այն պահանջի մասին, որը վերաբերում է ճեմարանի և թեմական դպրոցների կանոնագրությանը ներկայացնելուն. լռություն, որը, ինչպես ինձ թվում է, դիտավորյալ բնույթ ունի՝ նա սպասում է Պատրիարքի ներկայացրած ապօրինի պահանջների կատարման ելքին։

Իմ կողմից ընդունելով, որ տվյալ գործում Պատրիարք-Կաթողիկոսի ապօրինի պահանջին զիջելը կարող է ծառայել միայն որպես անցանկանալի միջադեպ, որի տրամաբանական հետևանքը կհանդիսանա՝ որպես անհրաժեշտություն հետագայում ևս զիջումներ անելու ավելի կարևոր հարցերում, քան այս կամ այն անձին էջմիածնի ճեմարանում պաշտոնի նշանակելը, ինչպես, օրինակ՝ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերյալ միջնակարգ ուսումնական հաստատություններում կրոնը ռուսաց լեզվով դասավանդելու վերաբերյալ հարցերում և այլն, ես անհրաժեշտ եմ գտնում դիմել Պատրիարք-Կաթողիկոսին կառավարության պահանջներին ենթարկելու այն միջոցներին, որոնք Ձերդ Պայծառափայլությանը հաճո է եղել հաղորդել իմ նախնական եզրակացության առթիվ։ Համառ պահանջը այս հարցում, որը վերաբերում է օրենքով սահմանված կարգի կատարմանը, կհամոզեր Ամենայն Հայոց Պատրիարքին այն բանում, որ կառավարությունը, պատրաստ լինելով իրենից կախված բոլոր միջոցներով աջակցելու Նորին Վեհափառության բարի գործերին ու ձեռնարկումներին՝ նրան վստահված հոտի մասին հոգևոր հոգատարության սահմաններում,—միևնույն ժամանակ թույլ չի տա ապագայում կրկնել այն ապօրինի գործունեությունը, որով իրենց նշանավորեցին Նորին Վեհափառության պաշտոնակատար նախորդները։

Վերևում շարադրվածը ներկայացնելով Ձերդ Գերազանցության բարեհայեցողությանը, ես, որպես եզրակացություն, իմ պարտքն եմ համարում հայտարարել. 1) որ, ինչպես կբարեհաճեք տեսնել, իմ կողմից ձեռք են առնվել բոլոր միջոցները գործը հանգիստ կերպով հարթելու համար, միջոցներ, որոնք, ցավոք սրտի, բարենպաստ արդյունքի չհանգեցրին. 2) որ այսուհետև հարկադիր միջոցներ ձեռք առնելը կարող է առաջ բերել հայ բնակչության մեջ մտքերի սուր խմորում, ինչպես ամենևին էլ ոչ վտանգավոր և խռովություն հայ հոգևորականության մեջ, գլխավորապես, Էջմիածնում, որի հետևանքը կարող է լինել Մակար Պատրիարքի հանկարծակի մեկնումը Ռուսաստանի սահմաններից դուրս, կամ հրաժարումը իր գրաված բարձր պաշտոնից և 3) որ բարձրագույն ցուցումներն ի կատար ածելու համար, որոնք կխնդրարկվեն Ձեր կողմից, ես օգտակար կհամարեի Պետերբուրգից գործուղել միանգամայն ձեռնհաս, բարձր դիրք ունեցող մի անձնավորություն, որն օժտված լինի բավականաչափ լիազորություններով՝ հարկ եղած դեպքում Պատրիարքի և նրան շրջապատող խորհրդականների վրա պատկառելի ազդեցություն գործելու համար։

Խնդրում եմ Ձեզ, կնյազ, ընդունե՛ք խորին հարգանքս հավաստիքը և նույնպես նվիրվածությունը։

ԻՇԽԱՆ ԴՈՆԴՈՒԿՈՎ-ԿՈՐՍԱԿՈՎ

(ՍՍՌՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրադում, ֆոնդ 821, վավերագիր 134, 1888 թ., գործ № 103, թ. 1—5)

## ԿՈՎԿԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԱԿԱՐ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ 1888 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ

Սույն տարվա հունվարի 2-ի № 16 նամակում մանրամասնորեն հաղորդելով այն հանգամանքների մասին, որոնք ինձ դրդեցին առաջարկություն անել Էջմիածնի Սինոդին (1887 թ. նոյեմբերի 13, № 4986) հեռացնելու Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանին, որը Թյուրքիայից հրավիրվել է Էջմիածնի հոգևոր ճեմարանում աստվածաբանական գիտություններ ավանդելու համար, ես վստահություն եմ հայտնել, որ նշված դրդումների պատճառով Ձերդ Վեհափառությունը իր կողմից էլ կբարեհաճի ընդունել Օրմանյան եպիսկոպոսի անհապաղ Թյուրքիա վերադառնալու անհրաժեշտությունը, որի մասին ես, դրա հետ միասին և խնդրել եմ չմերժել պատշաճ կարգադրություն անել։

Սակայն իմ ստացած տեղեկություններից պարզվում է, որ Օրմանյան եպիսկոպոսը տակավին մնում է Էջմիածնում որպես հիշյալ ճեմարանի դասատու։ Մինչդեռ Ներքին գործերի մինիստրությունը տեղեկանալով, որ իմ հիշյալ նամակից Ձերդ Վեհափառությանը հայտնի՝ Օրմանյանին հեռացնելու վերաբերյալ կարգադրությունը մինչև այժմ չի կատարված, նկատի ունի, հետագա չեղումների դեպքում դիմել կտրուկ միջոցների մինիստրության օրինական պահանջների կատարման համար։

Անկախ դրանից, մինիստրությունը նաև մտադիր է առ ոտս Թագավոր Կայսեր ներկայացնել և նրա բարձրագույն հայեցողությանը թողնել հայ լուսավորչական գերատեսչությանը ենթակա Էջմիածնի ճեմարանի և թեմական դպրոցների կանոնադրությունները կառավարության հաստատմանը ներկայացնելու գործում շարունակվող ձգձգումները։

*Սակայն նախքան վերոգրյալ երկու հարցերի վերաբերմամբ որևէ միջոց ձեռնարկելը մինիստրությունը խնդրում է իմ վերջնական կարծիքը դրանց նկատմամբ։*

*Ձերդ Վեհափառությանը հայտնի է, թե ես որպիսի անկեղծությամբ եմ ընդունում Ձեր բարեկամական բարեհաճության զգացմունքների արտահայտությունն իմ նկատմամբ, որոնք ամեն անգամ ինձ իսկական հաճույք են պատճառել, որը և դրդում է ինձ այժմ և մի առանձին պատրաստակամությամբ տրամադրվել հանգիստ և բարեհաջող լուծում տալու առաջացող դժվարություններին։ Այդ նկատառումներով ես չշտապեցի մինիստրությանը հաղորդել ինձնից սպասվող կարծիքը և իմ բարոյական պարտականությունն եմ համարում նախապես ծանուցանել Ձեզ այդ մասին և խնդրել Ձերդ Վեհափառությանը՝ չզլանաք Ձեր կարգադրությամբ կանխել խիստ անցանկալի միջոցի ձեռնարկումը Օրմանյան եպիսկոպոսին հեռացնելու վերաբերմամբ և համապատասխան կարգադրել շտապեցնել հաղորդումը հոգևոր ուսումնական հաստատությունների ծրագրերի մասին հետագա ընթացք տալու համար։*

*Այնուհետև, ինչ վերաբերում է այն առարկաներին, որոնք շարադրված են անցյալ տարվա փետրվարի 27-ի և մարտի 21-ի №№ 105 և 151 գրություններում և որոնք վերաբերում են կառավարական ուսումնական հաստատություններում կրոնի դասավանդմանը և եկեղեցական-ծխական դպրոցներին, ապա Պետերբուրգում իմ վերջին անգամ եղած ժամանակ ես այդ մասին հարաբերության մեջ մտա Ներքին գործերի մինիստրության հետ, որը, իր հերթին, դիմեց Ժողովրդական լուսավորության մինիստրությանը։*

*Այդ գործերի շուրջը ծագած հարցերի վերջնական քննությանը ես չկարողացա սպասել Պետերբուրգում, բայց, կարծում եմ, քննությունը չի ուշանա և որոշ վստահացումներ ունեմ այն մասին, որ Ներքին գործերի մինիստրությունը ցանկանում է այդ հարցերը լուծել-վերջացնել լիովին բարենպաստ կերպով՝ համաձայնեցված հիշյալ երկու մինիստրությունների հայացքների, համապատասխան և Ձերդ Վեհափառության և իմ ցանկությունների հետ։*

*Հուսալով ամենակարճ ժամանակում ստանալ ծանուցում իմ սույն նամակին և ապավինելով Ձեր սուրբ աղոթքներին ու ամենախոր հարգանքի և մշտական նվիրվածության զգացմունքով պատիվ ունեմ լինելու Ձերդ Վեհափառության՝*

*Ստորագրեց՝ ամենախոնարհ ծառա* Իշխան Դոնդուկով Կորսակով։
*Ճիշտ է՝* Գործավար *(ստորագրություն)։*

*(ՍՍՌՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրադում, ֆոնդ 821, վավերագիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 6—7)*

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԱՄԵՆԱՀՊԱՏԱԿ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԴԻՐՍԻՆ ԷՋՄԻԱԾԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծության սեփական ձեռքով գրված է. «Համաձայն եմ»։
Իսկականի վրա ոյ. մինիստրի ձեռքով գրված է. «Համաձայն եմ։ 14 մայիսի։ Յալտա»։

*Կովկասում քաղաքացիական մասի գլխավոր պետը, կառավարության և Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի միջև վերջերս ծագած հակաճառությունների կապակցությամբ, անհրաժեշտ է գտնում Ներքին գործերի մինիստրության կողմից հավատարմատար անձ գործուղել Պատրիարքի հետ բանավոր*

բացատրությունների մեջ մտնելու այն հարցերի շուրջը, որոնք առիթ են տվել հիշյալ հակաճառություններին:

Այդ հարցերից ամենակարևորներն են.

1. Կովկասի կառավարական միջնակարգ դպրոցական հաստատություններում հայերին կրոնը ռուսաց լեզվով դասավանդելու մասին.

2. Հայկական եկեղեցական-ծխական դպրոցներում դասավանդման վրա կառավարական հսկողություն սահմանելու մասին.

3. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի և Կովկասի հայկական թեմական դպրոցների ծրագրերը կառավարության հաստատմանը ներկայացնելու մասին.

4. Թյուրքահպատակ Օրմանյան եպիսկոպոսին Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում դասավանդումը Պատրիարքի կողմից ապօրինի կերպով թույլատրելու մասին:

Իմ կողմից ես առավել նպատակահարմար գտնելով, գրագրության փոխարեն, որը բավարար արդյունքների չհանգեցրեց, կառավարության հայացքների անձնական պարզաբանումը և Պատրիարքին ներկայացված օրինական պահանջների կատարման անհրաժեշտությունը նրան ներշնչելը, Եվ նկատի առնելով այդ նպատակի համար ավագական վարչության պաշտոնյաներից որևէ մեկին նշանակելու անհրաժեշտությունը, ես կենթադրեի սույն հանձնարարությունը դնել երկարատև պաշտոնական փորձառությամբ հայտնի Ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ՝ գաղտնի խորհրդական Գիրսի վրա, նրան օգնելու համար նշանակելով օտար դավանությունների հոգևոր գործերի դեպարտամենտի կրտսեր աստիճանավորներից մեկին:

Վերևում շարադրված իմ ենթադրությունները ներկայացնելով Ձերդ Կայսերական մեծության բարեհայեցողությանը, դրանք հավանության գտնելու դեպքում ես ամենախոնարհաբար իմ պարտքն եմ համարում թույլտվություն հայցել բաց թողնելու գործուղվող անձանց ճանապարհածախսերը ծածկելու համար գաղտնի խորհրդական Գիրսին 3.000 ռուբլի և նրան օգնող աստիճանավորին 1.000 ռուբլի, սույն ծախսը վերագրելով Կոստանդնուպոլսում Էջմիածնի պատրիարքական գահի փոխանորդության հիմնելու նպատակով կատարված հանգանակումներից գոյացած դրամագլխի տոկոսների հաշվին, որոնք, 1882 թվականի դեկտեմբերի 21-ի բարձրագույն հրամանի հիման վրա, դրված են Ներքին գործերի մինիստրի տրամադրության ներքո՝ Հայ լուսավորչական եկեղեցու կարիքների բավարարման համար:

13 մայիսի 1888 թ.

Ստորագրեց՝ Կոմս Դմիտրի Տոլստոյ:

Ճիշտ է՝ Բաժանմունքի պետ *(ստորագրություն)*:

*(ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրադում. ֆոնդ 821, ցուցակ 138, 1885 թ., գործ № 103, թ. 11—12):*

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

16 մայիսի 1888 թ.

*Սույն թվականի մայիսի 14-ին բարձրագույնս հաստատված՝ Ներքին գործերի պ. մինիստրի ամենահպատակ զեկուցագրի համաձայն գործուղվում է Էջմիածնի Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսի հետ բանակցություններ վարելու համար մինիստրի խորհրդի անդամ՝ գաղտնի խորհրդական Գիրսը, ընդորում նրան օգնություն ցույց տալու համար նշանակվելու է ինձ հանձնված դեպարտամենտի կրտսեր ատենադպիրներից մեկը։*

*Ուստի, մտադրություն ունենալով մատնանշված նպատակի համար նշանակել հիշյալ դեպարտամենտի սեղանավարիչի օգնականի՝ կամեր-յունկերի կոչումով օժտված, տիտղոսավոր խորհրդական իշխան Ուրուսովին, պատիվ ունեմ սույնի համար հայցելու Ձերդ Գայծառափայլության թույլտվությունը։*

Դիրեկտոր (*ստորագրություն*)։

*(ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ Լենինգրադում, ֆոնդ, 821, վավերագիր 138, 1888 թ., գործ № 103, թ. 13)։*

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

18 մայիսի 1888 թ.

№ 13

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Պ. ԳԻՐՍԻՆ

*Թագավոր Կայսրը, ըստ Ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցագրի, սույն ամսի 14-ին բարձրագույնս բարեհաճեց Ձերդ Գերազանցությանը գործուղելու Էջմիածին՝ Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոսին անձամբ պարզաբանելու համար կառավարության հայացքներն այն հարցերի նկատմամբ, որոնք առիթ են տվել կառավարության և Նորին Վեհափառության միջև հակառակությունների, և նրան ներշնչելու համար, որ անհրաժեշտ է իրեն ներկայացված օրինական պահանջները կատարել. ընդ սմին Ձեզ օգնություն ցույց տալու համար նշանակվում է օտար դավանությունների հոգևոր գործերի դեպարտամենտի կրտսեր ատենադպիրներից մեկը և Ձերդ Գերազանցությանը վճարվելու է ճանապարհածախսերը ծածկելու համար 3.000 ռուբլի, և Ձեզ ուղեկցող ատենադպիրին 1.000 ռուբլի, սույն ծախսը վերագրելով այն դրամագլխի %-ի հաշվին, որը գոյացել է Կոստանդնուպոլսում Էջմիածնի պատրիարքական դահի փոխանորդություն հիմնելու նպատակով կատարված հանգանակություններից։*

*Ի կատարումն բարձրագույն այդ կամքի, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Ձերդ Գերազանցությանը մեկնել Էջմիածին, ընդ սմին ամփոփելու-*

յալ, որ օգնության համար Ձեզ առընթեր նշանակված է արքունիքի կամեր-յունկեր, ամբողջապես խորհրդական իշխան Ուրուսովը, և որ այժմ ևեթ կարգադրություններ են արված ռեկտորներին և նշված գումարը Ձերդ Գերազանցությանը հանձնելու մասին:

Ի տեղի ներքին գործերի մինիստրի՝ մինիստրի օգնական Գուզարին:

Դիրեկտոր (ստորագրություն):

(ՍՍՌՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ (Լենինգրադում), ֆոնդ 821, վավերագիր 135, 1888 թ., № 103, թ. 18):

## ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ Պ. ՄԻՆԻՍՏՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԱԿՈՎԻՆ (ՄԻԽԱՅԼՈՎԻՆ) ՈՒՂԱՐԿՎԱԾ՝ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԳԻՐՍԻ ՀՈՒՇԱԳՐԻ ՊԱՏՃԵՆԸ

Փակված ծխական դպրոցները բացվել են Պատրիարքի ցանկությամբ 1888 թվականի կանոնների ճշգրիտ հիման վրա: Դրանց կիրառման ժամանակ թյուրիմացություններ են ծագել Հոգաբարձուի և Պատրիարքի միջև: Դրանք հեշտությամբ կարող են պարզաբանվել սովորական կարգով, որ և խնդրում է Պատրիարքը: Մանրամասնությունները՝ հաշվետվության մեջ: Պատրիարքի բոլոր պահանջները կատարված են: Սրմանյան եպիսկոպոսին Պատրիարքն արտաքսում է Ռուսաստանի սահմաններից: Պատրիարքը խնդրում է գնահատել Ձերդ Պայծառափայլությանը, որ ինքը թեպետ պատրաստ է անհապաղ ձեռնամուխ լինել ճեմարանի և թեմական դպրոցների կանոնադրությունները կազմելուն, բայց միայնակ այժմ այդ անել ի վիճակի չէ, քանզի ճեմարանի և թեմական դպրոցների ուժերը ներկայումս բացակա են: Արձակուրդները վերջանալուն պես անհապաղ ձեռնամուխ կլինի կանոնադրությունները կազմելուն

(Ստորագր.) Գիրս:

## ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԳԻՐՍԻՆ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ

Խիստ շնորհապարտ եմ հեռագրի համար: Վստահ եմ, որ Պատրիարքի կողմից ցանկություն լինելու դեպքում, կառավարությանը աջակցելու Հայոց եկեղեցու բարօրության համար և Ձեր կողմից օժանդակություն ցույց տրվելու պարագայում ծագած բոլոր թյուրիմացությունները կհարթվեն: Նեղություն կրե՛ք Նորին Վեհափառությանը հաղորդել իմ խորին հարգանքը:

Դ. Մակովո

Ճիշտ է՝ Իշխան Մ. Կ. Ս.

29 հունիսի 1888 թ.

(ՍՍՌՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ (Լենինգրադում), ֆոնդ 821, վավերագիր 135, 1888 թ., գործ № 103, թ. 24, 25):

Հ. ԹՈՒՐՇՅԱՆ

# ՀԱԲԵՇ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՎՍՏԱԹԵՈՍԸ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ*

*Ի՞նչ վիճակ ուներ Եվստաթեոսի ժամանակաշրջանի Հայաստանը, այսինքն՝ 14-րդ դարի կեսերին, երբ հաբեշական սուրբն այցելել է Կիլիկիա, այնտեղ ապրել 14 տարի և իր մահկանացուն է կնքել հայոց երկրում։ Այս պարագան կարող է նոր լույս սփռել ինչպես նրա ուղևորության և Կիլիկայում այնքան երկար մնալու շարժառիթների, այնպես էլ մեր պատմության համապատասխան շրջանի վրա։*

*Արևելքից եկած թյուրք-մոնղոլական ցեղերը հեղեղել էին Հայաստանը, ասպատակել ու նվաճել երկիրը։ Հայ քաղաքական, կուլտուրական ու կրոնական կյանքի կենտրոնը տեղափոխվել էր հարավ-արևմուտք, Կիլիկիայի անառիկ լեռնաշխարհը։ Այստեղ կազմակերպվել էր նոր հայ պետականությունը։ Ծովահայաց դիրքը, սերտ շփումները արտաքին աշխարհի հետ, խաչակրաց արշավանքների առնչությամբ ավելի սերտ կապը լատինական Արևմուտքի հետ, այս ամենը իրենց դրոշմն էին դրել կիլիկյան հասարակական կյանքի վրա։ Փոքր Ասիայում կազմակերպված թյուրքական առանձին սուլթանությունները, Եգիպտոսի մամլուկները, Արևելքից անընդհատ առաջ շարժվող թյուրք-մոնղոլական նորանոր ցեղերը իրար հետ ընդհարվելով միշտ՝ քավության նոխազ էին դարձնում տեղական քրիստոնյա բնակչությանը։ Այդ պայմաններում կիլիկյան հայկական թագավորությունը հարկադրված էր ձգտել դեպի Արևմուտք։*

*Մանրամասնությունների մեջ չմտնելով, որոնք մեզ շատ կշեղեն մեր հիմնական հարցից, նկատենք, որ այդ շրջանում լատին և լատինացած շրջանների ընտրյալ թագավորը և նրա թեկնածու, անպայման լատինասեր կաթողիկոսը, որքան էլ միասնաբար ջանք էին թափում եկեղեցական ժողովների գումարմամբ հեղինակություն տալ իրենց վարած քաղաքականությանը, նրանց չէր հաջողվում Հայ եկեղեցին շեղել իր հազարամյա ուղուց, նրան միաձուլել Հռոմեական եկեղեցու հետ։ Հայ եկեղեցու ինքնուրույնությունը և նրա անկախությունը պաշտպանող կիլիկյան կաթողիկոսների մեջ եզակի բացառություն է կազմում Հակոբ Բ Անավարզեցին (1327—1341 և 1355—1359 թ. թ.)։*

*Հակոբ Բ Անավարզեցու առաջին կաթողիկոսության ժամանակ Կիլիկիայում իշխում էր երիտասարդ Լևոն 5-րդը (1329—1342 թ. թ.), Ռուբինյան տան վերջին ներկայացուցիչը։ Սրա օրով եգիպտական մամլուկները հարձակվելով Կիլիկիայի վրա ավերում էին երկիրը։ Մայրաքաղաքից փախած ու լեռներում աստանդական կյանքի դատապարտված թագավորը Հռոմից չստանալով իրեն խոստացված օգնությունը, հարկադրված է լինում հաշտություն կնքել (1337 թ.) թշնամու հետ՝ մամլուկներին զիջելով Այաշ բերդը, ինչպես և պարտավորություն ստանձնելով խզել ամեն տեսակ կապ Հռոմի պապերի հետ։ Սակայն երիտասարդ թագավորը չէր հաշտվում իր նվաստ դրության հետ և նորից ուզում էր Հռոմի օգնությանը դիմել։ Հռոմը առիթից օգտվելով պահանջում էր Հայ եկեղեցու լիակատար միաձուլում Հռոմեական եկեղեցու հետ։ Այս պայմաններում թագավորն աշխատում էր նոր մեծ ժողով գումարել և արմատապես լուծել միաձուլման հարցը։ Հակոբ Անավարզեցին, որը նախքան կաթողիկոս ընտրվելը, մասնակցել էր Հռոմ ուղարկված պատվիրակություններին և իր սեփական աչքով տեսել էր Հռոմի վերաբերմունքը և գիտեր նրա ուժն ու կարողությունը, հակառակում էր թագավորին, վերջինիս առաջարկելով լեզու գտնել իր՝ թեկուզ մահմեդական շրջապատի, անմիջական հարևանների հետ և ոչ թե հույսը դնել հեռավոր Հռոմի վրա։ Այս հակամարտության*

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի № IV—V-ից։*

ընթացքում Հակոբ Անավարզեցին հարկադրված է լինում, նոր ժողովի գումարման նախօրյակին, հրաժարվել կաթողիկոսական աթոռից (1341 թ.), իսկ մեկ տարի հետո մահանում է թագավորը։ Եկեղեցական ժողովը գումարվում է այս անգամ անհամեմատ ավելի բազմամարդ. 1342 թվականին, Սսում։ Նոր կաթողիկոսի՝ Մխիթար Ա Գռներցու օրով կայացած այդ ժողովը, չնայած նոր կաթողիկոսի լատինասիրությանը, կարողացավ պաշտպանել Հայ Եկեղեցու ինքնուրույնությունը։ Հենց միայն այն, որ Մխիթարի մահից (1355 թ.) հետո նորից Կաթողիկոսական Աթոռը գրավում է նույն Հակոբ Անավարզեցին, ապացուցում է Հայաստանյայց Եկեղեցու հաղթանակը կաթոլիկության դեմ։

Ինչպես տեսնում ենք, Հայ Եկեղեցին Եվստաթեոսի Հայաստան կատարած վերջին այցելության տարիներին ապրում էր ներքին ճգնաժամ։ Եկեղեցին, ամբողջությամբ վերցրած, իհարկե, մնում էր հակաքաղկեդոնականության դիրքերում, մնում էր որպես միաբնակության միակ նշանակալից հենարանը։

Սակայն այդ ժամանակ, Եգիպտոսի մամլուկների հաջող նվաճումների պայմաններում, արևելյան մյուս քրիստոնեական եկեղեցիների նկատմամբ Հայ Եկեղեցու գերակշիռ դիրքն ավելի էր շեշտվում Երուսաղեմում, որտեղ Ս. Հակոբա հայկական վանքը և նրա հայ հոգևորականությունը հեռու և զերծ լինելով կիլիկյան քաղաքական ազդեցություններից, զերծ էր նաև լատինասիրական հոսքերից և իր դիրքում գնալով ավելի էր ամրապնդվում ինչպես Եգիպտոսի հայ ստվարացող բնակչության վրա հենվելու, այնպես էլ եգիպտական սուլթանների ցույց տված հովանավորության շնորհիվ, որոնք վարում էին Հայ Եկեղեցին հույներին ու լատիններին հակադրելու քաղաքականությունը։

Միաբնակ դավանանքի հավատարիմ և Հայ Եկեղեցու այնքան երախտապարտ հաբեշ կրոնական գործիչ Եվստաթեոսի դեպի Հայաստան կատարած բոլոր երեք ուղևորությունները էլ զուգադիպում են Հայ Եկեղեցու ներքին միասնության ծվարող այդ պայքարի ժամանակաշրջանին։ Եվ առաջին երկու ուղևորությունների ժամանակ դժգոհ մնաց Եվստաթեոսը։ Երբ վերջին ուղևորության ժամանակ հասնում է Ալեքսանդրիա և իմանում հայոց պատրիարքի[1] վտարված լինելը և Ալեքսանդրիայում գտնվելը, անմիջապես ներկայանում է նրան, նրան ճանաչելու և նրա գործերն իմանալու համար։ Եվստաթեոսի վարքի մեջ այդ առթիվ ասված է. «Եվ դրանից հետո մեր հայր Եվստաթեոսն իմացավ, որ Հայաստանն ունի մի պատրիարք, որ վտարվել է հանուն Քրիստոսի, և որ այդ պատրիարքը ժամանել է Ալեքսանդրիա քաղաքը։ Եվ երբ մեր հայր Եվստաթեոսը լսեց այդ, վեր կացավ, որ գնար նրա մոտ, որ ճանաչեր նրան և իմանար նրա գործերը» (Բ. Տուրաև, նույն տեղում, էջ 333)։

Սակայն վարքագիրը ոչինչ չի ասում, թե ո՞վ էր «հայ պատրիարքը», թե ի՞նչ խոսեցին նրանք իրար հետ։ Նրան, ինչպես նկատել ենք, հետաքրքրում է միայն այն, որ իր սուրբ հաբեշական երկրից դուրս է տեսնեվում ու խոսում է պատրիարքների ու եպիսկոպոսների հետ, տեղական բնակչության միայն ամենահավատացյալ բնույթ ներկայացուցիչների հետ։ Դրսի աշխարհի պատմական իրողությունները նրան հետաքրքրում են միայն այդ տեսանկյունով։ Սակայն իր վարքագրի նման այդքան սահմանափակ մտածողության տեր չէր Եվստաթեոս, որը բազմաթիվ աշակերտներով մեկնել էր իր երկրից, ո՛չ արդեն երրորդ անգամ, և մտադիր էր երկար մնալ արևմտյան երկրում։ Այդ հաբեշ կրոնական մեծ գործչի այդ ուղևորությունները, և մանավանդ երրորդ ուղևորությունը, որևէ էական նպատակ էր հետապնդում, որ նա չմոռացված էր «վտարված հայ պատրիարքի», ուրեմն և Հայ Եկեղեցու ճակատագրով. այդ բանը երևում է թեկուզ նրանից, որ հաբեշ սուրբը իր հարաբերությունները չի խզում «վտարված հայ պատրիարքի» հետ։ Նրա վարքի մեջ այնուհետև մենք կարդում ենք՝ «Ճանապարհին երանելի Եվստաթեոսը հանդիպեց Հայաստանի պատրիարքին։ Նրանք գրկախառնվեցին և Հայաստանի պատրիարքն ասաց նրան. «Ես սուրբ տեղ եմ գնում» (Նույն տեղում, էջ 339), իսկ մի քանի էջ հետո գրում է, որ Եվստաթեոսը նորից հանդիպում է նույն պատրիարքին. «Եվ մեր այս սուրբ Եվստաթեոսը հանդիպեց Հայաստանի պատրիարքին, երբ նա վերադառնում էր ուղևորությունից... «Հա՛յր, ոսկի ու արծաթ չենք ուզում մենք, այլ խնդրում ենք քո օրհնությունը և առաքելական որոշումների գիրն ենք ուզում մենք քեզնից».— գրում է նրան հաբեշական սուրբը (Նույն տեղում, էջ 342)։

Հաբեշական Ամդա-Սիոն թագավորի մահվան թվով որոշ է Հայաստան կատարած

1. Եվստաթեոսի վարքագիրը կաթողիկոս անունը չի գործածում, այնպես որ պատրիարք կարդալով պետք է հասկանալ կաթողիկոս։

նրա վերջին ուղևորության ստույգ տարին։ Դա եղել է 1344 թվականին։ Այդ ժամանակ Հակոբ Անավարզեցի կաթողիկոսը իրոք «վտարված էր», և, ինչպես նկատեցինք, կարող էր գտնվել Ալեքսանդրիայում։ Հաբեշ սուրբը նրան է հանդիպել Ալեքսանդրիայում։ Վարքի մեջ հիշատակված մյուս հանդիպումները էլ նրա հետ է ունեցել։ Երուսաղեմի հայկական պատրիարքը, եթե այդ շրջանում այցելած լիներ Ալեքսանդրիա, «վտարված» չէր կարող կոչվել։ Մխիթար Գռներցի կաթողիկոսը (1341—1355 թ. թ.) այդ թվականներին Ալեքսանդրիա չէր կարող գնացած լինել. նա Ալեքսանդրիա հաշտության պատվիրակ էր ուղարկել Հայոց թագավորի կողմից բավական առաջ՝ 1335 թվականին։ Նա նույնպես չէր կարող կրել «վտարված» անունը։ Եվ, վերջապես, նրան, լատինասիրության ուղին բռնած այդ կաթողիկոսին չէր, որ որոնում էր միաբանության մեջ անհողդողդ Հաբեշ սուրբը։ Պարզ է, որ նրա փնտրածը Հակոբ Անավարզեցին էր, որը լատիններից հուսախաբ, հաստատ կանգնել էր Հայկական Եկեղեցու ինքնուրույնության տեսակետի վրա։ Հակոբ Անավարզեցին էր, որ կարող էր «առաքելական որոշումների գիրք» հաղորդել Հաբեշ սուրբին։ Եվրոպա տեսած և կրոնական վեճերի ու տարաձայնություններին լավ իրազեկ Հակոբ Անավարզեցին ուսանելի շատ բան կարող էր ասել Հաբեշական Եկեղեցու առաքյալին, նրան իրազեկ դարձնել իր ժամանակի դավանաբանական պայքարին։

Եվստաթեոսը խիստ շահագրգռված էր Հայ Եկեղեցու արևելյան քրիստոնեական եկեղեցիների մեջ առաջատարի ճակատագրով և չէր կարող անտարբեր մնալ կրոնական այդ վճռական գոյամարտի օրերին։ Ալեքսանդրիա և Երուսաղեմ հասնելով և այդ վայրերում ճանաչելով «վտարված» Հայ պատրիարքին, իմանալով նրա գործերը, «առաքելական որոշումների գիրքը», Եվստաթեոսը շտապում է Կիլիկիա՝ «Արմենների երկիրը», որտեղ ամենից ավելի սուր կերպով էր մղվում այդ պայքարը, որտեղ շարունակ գումարվում էին եկեղեցական ժողովներ և որտեղ պետք է վճռվեր միաբնակ եկեղեցու ճակատագիրը։

Հայաստան տանող ճանապարհը հեշտ չէր մանավանդ այն դարերում։ Եվստաթեոսը շատ նեղություններ է կրում այդ ճանապարհին. հյուծվում է և աշակերտները վախենում են, որ նա չի դիմանա և տեղ չի հասնի։ Նրանք իրենց ուսուցչից խնդրում են խնայել իր անձը և ուղղակի ասում են. «Դու կմեռնես հանկարծ, չհասնելով այնտեղ, որտեղ մտադրվել ես (գնալ)»։ Սակայն այնտեղ բորբոքվել էր դավանաբանական վճռական պայքարը, այնտեղ որոշվում էր Եվստաթեոսի համար նվիրական Հայ Եկեղեցու ճակատագիրը, և նա այնտեղ էր շտապում ո՛չ թե հասարակ այցելության համար, այլ նույնպես նվիրական առաքելությամբ։ Եվ նա իր աշակերտներին հաստատ ու կտրուկ պատասխանում է. «Մի՛ տխրեք և մի՛ վշտանաք, ի՛մ զավակներ, որովհետև ես չեմ մեռնի այնտեղ չհասած, որտեղ մտադրվել եմ գնալ, քանզի իմ կամքովը չէ, որ գնում եմ այնտեղ։ Ես այնտեղ եմ գնում Աստուծու կամքով և ինձ ուղարկված օրհնությամբ» ...Եվ նա վեր կացավ այդտեղից և գնաց Հայաստան երկիրը, որտեղ կար առաքյալների օրենքի համար «վտարված» պատրիարքը (Տուրաև, էջ 336)։

Եվստաթեոսը վերջին անգամ Կիլիկիա է ժամանում 1344 թվականին, այնտեղ մնում է 14 տարի և 1358 թվականին, այսինքն Հակոբ Անավարզեցու՝ «վտարված պատրիարքի» կրկին անգամ (1355—1359 թ. թ.) Կաթողիկոսական Աթոռ բարձրանալուց հետո իր մահկանացուն կնքում է Հայկական Կիլիկիայում։ Հակոբ Անավարզեցու կրկին անգամ Կաթողիկոսական Աթոռ բարձրանալով Եվստաթեոսի դավանած միաբնակությունը լիակատար հաղթանակ էր տարել և նա մահվան մահճում իր շուրջը բոլորած աշակերտներին պատվիրելով վերադառնալ Հաբեշստան ասում է նրանց. «Եվ այժմ վերադարձեք և Եթովպիայի մարդկանց, թագավորներին, մակվաններին ու մասաֆեններին[1], վանահայրերին, քահանաներին ու դպիրներին, վանականներին, ուղղափառ մարդկանց ու կանանց ավետեցեք, որպեսզի նրանք ուրախանան և միասին փառաբանեն Աստուծո անունը... Եվ աշակերտները դուրս եկան Հայոց երկրից ու ժամանեցին Ալեքսանդրիա և ավետեցին այնտեղ՝ եգիպտական պատրիարքներին ու եպիսկոպոսներին և այդտեղից դուրս գալով վերադարձան Եթովպական երկիրը և բոլոր աշակերտներին ու նրանց հովիվ Աբբա Աբսադին պատմեցին... որ Ալեքսանդրիայի ու Հայաստանի Սինոդոսի տեքստը նույնական է Եթովպական երկրի Սինոդոսի տեքստի հետ» (Տուրաև, նույն տեղում, էջ 351)։

Եվստաթեոսի կյանքն ու գործունեությունը, նրա սուրբ կենսագրությունը ապացուցելով հանդերձ Հայ-Հաբեշական սերտ հարաբերությունների առկայությունը մեր պատմության կիլիկյան շրջանում, ցույց են տալիս նաև այն վճռական ազդեցությունը, որ Հայ Եկեղեցին թողել է Հաբեշական Եկեղեցու վերանորոգման վրա։ Զառա-Հակոբ նեգուսը մնալով իր կրոնական բարեփո-

1. Իշխանավորներին։

խությունները, որոնք վերջնականապես սրացեցին հաբեշական քրիստոնեության դեմքը, հենված էր Եվստաթեոսի ուսմունքի վրա, իսկ Եվստաթեոսի ուսմունքի հիմքը, ինչպես մենք տեսանք, Հայ միաբնակ եկեղեցին էր, որն այդ շրջանում արևելյան բոլոր քրիստոնեական եկեղեցիների առաջատար ջոկատն էր թե՛ իր կուռ կազմակերպությամբ, թե՛ իր ազդեցիկ վանքերով, թե՛ իր սրբազն վարդապետությամբ, որ հակադրված էր հարձակման անցնող կաթոլիկությանը, և պաշտպանում ինչպես իր ինքնուրույնությունը, այնպես էլ իրեն հարող մյուս միաբնակ եկեղեցիների ինքնուրույնությունը։ Եվստաթեոսը չխուսափեց իր համար այնքան մոտիկ ընդունելով Հայ Եկեղեցու գոյամարտը լատինականության դեմ. որովհետև հետագայում, երկու-երեք դար անց, երբ այդ գոյամարտը հասավ նաև նրա հայրենիքը՝ Հաբեշստան, Եվստաթեոսին արդեն վաղօրոք հաջողվել էր գաղափարական ամուր հենակետ ստեղծել, որ Հաբեշ Եկեղեցին նույնպես հաղթող դուրս գար այդ պայքարից։ Եվ եթե մինչև այժմ էլ Հայ Եկեղեցին առանձնահատուկ նվիրականություն ունի հաբեշների համար, ապա դրա արմատները պետք է ամենից առաջ որոնել այն դարավոր անշահախնդիր հարաբերությունների մեջ, որոնք կարող էին սկսված լինել Երուսաղեմի հայկական վանքի հյուրընկալ պարիսպների ներսը ու դարեր շարունակ ամրապնդվել ուխտավորների կենդանի կապով. որոնք կարող էին գալ տեսնել Հաբեշստանի հայկակա՛ն Հայր վանքում, բայց որոնք իրենց զարգացման գագաթնակետին հասան Եվստաթեոսի օրոք, Եվստաթեոսի ջանքերով և Հայ Եկեղեցուց Եվստաթեոսի ստացած հզոր օգնությամբ, որ Հաբեշական Եկեղեցու բարեփոխության դեմքը կազմեց։

Եվստաթեոսը, սակայն, եղակի է որպես դեմք. որպես հայ-հաբեշական հարաբերությունները մի նոր բարձրության վրա դնող կրոնական մեծ գործիչ, բայց ոչ որպես միակը այդ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործում։ Հայը դեռ 7-րդ, 8-րդ դարերում հասել էր այդ հեռավոր երկիրը, այնտեղ կառուցել իր վանքը. Հաբեշը ամեն տարի ուխտի էր գալիս Երուսաղեմ ու պատսպարվում Ս. Հակոբա հայկական հյուրընկալ վանքում։ Ասպնջականության օրենքը, որ բնորոշ է այդ հեռավոր դարերի համար, փոխադարձաբար սերտ կապերի հաստատման հիմքն էր։ Խաչակրաց արշավանքների շրջանում, երբ հայի ձեռքով առաջին անգամ փորձեր կատարվեցին Հաբեշստանը քրիստոնեական ու մուսուլմանական աշխարհի ընդհարման մեջ ներգրավելու, այդ կապերը, որոնք կրոնական և առևտրական էին մինչ այդ, ասպնջականությամբ շաղկապված, քաղաքական երանգ ստացան։ Եվ հայ-հաբեշական հարաբերությունների այդ նոր բնույթը իր անդրադարձումն է գտել Եվստաթեոսի վարքի մեջ։ Եվստաթեոսը Կիլիկիա ափ իջնելով ո՛չ միայն հանդիպում է այնտեղ բնակվող հաբեշ Գաբրա-Կրեստոսին, որի որդին՝ Թաամանի Բաեկգեեն և թոռը՝ Բերխանա-Մասկալը շարունակում են ապրել ու գործել Հայաստանում, այն էլ, ինչպես պետք է եզրակացնել, զինվորական ծառայություն կատարելով. այլև փրկում է մի հայ մեծավորի որդու կյանքը, իսկ այդ պատանին վարձահատույց լինելու համար գնում է Հաբեշստան, ապրում այնտեղ մինչև իր մահը, շրջագայում հաբեշական երկիրը, պատմում Եվստաթեոսի մասին և վախճանվում այնտեղ։

Հաբեշ վարքագիրը գիտե կիլիկյան հայերի սերտ, անգամ ամուսնական կապերը լատինների հետ։ Իր սրբին վերագրված 5-րդ հրաշքը, ըստ վարքագրի, պատմել է մի Ֆրանկ, որի մայրը հայուհի էր եղել։

Նեղոս գետի ընթացքը շուռ տալու սպառնալիքով Եգիպտոսին ահաբեկելու երկրորդ փորձը կատարել է Եվստաթեոսի ժամանակակից հաբեշական Ամդա-Սիոն թագավորը (1314—1344 թ. թ.) այն շրջանում, երբ Եգիպտոսի Նասր-Մուհամեդ սուլթանը արշավում էր Կիլիկյան Հայաստանի վրա։ Այստեղ բնորոշ և ուշագրավ է այն, որ Ամդա-Սիոնը թեև համառ պայքար էր մղում մուսուլմանների դեմ, սակայն այդ մուսուլմանները տեղական մուսուլմաններ էին. իր մոտիկ շրջապատի և իր սեփական հողերի մուսուլմանները։ Եգիպտացիներն այդ ժամանակ զբաղված էին փոքրասիական նվաճումներով. Նրանց ուշադրությունը կլանված էր միջերկրական ծովի այդ հարուստ ափերի գրավումով և նրանք գործ չունեին հարավի աղքատացած ու վայրենացած երկրների հետ։ Ի՞նչն էր նրան ստիպում սպառնալիք կարդալու մի հզոր սուլթանի, որն այդ շըրջանում անմիջականորեն չէր սպառնում նրա երկրին։ Համարձակ մտքեր են պաշարում մեզ. արդյոք սա հայ-հաբեշական քաղաքական հարաբերությունների վերջին արձագանքը չէ՞ր հաբեշների կողմից՝ օգնություն ցույց տալ դավանակից Կիլիկիային, որի հողերն ամայացնում էին եգիպտական սուլթանի զորքերը։ Արդյոք Գաբրա-Կրեստոսը, Թաամանի Բաեկգեեն, Բերխանա-Մասկալը, Կիպրոսի հաբեշները հաբեշ խաչակիրների վերջին բեկորները չէի՞ն, որոնց խաչակրաց գործի անհաջողություններից հետո ապաս

տանել էին Հայաստան և շարունակում էին ծառայել կիլիկյան թագավորներին։

Դժվար է ավելի համարձակ լինել, քան մենք թույլ տվինք մեզ, որովհետև պատմությունը համապատասխան վկայություններ և ակնարկներ չի թողել մեզ, սակայն պատմական իրադարձությունների ընթացքը և տրամաբանությունը մեզ հարկադրում են կռահել, որ երկու դավանակից երկրները, այդ դարերում, երբ դավանանքը շատ զորեղ «գործոն» էր, կարող էին, չնայած նրանց բաժանող մեծ հեռավորությանը, և Եգիպտոսի նման անջրպետին, քաղաքական ընդհանուր թշնամի ունենալու դեպքում, եղբայրության ձեռք մեկնել իրար։

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱԲԵՇԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ Ս. ԽՎԱՍՏԱԹԵՈՍԻ ՎԱՐՔԻՑ ԵՎ ՀՐԱՇՔՆԵՐԻՑ

Հաբեշ նշանավոր կրոնական գործիչ Խվաստաթեոսի վարքը պահպանվել է հինգ վարիանտով, որոնցից առաջին երկուսը իրարից համարյա չեն տարբերվում, իսկ վերջին երեքը, մի փոքր տարբերվելով առաջին երկուսից, իրար նման են։ Լոնդոնի Բրիտանական թանգարանում «Orient», №№ 702, 703, 704, 705 համարներով պահպանվում են այդ վարքի 4-րդ վարիանտները։ Իսկ հինգերորդ վարիանտը գտնվում է Վատիկանի ձեռագրատանը։ Պրոֆ. Բ. Տուրաևը մանրամասն ուսումնասիրել է Լոնդոնի վարիանտները և Իտալացի պրոֆ. Գվիդիի միջոցով ծանոթացել Վատիկանի վարիանտի հետ։ Գիտական լուրջ ընտրություն կատարելով նա հանգ է առել Լոնդոնի «Orient» №№ 704, 705 համանման վարիանտների վրա, որոնցից կատարել է իր ռուսերեն թարգմանությունը։ Բ. Տուրաևը հիշյալ աշխատության մեջ առանձին գլուխ է նվիրել Խվաստաթեոսի վարքի ուսումնասիրությանը, որտեղ ասում է.

«Խվաստաթեոսի բոլոր ընդարձակ վարքերը գրական տեսակետից առավել կամ պակաս չափով աչքի են ընկնում ճարտասանական, ներբողական, հաճախ բանաստեղծական շեղումներով, երկար ճառերով և աստվածաշնչից բերված քաղվածքների առատությամբ։ Հեղինակները Ս. Գիրքը հասկանում են լայն, եթովպական իմաստով, խտրություն չդնելով կանոնական գրքերի, պարականոնների և կեղծ բնագրերի միջև։ Մենք աջ ու ձախ հանդիպում ենք Եզրասի գրքի, Ենովքի գրքի, առաքելական որոշումների վկայաբերումների։ Այս վարքերի համար բնորոշ է պարականոնության լայն ազդեցությունը (էջ 157)։

Մանրամասն լուսաբանելով շատ հարցեր, վարքում բազմիցս հիշատակված «Հայաստան» («արմենների երկիր») անվան կապակցությամբ պրոֆ. Բ. Տուրաևը գրում է.

«Մեր վարքի «Հայաստանը», իհարկե, Կիլիկիան է, այսպես կոչված Սիսվանը, Ռուբինյանների թագավորությունը և Սսո կաթողիկոսների պատրիարքությունը։ Վերջինները, ճիշտ է, միության մեջ էին գտնվում Հռոմի հետ, սակայն հայկական լատինասիրությունը և Մեծ Հայաստանի հետ եղած կապերը պայմանավորում էին այն, որ մոնոֆիզիտական Հաբեշստանի և Եգիպտոսի հետ հարաբերությունները, գլխավորապես Երուսաղեմի վրայով, այնուամենայնիվ, պահպանվում էին թեկուզ և աշխարհիկ մարդկանց կողմից։ Հաբեշները Տիրոջ գերեզմանի մոտ հանդիպելով դավանակից հայերին նրանցից իմանում էին Կիլիկիայի հայկական մեծ ու պանծալի թագավորության, արևելյան հայերի, հին քրիստոնեության այդ մարդերի սրբավայրերի մասին։ Եթովպացիները պարտքի տակ չէին մնում և նկարագրում էին իրենց թագավորությունը՝ իր անապատներով ու վանքերով։ Այսպիսով տեղի էին ունենում ուխտագնացություններ, ճիշտ այնպես, որի մասին պատմվում է, օրինակ, Խվաստաթեոսի 12-րդ հրաշքի մեջ։ Դրանով, ես կարծում եմ, պետք է բացատրել այն, որ հայերը հաճախակի երևան են գալիս Հաբեշստանում, կյանքի տարբեր ասպարեզներում։ Թերևս հենց այստեղ էլ պետք է որոնել բացատրությունը Խվաստաթեոսի թաղման վայրի վերաբերյալ մեզ համար առայժմ անհասկանալի տեղեկության։ Որտե՞ղ են թաղվել պարսիկ Մարտիրոս Մար Բեխնամայի կամ եթովպական տառադարձությամբ Մար-Մեխնամայի նշխարները։ Ինձ անհայտ է, բայց հազիվ թե դրանք գտնվեին Կիլիկիայում. եթե այդ իշխանները թաղված են Միջագետքում կամ Մեծ Հայքում, ապա ավանդությունը կարող է բացատրվել բանավոր յուրացված տեղեկությունների շփոթմամբ։ Պետք է նշել նաև Խվաստաթեոսի 5-րդ հրաշքի բնորոշ հաղորդագրությունը Ֆրանկի մասին, որի մայրը հայուհի է եղել։ Կիլիկյան հայերի և լատինների ամուսնական կապերը փաստ են, որի վրա քանիցս ուշադրություն են դարձրել պատմաբանները»։

(Շարունակելի)



# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՕՐՅԱԿԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 1-ից Սովետական Միության մայրաքաղաք Մոսկվայում բացվեց Հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը։ Սովետական Հայաստանի արվեստագետները՝ գրողները, նկարիչները, քանդակագործները, երաժշտագետները, դերասանները, երաժիշտ-կատարողները, ժողովրդական ստեղծագործության ինքնուս վարպետները Մոսկվայում ցուցադրեցին հայ արվեստի ու գրականության ասպարեզում ձեռք բերած իրենց նվաճումները։ Մոսկվայի հետ միասին մամուլի և ռադիոյի միջոցով հայկական արվեստի ու գրականության նորություններին ու հաջողություններին ծանոթացան Սովետական Միության ժողովուրդները, ինչպես և Սփյուռքի ողջ հայությունը։

Տասնօրյակի ընթացքում սովետահայ գրականության ու արվեստի նոր ստեղծագործությունների հետ միասին հասարակությանը ներկայացվեցին անցյալի հայկական գրականության ու արվեստի հիասքանչ հու-



Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը

շարժանները, ճարտարապետական կոթողների ու շինարարական մեծ արվեստը։

Հունիսի 2-ին Միությունների Տան սյունազարդ դահլիճում կայացավ գրական երեկո։ Հայ գրականության մասին զեկուցեց Հ. Խ. Մարգարյանը։ Ելույթ ունեցան նաև բանաստեղծներ ու գրողներ Ն. Զարյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Քոչարը, Մ. Մարգարյանը, Հ. Հովհաննիսյանը, Հ. Սահյանը, Գ. Սարյանը, Հ. Շիրազը, Գ. Էմինը։ Հայ բանաստեղծների թարգմանություններ կարդացին Վ. Զվյագինցևան, Մ. Մաքսիմովը, Վ. Տուշնովան, Տ. Սպենդիարովան։

ման ենթարկվեցին Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Աղավնու «Շիրակ», Ս. Ալաջաջյանի «Անապատում», Ս. Խանզադյանի «Հողը», Ա. Սահինյանի «Ծարավ» վեպերը։

Հունիսի 8-ին ՍՍՌՄ Սովետական գրողների միությունում քննարկվեց Սովետահայ դրամատուրգիան։ Սովետահայ դրամատուրգիայի ներկա վիճակի մասին զեկուցեց Գ. Տեր-Գրիգորյանը։ Քննարկվեցին Ն. Զարյանի «Փորձաքար», Գ. Տեր-Գրիգորյանի «Սոֆիկի սխալը», Մ. Քոչարյանի «Ինչ ցանես, այն կհնձես», Ա. Պապայանի «Խանդից պատուհաս» կոմեդիաները, Հ. Քոչարի «Հյուսիսային ծիածան» կինոսցենարը, Մ. Օվչիննիկովի «Վտարանդիներ» և «Շրջադարձ» պիեսները։



Հայկական ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլը

Հունիսի 4—5-ը ՍՍՌՄ Գրողների միությունում վիճաբանություն սկսվեց հայկական բանաստեղծության երկերի շուրջը։ Ներածական խոսք ասաց Ս. Կապուտիկյանը։ Քննարկվեցին Վ. Դավթյանի, Ա. Դարբնու, Վ. Կարենցի, Մ. Մարգարյանի, Հ. Հովհաննիսյանի, Հ. Սահյանի, Ս. Սարմենի, Պ. Սևակի, Ս. Տարոնցու և Հ. Շիրազի ստեղծագործությունները։

Հունիսի 6—7-ը տեղի ունեցավ սովետահայ արձակագիրների ստեղծագործությունների քննարկումը։ Ներածական խոսքով հանդես եկավ Ս. Աղաբաբյանը։ Քննարկ-

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտում տեղի ունեցավ Հայաստանի գրականագետների և քննադատների աշխատությունների քննարկումը։

Հունիսի 6-ին ՍՍՌՄ Պետական գրադարանում բացվեց Հայկական գրքի ցուցահանդես՝ 2.000-ից ավելի ցուցանմուշներով։ Ցուցահանդեսի առաջին բաժնում ցուցադրվեցին ձեռագիր մատյաններ, Մեսրոպ Մաշ-

տաղի գիմանկարը, Թորոս Ռոսլինի և Թորոս Տարոնացու մանրանկարներից։ Երկրորդ բաժնում ցուցադրվեցին հայկական առաջին տպագիր գրքերը՝ 1512 թվականին Հակոբ Մեղապարտի ձեռքով Վենետիկում տպագրված «Պարզատումար»-ը, այնուհետև տարբեր ժամանակներում Հռոմում, Ամստերդամում, Էջմիածնում և այլուր լույս տեսած հնատիպ գրքերը։ Երրորդ բաժնում ցուցադրվեցին 19-րդ դարից սկսած հայկական տպագրության արդյունքները մինչև մեր օրերը։

Տասնօրյակում մեծ ընդունելության արժանացավ վերածնված հայ ժողովրդի արվեստը։ Հուլիսի 1-ին Մոսկվայի լավագույն թատրոնների ու համերգային դահլիճների բեմերում հանդես եկան Հայաստանի ստեղծագործական անձնակազմերը, երաժշտական միավորումներն ու անհատ կատարողները։



Հայկական պետական Երգեցիկ խումբը

Առանձնապես հաջող էին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի ներկայացումները՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» և «Դավիթ բեկ», Տիգրան Չուխաջյանի «Արշակ Երկրորդ» և Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերաները։

Տասնօրյակում մեծ հաջողություն ունեցան Հայաստանի դրամատիկական թատրոնների ներկայացումները։

Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնը ներկայացրեց Վ. Փափազյանի «Ժայռ»-ը, Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»-ը, Շեքսպիրի «Օթելլո»-ն, Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները», Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ»-ը, Ա. Շիրվանզադեի «Նամուս»-ը։

Հաջողությամբ անցան նաև Լենինականի Ա. Մռավյանի անվան հայկական պետական դրամատիկ թատրոնի ներկայացրած Ն. Զարյանի «Փարձագուշտ»-ը, Երևանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկ թատրոնի ներկայացրած Ա. Շիրվանզադեի «Պատվի համար» ներկայացումները։

Մոսկվայի երաժշտասեր հասարակությունը գոհունակությամբ ընդունեց սովետահայ երաժշտագետների նոր ստեղծագործությունները, որոնք կատարվեցին սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և անհատ կատարողների կողմից։ Հունիսի 1-ին Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայկական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի համերգը։ Մեծ հաջողությամբ անցան նաև Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի, Հայկական ֆիլհարմոնիայի մենակատարների և հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհիներ Տաթևիկ Սազանդարյանի և Գոհար Գասպարյանի համերգները։

Արտակարգ ընդունելության արժանացան Հայկական ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլի և Հայկական պետական երգչախմբի համերգները։ Հանճարեղ Կոմիտասն ու Կարա-Մուրզան Մոսկվայի ունկնդիրներին հասկանալի դարձան Հայկական պետական երգչախմբի կատարողական բարձր արվեստի շնորհիվ։

Տասնօրյակում հաջողությամբ ելույթներ ունեցան նաև Հայկական ռադիոյի ժողո-

*վրդական գործիչների վաստակավոր անսամբլը և Սայաթ-Նովայի անվան գուսանական երգի անսամբլը։*

*Տասնօրյակին փայլուն հաջողություն ունեցան հայկական նկարչությունը, քանդակագործությունը, դեկորատիվ արվեստը և ճարտարապետությունը։*

*Հունիսի 8-ին ՍՍՌՄ Գեղարվեստի ակադեմիայի սրահներում բացվեց Հայկական ՍՍՌ կերպարվեստի ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին 160 վարպետների գործեր։ Բոլորի ուշադրությունը գրավում էին Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Մ. Ս. Սարյանի դիմանկարներն ու պեյզաժները։ Ցուցահանդեսում ուշագրավ էին նաև հայկական բնաշխարհը պատկերող Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Գ. Մ. Գյուրջյանի մի շարք պեյզաժները։*

*Հունիսի 13-ին ՍՍՌՄ պետական ակադեմիական մեծ թատրոնում տեղի ունեցավ տասնօրյակի եզրափակիչ համերգը, որը մի իսկական հաղթանակ էր։ Համերգին ներկա էին Սովետական կառավարության ղեկավարները։ Համերգում հանդես եկան ստեղծագործական խմբերը և անհատ կատարողները։*

*Եզրափակիչ համերգը ցուցադրեց Հայաստանի նոր մշակույթի աճն ու հաջողությունները, որոնք ձեռք են բերվել Սովետական իշխանության օրով։*

*Հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը ցույց տվեց, որ Սովետական Հայաստանում արվեստի ու գրականության բոլոր բնագավառներում ձեռք են բերված փայլուն հաջողություններ։*

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

## Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՌՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ 1850—1870 Թ. Թ.»

(Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1956 թ., 450 էջ)

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել պրոֆ.-դոկտ. Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թ. թ.» ծավալուն ուսումնասիրությունը, [illegible]

[illegible]

պետ գյուղացիությունը։ Ազատագրական շարժման գլխավոր ուժերը հանդիսացել են գյուղացիական զանգվածները։ Նրանք հանդես են եկել թե՛ ազգային, թե՛ սոցիալական ճնշումների ու կեղեքումների դեմ։ Գյուղացիության և ընդհանրապես ժողովրդական զանգվածների պայքարը եղել է հետևողական։ ... Ազատագրական այս պայքարն առաջ էր քաշում նաև հողի, ծանր հարկերի և գյուղացիությանը հուզող նման սոցիալական այլ հարցեր (տե՛ս աշխատության 24-րդ էջը)։

Աշխատության առաջին գլուխը վերնագրված է «Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը 1850—1870-ական թվականներին»։ Այս գլխում փաստական հարուստ նյութերով ու վիճակագրական ստուգված տվյալներով հանգամանորեն քննվում է ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանում բնակվող հայ ժողովրդի ներքին տնտեսական կյանքի վիճակը, տնտեսական-քաղաքական տեղաշարժերը, հատկապես Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելու պատմական ակտից հետո։

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 1850—1860-ական թվականներին», հանդես են բերվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կոնկրետ իրադարձությունները։ Այստեղ հեղինակն իր ուշադրությունը բևեռել է գլխավորապես Զեյթունի 1862 թվականի գյուղացիական ապստամբության վրա, որը հանդիսանում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենափառահեղ էջերից մեկը։ Հեղինակը նախքան Զեյթունի ապստամբության հանգամանքների ու պայմանները բնութագրելը համառոտակի ներկայացնում է Զեյթունի անցյալը, նրա աշխարհագրական-տնտեսական դիրքը, ազգաբնակչության վիճակն ու պայմանները և այլն։

Գյուղացիական ապստամբությունների ու ելույթների հետ մեկտեղ հեղինակը քննում է նաև հայ ժողովրդի ազատագրության համար ծավալված գաղտնի խմբակների և դրանց ղեկավար քաղաքական գործիչների գործունեությունը։ Հեղինակն անդրադարձել է նաև 1828—1829 թվականների ռուս-թուրքական պատերազմի շրջանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի իրադարձություններին։

«Ազատագրական շարժումները 1870-ական թվականներին» գլխում հեղինակը քննում է 1878 թվականին սուլթանական տիրապետության դեմ բարձրացված Զեյթունի երկրորդ խոշոր ապստամբությունը և նրա արձագանքներն ամբողջ Հայաստանում։ Այստեղ պատմական նորահայտ փաստաթղթերի հիման վրա լուսաբանվում է 1881 թվականին Կարինում հիմնված «Պաշտպան հայրենյաց» անունը կրող գաղտնի կազմակերպության գործունեությունը։ Նույն այս գլխում հեղինակն անդրադառնում է 1877—1878 թվականների ռուս-թյուրքական պատերազմի շրջանում աշխուժացած հայ ժողովրդի ազատագրական պայքարի իրադարձություններին։

«Ազատագրական շարժման գաղափարախոսությունը» գլխում հեղինակը գիտականորեն վերլուծում է ազգային-ազատագրական պայքարի մեջ հասարակական տարբեր խավերի ու խմբավորումների ըմբռնումները, դիրքն ու վերաբերմունքը։ «Ազատագրական շարժման հոսանքներն ու կապերը» գլխում հեղինակը պարզաբանում է ազգային-ազատագրական շարժումների մեջ գտնվող հոսանքների վերաբերմունքի և գործելակերպի արմատական տարբերությունները, ինչպես նաև 1850—1870-ական թվականների ազատագրական շարժման կապերն ու ազդեցությունները։ Հեղինակն այստեղ ամենից առաջ ընդգծում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների կապը ռուսական ազատագրական շարժման, ինչպես և կովկասյան ու մի շարք այլ ժողովուրդների ազատագրական պայքարի հետ։

«Հայ ժողովրդի ազատագրական պայքարը և արևմտյան պետությունները» գլխում հեղինակը պատմական բազմակողմանի և հարուստ փաստերով ցուցադրել է արևմտյան մի շարք պետությունների խաղացած վատթար դերը հայ ժողովրդի ազատագրական շարժման ընթացքում, մասնավորապես հայկական հարցի արծարծման ու քննարկման գործում։

Աշխատության վերջին գլխում, որը կրում է «Ազատագրական շարժման ռուսական օրիենտացիան» վերնագիրը, վերարտադրված է ռուս ժողովրդի և ռուսական օրիենտացիայի ունեցած խոշոր դրական դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական հերոսական պայքարի մեջ։

Պրոֆ. Մ. Ներսիսյանի աշխատության վերջում տրված է հավելված, որտեղ մեջբերված են մի շարք արխիվային նորահայտ փաստաթղթերի պատճեններ։ Գիրքն ունի նաև օգտագործված գրականության և նյութերի մատենագիտական ընդարձակ ցուցակ, անձնանունների և տեղանունների ցանկ։

Պրոֆ. Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրք բռնապետության դեմ» աշխատությունը արժեքավոր և օգտակար մի աշխատանք է, որը գիտականորեն ներկայացնում է հայ ժողովրդի բազմադարյան պատմության ազգային-ազատագրական պայքարի մի շրջանի պատկերը։

Վ. Վ.